


ANAHIT, REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆԳԻՍ

ԱԶԳ. ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ 1911 ՅՈՒՆԻՍ - ՅՊՈՍՏՈՍ. ԹԻՒ 7-8

ՓԱՐԻԶ

DIRECTEUR : A. TCHOBANIAN .

Բ ՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

« Չէթըրթըն » , տառ երեքք արարուածով	ԱԼՖՐԷՏ ՏԸ ՎԻՆԵԻ	145
« Նոր Քնար » , Ոսկիամայր դիցուհին , Ճերմակ տօնը , Օրս , Որքան զգաստ , Արիւնդտ իրկուէն .	ԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	173
« Սամանց Տուն » — Հայ ժողովրդական զէպի մասին կարգ մը ծանօթութիւններ .	ՏԻԳՐԱՆ ՉԻԹՈՒՆԻ	174
Ոորէն Նարպէի անտիպ տաղեր , (Շար. եւ վերջ)		184
Կախարդական գրականութենէ էջ մը .		185
Գ. Փրօֆֆ. Գալֆանան .	ՀԱՆՐԻ ՖԷՍՔՈՒՐ	186
Մեռած աստուածներուն .	ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ	188
Քրօնիկ .	Ա. ՉՊԱՆԵԱՆ	193

ԱՆԱՀԻՏԻ յառաջիկայ թիւով, որ քիչ օրէն լոյս կը տեսնէ՝ պիտի հրատարակենք մեր մեանուն աշխատակից՝ հարսարպայի Ք. ԹՕՐԱՄԱՆԵԱՆԻ մեկ նոր եւ կարեւոր ուսումնասիրութիւնը՝ Հայ հարսարպայեան մասին :

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱՉԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՍԿՋԲԻՑ ՄԻՆՉԵԻ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Ստուար գիրք մը՝ մօտ 1000 էջով, տեսակին մէջ ցարդ երեւցած լաւագոյն աշխատութիւնը:
Գին 1 ըբ. 50 կոպ.

Դիմել՝ Librairie Gouttemberg, Tiflis, Caucase.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ն Ա Հ Ի Տ Ի

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Բաժանորդագրութիւնը պէտք է ԿԱՆԵԻԿ վճարել .

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Ե Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ. 1911

ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

ԹԻԻ 7-8

Չ Է Թ Ը Բ Թ Ը Ն¹⁾

(ՏՈՒՄ ԵՐԵՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ)

ՀԵՂԻՆՍԿ՝ ԱԼՖՐԵՏ ՏԸ ՎԻՆԵԻ
ԱՆՁԻՆՔ

Չեքրորըն

Քուէյրը մը

Քիթթի Պէյ

Ճօն Պէյ

Լորս Պեֆֆորս (Լոնտոնի քաղաքապետ)

Լորս Թեքլոս

Լորս Լաուզորսկոյ

Լորս Քիկկիսրըն

Կրում 2) մը

Բանուոր մը

Ռաշէլ, Քիթթի Պէյի աղջիկը, վեց տարեկան

իր եղբայրը, չորս տարեկան

Երեք գեռատի լորտեր

Ճօն Պէյի գործարանէն չորս բանուոր

Քաղաքապետին ծառաները

Ճօն Պէյի ծառաներ

Կրում մը

Տեսարանը կ'անցնի Լոնտոն, 1770ից

1) Ելուայի պաշտելի բանաստեղծին այս տուամբ՝ Փրանսական ուղևորութեան ամենէն փափուկ և ամենէն ազնիւ գոհարն է, ու մին՝ բոլոր պրականութեանց ամենէն մաքուր, ամենէն յուզիչ,

Գլխաւոր դերակատարներուն նկարագիրն ու հագուստը.

ՉԵԹՐԹԸՆ. ՆԿԱՐԱԳԻՐ. — Տասնեուրբ ատկան երեսասարդ, սճգոյն, դէմք կորովի, մարմինը սկար, նսկումներէն ու մտածումէն՝ ուժասպառ, ձեւերուն մէջ պարզ ու միանգամայն վայելուչ, երկչոս ու գորովագին՝ Քիթթի Պէյի առջեւ, բարեկամական ու բարի՝ Քուէյրին հետ, խոյս՝ ուրիշներու հետ, եւ ամենուն հետ՝ զգուշաւոր. ծանրախոն ու խանդոտ՝ շեշին ու խօսուածին մէջ :

ՀԱԿՈՒՍՏԸ. — Սեւ մեկնոց, սեւ ներքնակ, գորս սարբա, կակուղ կօշիկ. մազերը թուխ, անփոշի, լիջ մը անկարգ քափքփած. երեւոյթ մը միանգամայն զինուորական ու եկեղեցական :

ՔԻԹԹԻ ՊԵՅ. ՆԿԱՐԱԳԻՐ. — Մօտ քսաներկու տարեկան կից, մեղամաղձիկ, շնորհալի, վայելուչ՝ աւելի ի բնէ քան դաստիարակութեամբ, քաւուղ, կրօնատէր, ձեւերուն մէջ երկչոս, իր ամուսնոյն առջեւ դողանար, համարձակ եւ ինքնամասոյց՝ միմիայն իր մայրական սիրոյն մէջ : Չեքրորսրնի համար իր գրութիւնը սիրոյ պիտի փոխուի, ինքն իսկ կը զգայ զայդ, ու կը սարսափի. զգուշաւորութիւնը զոր ինքն իրեն կը պարտադրէ՝ ասով աւելի եւս մեծ չափ մը

ամենէն վտեմ՝ հրաշակերտներէն: Չեթրթըն երեւակայական անձ մը չէ, այլ անպիտան բանաստեղծ մը որ իրապէս գոյութիւն ունեցած է, ապրած՝ ժ՛՛՛՛՛ դառու վերջերը և թշուառութենէն յուսահատ՝ անձնասպանութեամբ կեանքին վերջ տուած. բայց Վիկեի, իրականութենէն փոխ առնելով այդ աղեխարշ դէպքը՝ անով հիւսած է ողբերգութիւն մը, ուր՝ մարդկային ճակատագրին ամենէն մուսլ, ամենէն խորին ու ահաւոր ու յաւիտեական հարցերէն ոմանց հոգեաւանջ առեղծուածը ցցած է խորհող մաքերուն հանդէպ, առեղծուած, որ թերեւ լուծում չունի, բայց որուն խորը սուղիլը, որուն մթութեամբը տառապիլը՝ միշտ պիտի ըլլայ լեզի և արի հաճոյք մը վեհ հոգիներուն համար:

2) Դեռատի սպասաւոր:

կր ստանայ : Ամէն ինչ պէ՛տ է ցոյց տայ, էնոր տեսարանի վրայ երեւցած առաջին պահէն իսկ, թէ անակնկալ ցաւ մը եւ յանկարծական սոսկում մը կրնան զէնիկա ռուպտապէս մեռցնել :

ՀԱԳՈՒՍՏԸ. — Սեւ թախի՛ւ գլխարկ, «ալա Փամբլա» կոչուած տեսակէն, երկար շրջագետ, գործ մեծախոյ, սեւ ծապակէնէն. երկար զանգուր մազեր, որոնց պարուրածն խոպոպիկները կուրծի՛ն վրայ կը ծածանին :

ՔՈՒԷՅՔԸՐԸ . ՆԿԱՐԱԳԻՐ. — Ուրտուն տարեկան ծերունի, մարմնով ու հոգով առողջ եւ առողջ, իր շեշիւն մէջ՝ կորովի եւ եռանդուն, զինքն շրջապատողներուն հանդէպ՝ լի հայրական բարութեամբ, անոնց վրայ լուրջայն հսկելով եւ զանոնք առաջնորդելով՝ առանց զանոնք վիրաւորել ուզելու. հեզմաբան եւ մարդասէաց՝ երբ կը տեսնէ մարդկային ընկերութեան թերութիւնները. ընկերութեան դէմ զայրացած՝ իսկ իւրաքանչիւր մասնաւոր մարդու համար ներողամիտ, իր խայթիչ սրամտութիւնը ի կիր կ'արկանէ այն տեսն միայն երբ սրամտութիւնը կը տիրապետէ իրեն, իր նայուածքը սրաքափանց է, բայց ինք կը կեղծէ ոչինչ տեսած ըլլալ՝ որպէս զի կարենայ իր վարմունքին ինքնազուլտի տեսնալ. սանք բարեկամ եւ բոլոր պարտականութեանց կատարմանը եւ կարգաւորութեան ու խաղաղութեան պահպանմանը ուշադիր ըլլալով, իւրաքանչիւր ոք ներհապէս զինքն կ'ընդունի իբր իր հոգւոյն ու կեանքին ղեկավար :

ՀԱԳՈՒՍՏԸ. — Մեկնոց, ներհակ, երկար գուլպայ՝ կաղի՛նի գոյն՝ բաց թուխ, կամ գործ, մեծ բոլորի լայնեզր գլխարկ, ներսակ մազերը տափակ եւ վար կախուած :

ՃՕՆ ՊԷԼ . ՆԿԱՐԱԳԻՐ. — Քառասունընեց-յիսուն տարեկան, հուժկու, դէմքը կարմիր, էլլով, փորքրով եւ ուղղալիճով դուռած. իր հայրուածի՛ն մէջ զլր փո՛ւ էր հարստութեանը ամբարտաւանութիւնը. նայուածքը կասկածոտ, իշխող. ծլատ եւ յաչաղկոտ, ձեւերուն մէջ բիրտ, եւ ամէն մէկ ծէսին ու ամէն մէկ բառին իր տիրութիւնը զգացնող :

ՀԱԳՈՒՍՏԸ. — Տափակ մազերը՝ անփոփոխ լայն եւ պարզ թխագոյն մեկնոց :

ԼՈՐՏ ՊԷՔՅՈՐՏ . ՆԿԱՐԱԳԻՐ. — Հարուստ, կոկոզավիճ ծերունի. անմիտ հովանաւորողի տիպար, գոռոզ, ինքնագոհ այսերը՝ անդնագործեալ փողկապի մը վրայ կախուած, հաստատուն ու վեհաբոլ՝ կախուած մը : Հարստութեան հանդէպ՝ յարգալից, աղփասութեան հանդէպ արհաւիրմունք :

ՀԱԳՈՒՍՏ. — Լորտ-հաղափայտի մանեակը վիզը. նախ մեկնոց, նախկաւոր դիպակէ ներհակ, ոսկի գլուխով մեծ ձեռնափայտ :

ԼՈՐՏ ԹԷԼՊՈԹ . ՆԿԱՐԱԳԻՐ. — Անճանհան եւ սիրահամայն բարեբարոյ, գուարք ընկեր, ձեւերով աշխուժ, ո եւ է ջանասիրութեան թեմալի, եւ ցատ ուրախ մանաւանդ երբ գեղծ է ո եւ է տիրութեան տեսարանէ եւ ո եւ է լուրջ գործէ :

ՀԱԳՈՒՍՏԸ. — Կարմիր որսագետ, քարայծենի՛տ գոթի, մորթէ անկրամարտի՛, մազերը թեթեւորէն փոքեցան, խոտրտունով սեւ "խաւթ" ջրդեղուած :

Արարուած Առաջին

Տեսարանը կը ներկայացնէ ընդարձակ յարկաբաժին մը Ճօն Պեշի տակ ու հանգստաւե տեսարանները : Հանդիսատեսին ձախ կողմը շրմինէ մը՝ վառած գետնածուխով յեցուն : Աջ կողմը, Քիթթի Պեշի ննջատեղեակին դուռը : Խորը, ապակեւոր մեծ դուռ մը. ապակիի փոփոխի քառակուսիներուն մեջքէն՝ կը նշմարուի ճոխ խաւնոր մը. մեծ դարձարձակ սանդուղ մը կ'առաջնորդէ շատ մը նեղ եւ մուր դռներու, որոնց մէջ կը գտնուի Չեքրորքի փոփոխ սենեակին դուռը :

Քուէյթը 1) սենեակին մէկ անկիւնը, ձախ կողմը, գիւր մը կը կարդայ : Աջ կողմը՝ նստած է Քիթթի Պեշ. իր ոտքին տակ՝ տղի մը՝ արտաքին մը վրայ նստած, ֆոլը, աղջիկ մը՝ կանգուն :

Տ Ե Ս Ա Տ Ա Ն Ա .

Քուէյթը, Քիթթի Պեշ, Ռաշէլ

Քիթթի Պեշ. — (Իր աղջկանը որ վերջ մը ցոյց կուտայ իր եղբորը), Կարծեմ՝ ամուսնոյ ձայնն է որ կ'իմանամ : Ազմուկ մի ընէք, տղաք :

(Քուէյթըին)

Արդեօք ինչ կայ նորէն :

(Քուէյթըը ուսերը կը թօթիկէ) :

Տէր Աստուած : Հայրերնիդ բարկացած է : Տարակոյտ չկայ, շատ բարկացած կ'երեւայ. ձայնին շեշտէն յայտնի է : Կ'աղաչեմ, Ռաշէլ, մի՛ խաղար : (Ձեռագործը կը ձգէ և մտիկ կ'ընէ) Կարծես թէ հանդարտեցաւ : Այնպէս չէ, պարսն :

(Քուէյթըը հաստատական նշան մը կ'ընէ և ընթերցումը կը շարունակէ) :

Այդ փոքրիկ մանեակը մի՛ փորձեր, Ռաշէլ : Ատոնք աշխարհային անողի բաներ են որոնց մինչեւ անգամ պէտք չէ որ դաչինք : Բայց ո՞վ տուա քեզի այդ գիրքը : Աստուածաշունչ մըն է : Ո՞վ տուա քեզի, ըսէ տեսնեմ : Ապահով եմ որ սա երկուստարդն է որ երեք ամսէ ի վեր հոս կը բնակի :

Ռաշէլ. — Այո՛, մայրիկ :

Ք. Պեշ. — Ա՛խ, Աստուած իմ, ինչ անկայել բան ես ըրեր, աղջիկս : Ես քեզի պատուիրած էի

1) Այսպէս կը կոչուին Անգլիոյ և Ամերիկայի մէջ տարածուած կրօնական սղանդի մը անդամները :

որ ոչինչ պէտք է ընդունիս, մանաւանդ այդ խեղճ երիտասարդէն: Ե՛րբ տեսար զայն, զաւակս: Գիտեմ որ այս առտու գացիր՝ եղբորդ հետ՝ իր սենեակը, զինքը համբուրելու: Ինչո՞ւ իր սենեակը մտաք, զաւակներս: Անպատշաճ բան էր ըրածնիր: (Կը համբուրէ զաւակները)

Վստահ եմ որ դեռ գրեթե վրայ էր երբ ներս մտաք. երէկ իրիկունքէ մինչև այս առտու իր կանթեղը վառ մնացած էր:

Ռ-շ. — Այո՛. և կուլւր կուր:

Ք. Պէլ. — Կուլւր կոր: Սուս, սուս եղէք: Մարդու մի՛ ըսէք աստիկ: Այդ գիրքը պէտք է տանիք Պ. Թոմին յանձնէք՝ երբ ձեզ կանչէ: Բայց զինքը երբէք մի՛ խանգարէք ասկից ետքը, և իրմէ՛ սչ մէկ նուէր մի ընդունիք: Երեք ամիս է որ այստեղ կը բնակի, բայց դեռ մէկ անգամ մը չեմ խօսած իրեն հետ, և դուք իրմէ նուէր մը, գիրք մը ընդունած էք...: Ամօթ չէ՛: Գացէք համբուրեցէք բարի Բուէյքըրը. լուսագոյն բարեկամն է ան զոր Աստուած մեզի տուած ըլլայ երբէք:

(Տղաքը կը վազեն Բուէյքըրին ծոնկերուն վրայ կը նստին):

Ք-էյբըբ. — Մունկերուս վրայ նստեցէք, և աղէկ մտիկ ըրէք ըսածիս: Պիտի ըսէք ձեր ազնիւ մայրիկին, թէ իր սիրտը պարզ է, մաքուր և ճշմարտապէս քրիստոնեայ, բայց թէ իր վարմունքին մէջ ձենէ աւելի աղայ է, թէ ձեզի քիչ մը առաջ տուած պատուէրին վրայ պէտք եղածին չափ չէ մտածած, և թէ կը խնդրեմ իրմէն որ ըմբռնէ թէ աղքատի մը նուէրը ետ դարձնելը՝ զայն վիրաւորել և իր ամբողջ թշուառութիւնը իրեն զգացնել ըսել է:

Ք. Պէլ. — (Նստած տեղէն ցատքելով) Օ՛հ, իրաւունք ունի: Տո՛ւր, տո՛ւր ինձի այդ գիրքը, աղջիկս, պէտք է մինչև մահերնիս գայն պահէք: Սխալեցայ, զաւակս: Մեր բարեկամը մի՛շտ իրաւունք ունի:

Ք-էյբ. — (Յուզուած, և Քիթթի Պէլի ձեռքը համբուրելով): Օ՛հ, Քիթթի Պէլ, Քիթթի Պէլ, պարզ ու պեկո՞՞՞ հոգի: Այդպէս մի՛ ըսեր ինձի համար: Մարդկային իմաստութիւնը գոյութիւն չունի: Տես, ըսածս ձիշդ է հիմամբ, բայց ըսելու ձեռն աղէկ չէր: Պէտք չէր որ զաւակներուդ զգացնէի իրենց մօրը թեթև սխալը: Չկայ, Քիթթի Պէլ, չկայ մտածում մը, նոյն իսկ ամենէն գեղեցիկ մտածումը, որմէ գերազանց չըլլայ քու եռանդոտ սրտիդ մէկ մղումը,

քու գորովոտ ու համեստ հոգիիդ մէկ հառաչանքը: (Մեծագոյն ձայն մը կը լսուի)

Ք. Պէլ (Սարսափած). — Օ՛հ, Աստուած իմ, հայրերնուն ձայնն է. նորէն բարկացած է: (Ձեռքը սրտին կը տանի) Եունչս կը կտրի: Այս ձայնը սիրտս կը փրցնէ: Ի՛նչ ունի նորէն: Երէկ իրիկունք պէս՝ դարձեալ բարկացած կ'երեւայ:

(Թիկնաթոռի մը վրայ կ'իջնայ):

Ոտքերս կը կտրին: Կարծես փոթորիկ մըն է որ կուգայ: Ու բոլոր փոթորիկները իմ խեղճ սրտիս վրայ կը յարձակին:

Ք-էյբ. — Ա՛, գիտեմ թէ ինչ է գլխաւորիդ արիւնը զուլմն հանողը. վէճ մը ունի իր գործարանին բանւորներուն հետ. դեռ նոր իրեն դրկած են՝ նորթունէն Լոնտոն՝ պատգամաւորութիւն մը, խնդրելու համար որ ներէ իրենց ընկերներէն մէկուն: Խեղճերը պարապ տեղը փարսախ մը ոտքով եկած են: Դուրս ելէք, գացէք, երեքդ ալ: Դուք անօգուտ էք հոս: Այդ մարդը ձեզ պիտի սպաննէ: Տեսակ մը անգղ է, որ իր բոյնը կը փշրէ...

(Քիթթի Պէլ դուրս կ'ելլէ, ձեռքը սրտին վրայ, կրթնած՝ գլխուն իր որդւոյն, զոր դուրս կը տանի Ռաշէլին հետ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Քուէյբըբ, ձօն Պէլ, խոււրք մը բանւորներ

Ք-էյբըբ (Դիտելով ձօն Պէլը որ ներս կը մտնէ) — Կառգած կ'երեւայ... Ահա հարուստ մարդը, երջանիկ շահագործողը. ահա գերազանց ետականը, արդարը՝ ըստ օրէնքին:

ձօն Պէլ (Գործաւորներուն բարկութեամբ).

(Քուան գործաւորներ լսիկ իր ետեւէն կուգան և դրան առջև կը կենան):

Ձէ, չէ, չէ, չէ: Աւելի պիտի աշխատիք. այսքան:

Ք-էյբ. — (Իր ընկերներուն). — Ու նուազ պիտի շահիք. այսքան:

ձօն Պէլ. — Եթէ գիտնայի թէ ո՞վ է այս պատասխանը տուողը, ան ալ ձամբու կը դնէի՝ միւսին պէս:

Ք-էյբ. — Աղէկ ըսիր, ձօն Պէլ: Հոյակապ ես՝ ձիշդ ինչպէս վեհապետ մը իր հպատակներուն մէջ:

ձ. Պէլ. — Դուն Բուէյքըր մըն ես, ըսածիդ ականջ չեմ կախեր, բայց եթէ գիտնայի թէ սըւոնցմէ ո՞րն է որ այդ խօսքն ըսաւ... Ա՛, այդ խօսքն ըսող անօրէնը... Միաքերնիդ չէ որ ես ալ ձեզի պէս գործաւոր մըն էի: Ի՛նչպէս ձեռք ձգեցի այս ամբողջ հարստութիւնը: Կը կարծէք որ մէկ օրէն

ծախու առի նորթնի բոլոր տներն ու գործարանը : Եթէ այսօր ես եմ այդ բոլորին միակ տէրը, աշխատութեան ու խնայասիրութեան օրինակ հանդիսանալու շնորհիւ չէ միթէ : Օրական աշխատութեանս արդիւնքը շահու դնելով չէ որ տարիս օգտաբեր ըրի : Ծուլութիւն կամ շռայլութիւն տեսա՞ք երբէք վարմունքիս մէջ : Թող ամէն մարդ ինձի պէս վարուի , և ամէն մարդ ինձի պէս հարուստ պիտի ըլլայ : Մեքենաները ձեր ուժիկը կը պակսեցնեն , բայց իմ վաստակս կ'աւելցնեն . ցաւալի է ձեզի համար , բայց իմ մասին՝ շատ գոհ եմ ատկից : Եթէ մեքենաները ձեզի պատկանէին , շատ բնական պիտի գտնէի որ անոնց արդիւնաբերութիւնը ձեզի պատկանէր . բայց ես այդ մեքենաները գնած եմ այն ստակովը զոր ձեռքովս վաստակած եմ : Դուք ալ այդպէս ըրէք . աշխատասէր եղէք , և մանաւանդ խնայասէր : Աղէկ միտքերնիդ պահեցէք մեր հայրերուն սա իմաստուն առածը . պղնձե դրամները լաւ պահե՛նք , արծաթե դրամները ինքզինքնին կը պահեն : Գալով Թօպիին , ալ անոր վրայ խօսելու չէ . վռնտած մարդս ես նորէն չեմ առներ : Դուրս ելէք՝ ձայն ձուն չհանելով . եթէ ձենէ մէկը բերանը բանայ , Թօպիին պէս պիտի վռնտուի , ու ոչ հաց , ոչ բնակարան , ոչ գործ պիտի գտնէ ամբողջ գիւղին մէջ :

(Բանուորները դուրս կ'ելլեն)

Քո-էյտ . — Ապրիս , բարեկամ : Այդ պատճառաբանութիւններէդ աւելի ողջամիտը Խորհրդարանին մէջ անգամ չեմ իմացած :

Ճ. Պէլ . — (Կը մօտենայ զրգուռած , երեսը սրբելով) Ինձի նայեցէք , Քուէյքըր ըլլալնէդ մի օգտուիք ամէն գտնուած տեղերնիդ խառնութիւն յարուցանելու համար : Քիչ կը խօսիք , բայց աւելի աղէկ կ'ընէք եթէ բնաւ չխօսիք : Գործի մէջ խօսքեր կը նետէք որ դանակի հարուածներու կը նմանին :

Քո-էյտըր . — Շիտակ խօսքեր են , և ուրիշ ոչինչ : Երբ մարդիկ խելքերնին կորսնցնեն , այդպիսի խօսքերը գլխու ցաւ կը պատճառեն անոնց : Բայց ատոր համար խղճի խայթ չեմ ունենար . շիտակ խօսքի մը տպաւորութիւնը վայրկեան մը կը տեսէ :

Ճժ. Պէլ . — Ես այդպէս չեմ կարծեր . գիտէք որ բաւական կ'ախորժիմ ձեզի հետ քաղաքական հարցերու վրայ վիճիլ . բայց դուք ամէն բան ձեր վրայ կը չափէք , և կը սխալիք այդպէս ընելով : Ձեր քուէյքըրներու աղանդը բացառութիւն մըն է քրիստոնէութեան մէջ , իսկ դուք բացառութիւն մըն էք նոյն իսկ քուէյքըրներուն մէջ : Ձեր բոլոր ունեցածը

բաժնած էք ձեր եղբորորդիներուն . ձեռքերնիդ ուրիշ բան չէք պահած բայց եթէ ինչ որ պէտք է պարզ ապրուստի մը համար և կեանքերնիդ կ'աւարտէք անշարժութեան և խոկման մէջ : Դուք կ'ախորժիք ատկից , հասկցանք . բայց ինչ որ չեմ հասկնար , այն է որ իմ տունս գաք հրապարակաւ իմ ստորակարգեալներս խրախուսէք գլուխ վերցնելու :

Քո-էյտ . — Է՛, կ'աղաչեմ , քու ինչ հոգի է անոնց գլուխ վերցնելը : Ոչխարներուդ մայիլը երբեք քեզ արդիւնձ է գանոնք խուզելէ և ուտելէ : Կան մէկ հատ մը սա մարդոց մէջ , որուն անկողինը չկարենաս ծախել : Նորթնի աւանին մէջ կան մէկ հատիկ ընտանիք մը որ իր փոքրիկ տղաքն ու աղջիկները չլրկէ քու բողոքէններուդ աշխատելով հազարու և գունատելու : Ո՛ր տունը քուկը չէ և ուզածիդ չափ սուղ գնով վարձու չես տար : Կան քրտինքի կաթիլ մը որ մէկ շիլին չվաստկցնէ քեզի : Ամբողջ նորթներ՝ իր տուներով և ընտանիքներով քու ափիդ մէջն է , ինչպէս աշխարհագունտը Շարմանի ափին մէջ : Բացարձակ իշխանն ես քու աւատական գործարանիդ :

Ճ. Պէլ . — Ճիշդ է , բայց արդար է որ այդպէս ըլլայ : Հողը իմն է , որովհետեւ գնեցի զայն . տները իմն են , որովհետեւ ես շինել տուած եմ զանոնք . բնակիչները իմն են , որովհետեւ ես անոնց բնակարան կուտամ . իրենց աշխատութիւնը իմն է , որովհետեւ ես եմ զայն վճարողը : Ես արդար եմ օրէնքին առջև :

Քո-էյտ . — Բայց քու օրէնքը արդար է Աստուծոյ առջև :

Ճ. Պէլ . — Եթէ քուէյքըր չըլլայիք , այդպէս խօսելուդ համար՝ ձեզ կը կախէին :

Քո-էյտ . — Աւելի նախամեծար կը համարէի ինչզվինքս ձեռքովս կախել քան թէ ուրիշ կերպ խօսիլ , որովհետեւ քեզի համար ճշմարիտ բարեկամութիւն մը ունիմ :

Ճ. Պէլ . — Եթէ իրօք քսան տարիէ ի վեր բարեկամս եղած և զաւակներէս մին ազատած չըլլայիք . տօքթէօր , ալ հոս ոտք կտնել չէի տար ձեզի :

Քո-էյտ . — Աւելի գէշ կ'ըլլար քեզի համար . որովհետեւ ալ չէի կարողանար քեզ ազատել , այն վայրկեաններուդ մէջ երբ շահագործողներու չարանախանձ յիմարութեամբը դուն աւելի կը կուրանաս քան պզտիկ տղաքը իրենց տարիքին տկարութեամբը : Կը փափաքիմ որ այդ խելձ բանուորը չձամբես : Ձեմ խնդրել քենէ այդ բանը , որովհետեւ ոչ մէկէն երբեք բան մը չեմ խնդրած , բայց խորհուրդ կուտամ որ ըսածիս պէս ընես :

ՃՏՆ ՊԵԼ. — Եղածը եղած է: Ինչո՞ւ ինձի պէս
 չեն վարուիր: Թող իրենց ընտանիքին բոլոր ան-
 դամները աշխատին և բանի մը օգտակար ըլլան:
 Միթէ ես կնիկս չեմ աշխատցներ: Երբեք չ'երևար,
 բայց այստեղ է ամբողջ օրը, և աչքերը թէպէտ
 միշտ գետինը կը ծռէ, գիտէ զանոնք գործածել, ու
 շարունակ կ'աշխատի: Հակառակ Լոնտոնի շուրջն
 ունեցած աշխատանոցներուս ու գործարաններուս,
 կ'ուզեմ որ իր սենեակին խորէն շարունակէ վարել
 այս հանգստանոցը, ուր կուզան լրտերը, Խորհրդա-
 րանէն, որտորութենէ կամ Հայտ-Փարքէն դառնալ-
 նուն: Այդպէսով լաւ յարաբերութիւններ կը շահիմ,
 որոնցմէ յետոյ՝ պէտք եղած օգուտը կը քաղեմ:
 Թօսի ճարպիկ բանուոր մըն էր, բայց անհետատես:
 Ճշմարիտ հաշուող մը թոյլ չի տար որ իր շուրջը
 ո և է բան անօգուտ մնայ: Եմէն բան, կենդանի
 կամ անկենդան, պէտք է շահ մը բերէ: Հողը ար-
 գասաւոր է, դրամն ալ բեղուն է, և ժամանակը
 դրամ կը բերէ: Արդ՝ կիներն ալ մեզի պէս տարիներ
 ունին ապրելու. ուրեմն ձգել որ այդ ժամանակը անօ-
 գուտ անցնի, լաւ եկամուտ մը կորսնցնել ըսել է: Թօսի
 ձգեց որ իր կինն ու աղջիկները ծոյլ մնան. ատիկա
 մեծ դժբաղդութիւն մըն է իրեն համար. ատոր պա-
 տասխանատու չեմ ես:

Ք. — Ե. — Մեքենաներէդ մէկուն մէջ այդ խեղճը
 թեւ կտորեց:

Ճ. ՊԵԼ. — Այո, և նոյն իսկ մեքենան ալ կտորեց:

Ք. — Ե. — Վստահ եմ որ դուն ներքնապէս աւելի
 կը ցաւիս երկաթէ զսպանակին քան ման և արիւնէ
 զսպանակին վրայ: Բու սիրտդ պողպատէ է՝ մեքենա-
 ներուդ պէս: Մարդկային ընկերութիւնը քու սրտիդ
 պէս պիտի ըլլայ. իրեն Աստուած պիտի ընէ ոսկիի
 կոյտ մը: Եւ իրեն քահանայապետ՝ հրեայ վաշխառու
 մը: Բայց յանցանքը քուկդ չէ. դուն ինչ որ տեսած
 ես աշխարհ եկած ատենդ՝ անոր համեմատ կը վարուիս.
 Քեզ չեմ մեղադրեր. դուն արամաբանական ես, ատ
 ալ հագուազիւտ յատկութիւն մըն է: Միայն թէ
 քանի որ չես ուզեր որ խօսիմ, գոնէ ձգէ որ կար-
 դամ: (Գիրքը նորէն ձեռքը կ'առնէ և թիկնաթուղին
 մէջ՝ անդին կը դառնայ):

ՃՏՆ ՊԵԼ. (Իր կնոջ սենեակին դուռը կը բանայ
 ու ծով) — Տիկին Պէլ, եկուր հոս:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Նոյնի, Քիթթի Պէլ

(Քիթթի Պէլ, սարսափահար, բռնած իր երկու
 դաւակներուն ձեռքէն, որոնք՝ հօրերուն վախէն՝

իրենց մօր շրջադգեստին մէջ կը պահուըտին) — Եկո՛ւ:

ՃՏՆ ՊԵԼ. — Ո՛ւր է երէկուան հաշիւը, պատ-
 րաստեր ես: Սա վերը բնակող երիտասարդը Թոմ
 կամ Թոմասէն ուրիշ անուն չունի. . . Կը յուսամ որ
 շուտով կ'ելլէ կ'երթայ:

Ք. ՊԵԼ. (Սեղանին վրայէն արձանագրութեան
 տետր մը կ'առնէ և կը բերէ ամուսնոյն) — Մեր
 տետրակին վրայ միմիայն այդ անունը գրեց՝ այդ
 փոքրիկ սենեակը վարձած ատենը: Ահն երէկուան
 հաշիւը՝ վերջին ամիսներու հաշիւին հետ:

Ճ. ՊԵԼ. (Հաշիւները կը քննէ՝ արձանագրու-
 թեան տետրին վրայէն). — Քարթին. առաջուան
 չափ ձիշդ չես բռներ կոր հաշիւը. . . (Կ'ընդմիջէ
 խօսքը և կասկածոտ ձեւով մը կնոջը երեսն ի վեր
 կը նայի): Ինչո՞ւ այդ Թօմը ամբողջ գիշերը արթուն
 կը մնայ. խելքս չի հասնիր. . . Շատ աղքատ կ'երևայ:
 (Տեսարակը նորէն աչքէ կ'անցընէ):

Առաջուան պէս ձիշդ չես բռներ կոր հաշիւը.
 Հասկցո՞ւր:

Ք. ՊԵԼ. — Աստուած իմ, ինչո՞ւ այդպէս կ'ըսես:

Ճ. ՊԵԼ. — Չես գուշակեր թէ ինչո՞ւ այսպէս
 կ'ըսեմ:

Ք. ՊԵԼ. — Արդեօք թուանշանները գէշ շա-
 րուած են:

Ճ. ՊԵԼ. — Է՛ն անկեղծը խորամանկութիւն կը
 դնէ ումէն բանի մէջ: Չես կրնար շիտակ պատաս-
 խանել և աչքիս մէջը նայիլ:

Ք. ՊԵԼ. — Բայց վերջապէս ինչ կը գտնես հոտ՝
 որ քեզ կը բարկացնէ:

Ճ. ՊԵԼ. — Չգտածս է որ զիս կը բարկացնէ,
 և չգտնելս շատ կը զարմացնէ զիս. . .

Ք. ՊԵԼ. (Շուարած) — Պէտք է աղէկ մընայիլ,
 չեմ գիտեր ինչ է պակասը:

Ճ. ՊԵԼ. — Հինգ վեց ոսկի կը պակսի. աչք մը
 միայն նետեցի, բայց ապահով եմ:

Ք. ՊԵԼ. — Բացատրէ, ինչ ըսել կ'ուզես:

Ճ. ՊԵԼ. (Թեւէն բռնելով) — Գնա սենեակդ ու
 խելքդ զուլիդ ժողովէ: Տղաքը պարապ կենալու կը
 վարժուի կոր. չեմ ախորժիր: Տանս գործերը առա-
 ջուան պէս խնամքով չես նայիր կոր: Ռաշէլին
 հագուաւոր շատ տեքողութ է. չեմ ախորժիր:

(Ռաշէլ կը վազէ Բուէլքըրին սրունքներուն մէջ-
 տեղը կը նետուի: ՃՏՆ ՊԵԼ կը շարունակէ խօսիլ
 Քիթթի Պէլին որ իր ննջասենեակը մտած է արդէն):
 Գնա, հիմա կուզամ ես ալ. այս սրունակը նորէն
 սկսէ և եօթնով բազմապատկէ: (Քիթթի Պէլին ետե-
 ւէն կը մտնէ անոր սենեակը):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ

Քուռյրոր, Ռաշէլ, Չեքըրըն

Չեքըր.— (Համբուրելէ յետոյ Ռաշէլը որ վազելով իր մօրը կուգայ, Քուռյրըրին ձեռքը կը սեղմէ). Բարեւ, խտապահանջ բարեկամս:

Քուռյ.— Դեռ պէտք եղածին չափ ալ խտապահանջ չեմ իբր բարեկամ և իբր բժիշկ: Հոգիդ կը կրծէ կոր մարմինդ: Ձեռքերդ կրակներու մէջ են, ու երեսիդ վրայ գոյն չէ մնացեր: Այս կերպով՝ սրչափ ատեն կը յուսաս որ պիտի ապրիս:

Չեքըր.— Կարելի եղածին չափ քիչ: Տիկին Պէլ այստեղ չէ:

Քուռյ.— Կեանքդ ուրեմն մէկուն օգտակար չէ:

Չեքըր.— Ընդհակառակն, կեանքս ամենուն աչքին շատ կ'երևայ կոր:

Քուռյ.— Հաստատապէս կը հաւատան այդ ըսածիդ:

Չեքըր.— Այնքան հաստատապէս որքան դուն կը հաւատաս քրիստոնէական ողորմածասիրութեան: (Դառնութեամբ կը ժպտի):

Քուռյ.— Քանի տարեկան ես: Սիրող մաքուր ու թարմ է Ռաշէլին սրտին պէս, և բազմափորձ միտքդ այնքան ծեր է որքան իմս:

Չեքըր.— Վաղը տասնըութը տարեկան պիտի ըլլամ:

Քուռյ.— Խեղճ աղայ:

Չեքըր.— Խեղճ, այն: Տղայ, սչ... Ես հազար տարի ապրած եմ:

Քուռյ.— Հազար տարին իսկ բաւական չէ մարդոց մէջ գտնուած չարութեան կէսը ճանչնալու համար: Բայց թշուառութիւնը համայնագիտութիւնը ըսել է:

Չեքըր.— Ուրեմն ես շատ գիտուն եմ... Բայց կը կարծէի թէ տիկին Պէլ այստեղ էր: Քիչ մը առաջ նամակ մը գրեցի, նամակ մը զոր գրելը շատ ծանր եկաւ ինծի:

Քուռյ.— Կը վախնամ որ չափազանց բարի ես դուն: Ըսի քեզի որ զգուշութիւն ընես ատոր: Մարդիկ երկու մասի բաժնուած են, մարտիրոսներ և դահիճներ: Դուն միշտ ամենքէն պիտի մարտիրոսուիս, ինչպէս և մայրը սա աղջկան:

Չեքըր.— (Բուռն խոյանքով մը) — Մարդու մը բարութիւնը զինքը զոհ կը դարձնէ այնքան ատեն որքան ինքը կը կամենայ. և ազատումը իր ձեռքն է:

Քուռյ.— Ի՞նչ ըսել կ'ուզես:

Չեքըր.— (Համբուրելով Ռաշէլը, կ'ըսէ ամենամեղմ ձայնով) — Ինչո՞ւ վախցնենք այս փոքրիկ աղջիկը... և մայրն ալ, որ մօտերնիս է ու կարող է լսել...

Քուռյ.— Մայրը չի կրնար քեզ լսել. անոր ականջին կը հնչէ հիմա ձայն մը շատ նուազ քաղցր քան քու ձայնդ: (Սեղուտի) Այս երրորդ անգամն է որ էսոր խօսքը կ'ընէ...

Չեքըր.— (Կրթընելով այն թիկնաթուղին ուր նստած է Քուռյըրըրը) — Դուք միշտ կը կշտամբէք զիս, բայց ըսէք՝ ինչո՞րեմ ինչո՞ւ մարդ պէտք չէ իր նկարագրին ձամբուն հետևի, երբ ապահով է որ՝ խոնջէնքի բոլորէն գալուն պէս՝ պիտի ստիպուի ձգել քաշուիլ: Իմ մասիս, որոշած եմ ու է զիմակ չընդունիլ ու մինչև վերջը մնալ ինչ որ եմ, ամէն պարագայի՝ մտիկ ընել սրտիս՝ իր զեղումներուն ու իր գայլայթներուն մէջ, և իմ ձակատագիրս լաւ կատարելու համակերպիլ: Ի՞նչ օգուտ ունի խտաբարոյ ձևանալ, երբ մարդ ներողամիտ է: Կեղծ խտուութեանս տակ գթութեան ծպիտ մը պիտի տեսնուէր, և չպիտի կրնայի գանել քօղ մը որ թափանցիկ չլլար: Ամէն կողմէ կը դաւաճանեն ինծի դէմ, կը զգամ, և կը ձգեմ որ խաբուիմ՝ արհամարհելով ինքզինքս, ու ինքնապաշտպանութիւնը ձանձրանալի նկատելով: Կան մարդիկ որոնց կը նախանձիմ, տեսնելով այն հաճոյքը զոր կը զգան՝ կոպիտ խորամանկութիւններով ինծի յղթելով. կը տեսնեմ հեռուէն՝ այդ դաւերու թելերը հիւսելին, և այնքան անտարբեր եմ դարձած իմ կեանքիս նկատմամբ, որ չեմ զիջանիբ գետին ծռիլ՝ այդ թելերէն մէկ հատը փրցնելու համար: Արդէն իմ վրէժս բաւական լուծուած կը նկատեմ տեսնելով իրենց գձձութիւնը, որ զիս իմ աչքիս կը բարձրացնէ, և ինծի կը թուի թէ նախախնամութիւնը չի կրնար թոյլ տալ որ իրերը երկայն ատեն այս ընթացքով շարունակեն: Միթէ ան իր նպատակը չունէր զիս ստեղծելով: Իրաւունք ունիմ անոր դէմ յոխորտալու՝ Բնութիւնը բարեփոխելու յաւակնութեամբ: Ինծի է ինկեր Աստուծոյ սխալը բռնել:

Քուռյ.— Քուռ մէջդ մշտական երազանքը սպաններ է գործելու կարողութիւնը:

Չեքըր.— Ե՛, ինչ փոյթ, եթէ այդ երազանքին մէկ ժամը աւելի գործ կ'արտադրէ քան ուրիշներուն գործունէութեան քսան օրը: Ո՞վ կրնայ գառաստան կտրել անոնց և իմ միջև: Մարդուն համար՝ միայն մարմնոյ աշխատութիւնը կայ միթէ. և ուղեղին աշխատութիւնը արժանի չէ քիչ մը գթութեան: Ե՛,

Աստուան իմ, մտքի միակ աշխատութիւնը՝ միթէ թիւերու աշխատութիւնն է: Պիւթագորաս աշխարհիս աստուանն է: Պէտք է ուրեմն որ հրեղէն ներշնչումին՝ « Մի գար, դուն անօգնւտ ես » ըսեմ:

Ք-էյ. — Այդ ներշնչումը ճակտիդ վրայ դրոշմեր է իր արեւաւոր կնիքը: Չեմ մեղադրեր քեզ, գաւազնու. բայց կ'օգրամ վրայ:

Չէ՛ր. (Կը նստի) — Բարի քուէյքըր, ձեր եղբայրական և ոգեպաշտ ընկերութեան մէջ, գուժ ունին անոնց վրայ որոնք մտածման հրայրքովը կը չարչարուին: Այն՝ կարծեմ. ձեզ ներողամիտ կը գտնեմ ինձի համար, մինչդեռ ամենուն համար խիստ էք. ատի քիչ մը կը հանդարտեցնէ զիս:

(Այս միջոցին՝ Ռաշէլ կ'երթայ Չէթըրթընի ծունկերուն վրայ կը նստի):

Իրաւ է որ, երեք ամսէ ի վեր, գրեթէ երջանիկ եմ այստեղ. անունս չեն գիտեր հոս, իմ վրաս չեն խօսիր ինձի, և ծունկերուս վրայ ազուր տղեկներ կը տեսնեմ:

Ք-էյ. — Բարեկամ, կը սիրեմ՝ քեզ՝ լուրջ նկարագրիդ համար: Դուն արժանի պիտի ըլլայիր մեր կրօնական գումարումներուն մասնակցելու, որոնց մէջ պատկերապաշտ պապականներու իրարանցումը չի տեսնուիր, ու բողոքականներու տղայական երգերը չեն լսուիր: Կը սիրեմ՝ քեզ, որովհետև կը գուշակեմ որ աշխարհ քեզ կ'ատէ: Հայեցողական հոգի մը աւելորդ բեռ մը կը թուի այն բոլոր դատարկապորտներուն որոնցմով երկիրս ծածկուած է երեսակայութիւնն ու ամբիփումը երկու հիւանդութիւններ են որոնց վրայ մէկը չի գթար: Դուն անուններն անգամ չես գիտեր այն գաղտնի թշնամիներուն որոնք շուրջը կը սլքտան. բայց գիտեմ որ անանկներ ալ կան որոնք քեզ անոր համար աւելի կ'ատեն որովհետև չեն ճանչնար:

Չէ՛ր. (Եւանդով) — Եւ սակայն, միթէ քիչ մը իրաւունք չունիմ սիրուելու իմ եղբայրներէս, ես որ գիշեր ցարեկ անոնց համար կ'աշխատիմ. ես որ այնքան տաժանքով՝ ազգային աւերակներուն մէջէն բանաստեղծութեան քանի մը ծագիկ կը փնտռեմ որպէսզի անոնցմէ կարենամ տեսական անուշահատութիւն մը հանել. ես որ կ'ուզեմ մարգրիտ մը ևս աւելցնել Անպիտոյ թագին, և որ այնքան ծովերու և գետերու յատակը կը սուզվիմ զայն գտնելու համար:

(Ռաշէլ կը հեռայ Չէթըրթընէն, կ'երթայ քուէյքըրին ոտքին տակ աթոռակի մը վրայ կը նստի և պատկերներ կը նայի:)

Եթէ գիտնայիք որքան կ'աշխատիմ... Սենեակս վանքի խցիկ մը դարձուցած եմ. կեսնքս օրհնած ու սրբագործած եմ. տեսողութիւնս սկարացողացած եմ, աչքերս այլ ևս մեր տարիքին լոյսը չունին. սիրտս աւելի պարզ դրած եմ. իւրացուցած եմ հին ատենուան մանկական բարբառը. կէս-սաքսոն ու կէս-փրանկ ոտանաւորներ գրած եմ, ինչպէս Հերլըտ թագաւորը Ուիլերմ դքսին. ու յետոյ, տաներորդ դարու այդ մուսան, այդ կրօնաշունչ մուսան սրբատուփի մը մէջ դրած եմ՝ սրբուհիի մը մասունքին պէս: Պիտի փշրելին զայն, եթէ գիտնային որ իմ ձեռքովս է յորինուած. պաշտեցին զայն իբր գործը վանականի մը՝ որ երբեք գոյութիւն ունեցած չէ և զոր Բաուլէ անուանած եմ:

Ք-էյ. — Այն, մարդիկ կը սիրեն մեռածներն ապրեցնել և ողջերը մեռցնել:

Չէ՛ր. — Սակայն իմացան որ այդ գիրքը ես եմ գրած: Ալ չէին կրնար զայն քանդել, թողուցին որ ապրի. բայց ան քիչ մը աղմուկէ ուրիշ արդիւնք չբերաւ ինձի, և ես գրելէ ուրիշ բան չեմ կրնար ընել Ջանացի ամէն բանի ձկիլ. չյաջողեցայ: Որոշ աշխատանքներու խօսքն ըրին ինձի. փորձեցի, չկրցայ: Թող մարդիկ ներեն Աստուծոյ որ զիս այսպէս է ստեղծեր: Ուժի ծայրայեղութիւն է ասիկա թէ ամօթալի տկարութիւն, չեմ գիտեր, բայց երբեք չկրցայ նեղ ու կանոնաւոր ջրանցքներու մէջ բանտարկել մեծադորդ յորդումները մտքիս, որ հակառակ իմ կամքիս՝ իր ափունքը միշտ կ'ողողէր: Անկարող էի օրական հաշիւներու դանդաղ գործողութեանց հետևիլ. էն առաջ ատոնցմէ հրաժարեցայ: Խոստովանեցայ որ միտքս յաղթուած էր թուանշանէն, և խորհեցայ մարմինս գործածել: Աւաղ, բարեկամս, հոս ալ՝ ուրիշ ցաւ, ուրիշ նուաստացում. այս մարմինը, տղայութենէս ի վեր անքուն անցուցած գիշերներուս կրակներէն այրած մրկած, շատ տկար է ծովային կամ զինուորական աշխատութեանց համար շատ տկար՝ նոյն իսկ ամենէն քիչ յոգնեցնող արուեստագործութեան համար:

(Ակամայ յուզմունքով մը ոտքի կ'ելլէ):

Եւ արդէն, նոյն իսկ եթէ Հերակլէսի ուժն ունենայի, իմ ու գործիս մէջտեղը միշտ պիտի գտնելի աղետաբեր թշնամին որ ինձի հետ ծնած է, չարագործ պարիկը որ անշուշտ օրօրոցիս մէջ երևան ելաւ, Մտայածութիւնը, Բանաստեղծութիւնը: Ամէն տեղ է ան. ամէն բան կուտայ ինձի և ամէն բան ձեռքէս կ'առնէ. ամէն բան կը հրապուրէ և ամէն

բան կը ջնջէ ինծի համար. ան է որ զիս ազատեց, և ան է որ զիս խորտակեց...

Ք-եյ. — Ո՛ւ հիմա, ինչ կ'ընես:

Չե՛ր. — Ի՛նչ գիտնամ: Կը գրեմ: Ինչո՞ւ. չեմ գիտեր: Որովհետև պէտք է...

(Կ'իշխայ կը նստի աթոռին վրայ, և այլ ևս մտիկ չ'ընէր քուէյքըրին պատասխանը: Ռաշէլին կը նայի և զայն իր մօտը կը կանչէ):

Ք-եյ. — Հիւանդութիւնը անբուժելի է:

Չե՛ր. — Ի՛մ:

Ք-եյ. — Ո՛ւ, մարդկութեան հիւանդութիւնը:

Քու սրտիդ համեմատ, դուն բարեացակամ արգասատանք մը կը զգաս անոնց մասին որ քեզի կ'ըսեն՝ «Փոխէ ինքզինքդ, ուրիշ մարդ մը եղիր» . ես իմ գլխու համեմատ, արհամարհանք կը զգամ անոնց համար, որովհետև կ'ուզեն ըսել՝ «Անդին գնա մեր արևէն. քեզի համար տեղ չկայ»: Չեմ գիտեր թէ ո՞վ պիտի կարենայ բուժել զանոնք. ինձմէ յոյս չունիմ այդ մասին. բայց գոնէ պիտի հալածեմ զանոնք:

Չե՛ր. — (Շարունակելով խօսիլ Ռաշէլին, որուն ցած ձայնով խօսած է քուէյքըրին պատասխանին միջոցին): Ուրեմն Աստուածաշունչդ ա՛յլ քովդ չէ: Ո՛ւր է մայրիկդ:

Ք-եյ. (Ռաքի ելլելով) — Կ'ուզես հետս դուրս ելլել:

Չե՛ր. (Ռաշէլին) — Ի՛նչ ըրիր Աստուածաշունչը, օրիորդ Ռաշէլ:

Ք-եյ. — Ձեռն իմանար տանտէրը որ կը պուայ կոր: Մտիկ ըրէ:

Ճժ՝ Պէլ. (Քուլխին մէջ) — Ձեմ ուզեր, հասկըցա՛մ: Չըլլար՝ ըսի՛: Չըլլար:

Ք-եյ. (Չէթըրթընին, իր գլխարկն ու գաւազանը շտապով առնելով) — Աչքերդ կարմրած են, օր առնելու պէտք ունիս: Եկուր, առտուան զովութիւնը քեզ պիտի բժշկէ հրատուրդը զիշերէդ:

Չե՛ր. (Քիթթի Պէլին գալը դիտելով) — Տարուկոյս չկայ որ այս կինը՝ շատ դժբաղդ է:

Ք-եյ. — Ատիկա մեր գիտնալու բանը չէ: Կ'ուզէի որ իր սենեակէն դուրս ելլելու միջոցին՝ մարդ չգտնուէր հոս: Տո՛ւր սենեակիդ բանալին: Այստեղ կը դնեմ քիչ յետոյ՝ երբ գայ հոս, կը գտնէ: Ընտանեկան ներքին բաներ կան, որ մարդ չտեսնել ձեռացնելու է: Դուրս ելլենք: Ահա կուգայ:

Չե՛ր. — Ա՛հ, ինչպէս կուլայ կոր: Իրաւունք ունիք... չեմ կրնար տեսնել ատիկա... Երթանք:

Տ Ե Ս Ա Բ Ա Ն Ձ.

Քիթթի Պէլ (Ներս կը մտնէ լալով). Ճժժ Պէլ (կուգայ ետեւէն):

Ք. Պէլ. (Ռաշէլին, զէնիկա մտցնելով այն սենեակը, ուրկից դուրս կ'ելլէ) — Գնա եղբորդ քով, Ռաշէլ, և զիս հոս ձգէ:

(Ամուսնոյն) Հազար անգամ կը խնդրեմ, մի՛ պահանջեր որ ըսեմ թէ այդ քիչ մը դրամը ինչո՞ւ կը պակի հաշիւին մէջ. վեց սակի, ինչ է քեզի համար: Նկատէ որ կրնայի ծածկել այդ բանը՝ հաշիւները խեղաթիւրելով: Բայց ես անկարող եմ խարդախութիւն մը գործելու, նոյն իսկ զաւակներս ազատելու համար. և նախընտրելի քենէ խնդրել որ ինծի թոյլ տաս այդ մասին լուրթիւն պահելու, չկարենալով ոչ ճշմարտութիւնը ըսել, ոչ ալ ստել՝ առանց չար գործ մը կատարած ըլլալու:

Ճ. Պէլ. — Այն օրէն ի վեր ուր երէցը ձեռքդ իմ ձեռքիս մէջ դրաւ, այս կերպով դեռ չէիր դիմադրած ինծի:

Ք. Պէլ. — Նուիրական պատճառ մը կայ ուրեմն:

Ճ. Պէլ. — Կամ մեղաւորութիւն:

Ք. Պէլ. (Չայրոյթով) Անկարելի է որ ըսածիդ համոզուած ըլլաս:

Ճժ՝ Պէլ. — Թերևս:

Ք. Պէլ. — Գթնա՛ ինծի. կը սպաննես զիս այսպիսի վարմունքներով:

Ճ. Պէլ. — Հոգ մ'ընէր. կարծածէր աւելի ուժով ես:

Ք. Պէլ. — Մի՛ կարծեր...: Ի սէր մեր խեղճ զաւակներուն...

Ճ. Պէլ. — Ուր որ գաղտնիք կայ, յանցանք կայ՝ ինծի համար:

Ք. Պէլ. — Հապա եթէ իմանայիր որ բարի գործ մըն է եղածը, չըպիտ ցաւէիր:

Ճ. Պէլ. — Եթէ բարի գործ մըն է, ինչո՞ւ կը ծածկես:

Ք. Պէլ. — Ինչո՞ւ: Վասն զի քու սիրող կարծրացեր է, և պիտի արգիլէիր զիս իմ սրտիս ձայնին հետեւելու: Եւ սակայն, ապքատին ողորմողը Աստուծոյ փոխ կուտայ:

Ճ. Պէլ. — Աւելի աղէկ կ'ընես եթէ լաւ գրաւականներու վրայ՝ տոկոսով փոխ տաս:

Ք. Պէլ. — Աստուած թող ներէ քեզի այդ զգացումներդ ու խօսքերդ:

Ճ. Պէլ. (Սենեակին մէջ մեծաբայլ քայլելով). —

Ժամանակէ մը ի վեր՝ շատ կը կարգատ կոր . չեմ
ախորժիր որ կին մը այդ ունակութիւնն ունենայ :
Գրագիտութիւնը ըլլալու միտք ունիս :

Ք. Պէլ. — Ինչո՞ւ չար բաներ կ'ընես ինձի՝
որովհետեւ՝ առաջին անգամ ըլլալով՝ առանց վերա-
պահման չեմ հնազանդիր քեզի : Պարզ ու սկար կին
մըն եմ ես և ուրիշ ոչինչ : Ու քրիստոնէական
պարտականութիւններէս զատ ոչինչ զիտեմ :

Ճ. Պէլ. — Պարտականութիւնները գիտնալ ու
չկատարել , սրբապղծութիւն է :

Ք. Պէլ. — Շնորհ ըրէ որ քսանի մը շաբաթ
լուծիւն պահեմ այս հաշիւներուն վրայ , և առա-
ջին խօսքը որ բերնես պիտի ելլէ՝ ճշմարտութիւնը
քեզի ուշ ըսելու համար ներողութիւն խնդրող խօսք
մը պիտի ըլլայ : Եւ այն ատեն ճիշդ ու ճիշդ պիտի
պատմեմ ըրածս :

Ճ. Պէլ. — Կ'ուզեմ որ բան մը չունենաս ծած-
կելու :

Ք. Պէլ. — Աստուած գիտէ որ կեանքիս մէջ
մէկ վայրկեան մը չկայ որուն յիշատակը կարենայ
զիս կարմրցնել :

Ճ. Պէլ. — Եւ սակայն մինչև հիմա բան մը
չէիր ծածկած ինձմէ :

Ք. Պէլ. — Շատ անգամ՝ սարսափը մեզի ստել
կը սորվեցնէ :

Ճ. Պէլ. — Ուրեմն գիտես ստել :

Ք. Պէլ. — Եթէ գիտնայի ստել , միթէ կը
խնդրէի որ չհարցուփորձես զիս : Անողորմ՝ դատաւոր
մըն ես դուն :

Ճ. Պէլ. — Անողորմ : Այդ դրամին հաշիւը պէտք
է տաս ինձի :

Ք. Պէլ. — Կը խնդրեմ որ մինչև վաղը ինձի
ժամանակ տաս :

Ճ. Պէլ. — Լա՛ւ . մինչև վաղը ասոր խօսքը
չպիտի ընեմ :

Ք. Պէլ. (Անոր ձեռքը կը համբուրէ) — Ա՛խ ,
բարի ես դուն : Ինչո՞ւ այդպէս չես մնար միշտ :

Ճ. Պէլ. — Լա՛ւ , լա՛ւ . վաղը , մի՛ մոռնար :
(Դուրս կ'ելլէ)

Ք. Պէլ. (Միայնակ) — Ինչո՞ւ , ամուսնոյս ձեռքը
բռնած ատենս , այդ Աստուածաշունչը պահած ըլլալս
ինքզինքիս մեղադրեցի : Խղճմտանքին ձայնը երբեք
չի սխալիր (Կը մոմտայ) : Պէտք է դարձընեմ այդ
գիրքը : (Դուրս կ'ելլէ յամբաքայլ) :

ԱՐԱՐՈՒԾ ԵՐԿՐՈՂ

Նոյն տեղը

ՏԵՍԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ

Քուեյքը , Չորրորդը

Չե՛ր. (Ներս կը մտնէ շուտով , կարծես փախչե-
լով) . — Վերջապէս , նաւահանգիստը հասանք :

Քուեյ. — Ի՞նչ ունիս , բարեկամ . յանկարծական
խենթութիւն մըն է որ վրադ եկաւ :

Չե՛ր. — Շատ աղէկ գիտեմ թէ ինչ կ'ընեմ :

Քուեյ. — Ինչո՞ւ ուրեմն այդպէս մէկէն ի մէկ
տուն վազեցիր :

Չե՛ր. (յուզուած) — Կը կարծէք որ տեսաւ :

Քուեյ. — Ձին մեր կողմը չդարձուց , և ոչ իսկ
զուլը դարձնելը տեսայ : Իր երկու սպասաւորները
ձիերնին քշեցին ետեւէն զայցին : Բայց ինչո՞ւ խոյս
կուտաս այդ երիտասարդէն :

Չե՛ր. — Ապահով էք որ զիս չձանջցաւ :

Քուեյ. — Եթէ երբում ընելը ամբարշտ սովո-
րութիւն մը չըլլար , կրնայի երգուրնալ :

Չե՛ր. — Շունչ կ'առնեմ : Գիտեք որ բարեկամ
ներէս մէկն է : Լորտ Թէլպոթն է :

Քուեյ. — Ի՞նչ կ'ըլլայ : Բարեկամ մը ուրիշ մարդէ
մը աւելի չար չէ :

Չե՛ր. (Նեղարտութեամբ՝ մեծաքայլ քալելով) . —
Եթէ զիս տեսնէր , ատկէց աւելի գէշ բան չէր կրնար
գալ զիսուս : Ա՛լ սպասաւորանս բռնաբարուած ,
խաղաղութիւնս վրդովուած , անունս հոս ամենուն
յայտնուած էր :

Քուեյ. — Ի՞նչ մեծ դժբաղդութիւն :

Չե՛ր. — Գիտեք թէ ինչ է անունս , որ այդպէս
կը դատեք :

Քուեյ. — Տղայական բան մը կայ այդ վախիդ
մէջ . վայրենի մըն ես պարզապէս , բայց եթէ
շարունակես՝ ոճրագործ մը պիտի կարծուիս :


Չե՛ր. — Ա՛խ , ինչո՞ւ դուրս ելայ ձեզի հետ :
Վստահ եմ որ տեսաւ զիս :

Քուեյ. — Շատ անգամ տեսած եմ զինքը հոս՝
որսէ դառնալուն այստեղ կուգայ :

Չե՛ր. — Ինքը :

Քուեյ. — Այո՛ , ինքը , իրեն բարեկամ երիտա-
սարդ յորտերու հետ :

Չե՛ր. — Գրուած է ուրեմն որ զլուխս անդ մը



չպիտի կրնամ հանգչեցնել : Միշտ բարեկամներ . . .

Քո-է. — Մարդ շատ դժբաղդ ըլլալու է այս խօսքն ըսելու աստիճանին հասած ըլլալու համար :

Չե՛րբ. (Նեղարտութեամբ) Երբէք այնքան դանդաղ քալած չունէիք՝ որքան այսօր :

Քո-էյ. — Հն՛, հիմակ ալ իմ վիզս փաթթէ յուսահատութիւնդ : Խեղճ աղայ. ոչինչ կրցաւ միաբոյժ զբաղեցնել՝ այս սրտոյտին մէջ : Բնութիւնը մեռած է քու աչքերուդ :

Չե՛րբ. — Կը կարծէք որ տիկին Պէլ շատ բորեւալաշտ ըլլայ : Ինձի այնպէս կը թուի թէ Աստուածաշունչ մը տեսայ ձեռքը :

Քո-էյ. (Կտրուկ) — Այդպէս բան չտեսայ ես : Կին մըն է որ իր պարտականութիւնները կը սիրէ և Աստուծոյ կը վախնայ, բայց ձեռքը ո և է գիրք չտեսայ : (Մեկուտի) Ուրտեղուանքն է խելքը... Ի՛նչպէս կը համարձակի այդպիսի բան մը մտածել... Աւելի աղէկ է որ ինքզինքը ծովը նետէ քան այդ ձիւղին փաթթուի : (Բարձրաձայն) Շատ ցուրտ կին մըս է, որ կը յուզուի միայն իր դակներուն համար՝ երբ հիւանդ են : Մնած օրէն ի վեր կը ճանչնամ զինքը :

Չե՛րբ. — Հարիւր ոսկի գրաւ կը դնեմ, որ լորտ Թէլպոթին այստեղ պատահիլը փորձանք պիտի բերէ զխուս...

Քո-էյ. — Ի՛նչպէս կարելի է :

Չե՛րբ. — Ձեմ գիտեր ինչպէս, բայց պիտի տեսնէք որ խօսքս ձիշդ պիտի ելլէ : Եթէ այս կինը մարդ մը սիրէր, լաւագոյն պիտի ըլլար որ այդ մարդը ուզեղը պայթեցնէր քան թէ զայն զլխէ հանէր : Ահաւի բան կ'ըլլար, այնպէս չէ, եթէ զայն զլխէ հանէր :

Քո-էյ. — Մէկ հատ գաղափար մը չէս կրնար ունենալ որ յուսահատութեան չջանգի :

Չե՛րբ. — Անխուսափելի դժբաղդութիւն մը կը զգամ շուրջս : Վարժուած եմ ատոր : Այ չեմ գիմարեր : Պիտի տեսնէք. հետաքրքրական տեսարան մըն է : Հանգիստս գտած էի այստեղ. բայց թշնամիս հոս ալ պիտի գայ զիս հալածել :

Քո-էյ. — Ի՛նչ թշնամի :

Չե՛րբ. — Անուանեցէք ինչպէս կ'ուզէք. Բաղդ ճակատագիր. Թնչ դիմամբ :

Քո-էյ. — Կրօնքի ծամբէն կը հեռանաս կոր.

Չե՛րբ. (Անոր մօտ կ'երթայ և ձեռքը կը բռնէ), Կը վախնաք որ գեշութիւն մը յառաջ կը բերեմ հոս : Մի վախնաք : Տղու պէս անփնաս եմ ես : Տոքթէօր, անշուշտ երբեմն ժանտախտէ կամ բորոտութենէ

բռնուած մարդիկ տեսած էք : Ձեր առաջին փափաքը եղած է բնականաբար մարդաբնակ տուններէն հեռացնել զանոնք : Հեռացուցէք զիս ալ, վանեցէք զիս, և կամ մինակ ձգեցէք զիս : Նախամեծար պիտի համարիմ ես ինքս զատուիլ քաշուիլ՝ քան թէ իմ դժբաղդութիւնս ուրիշներուն փոխանցել :

(Վերջացած որսապտոյտի մը աղաղակներ և մտրակի հարուածներ կը լսուին) Տեսէք, ահա այսպէս կը հալածեն մեծներ վարաղը :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Չեքրտրոն, Բուռնյաբըր, Ճօն Պեյ, Քիթթի Պեյ

Ճօն Պեյ. (Իր կնոջը) — Գէշ բան ըրիր, Քիթթի, ինձի չըսելով թէ բարձրաստիճան անձնաւորութիւն մըն է եղեր այդ երկատարը :

(Սպասաւոր մը թէյ կը բերէ)

Ք. Պեյ. — Ի՛նչ կ'ընես : Իրաւ որ, չէի գիտեր,

Ճ. Պեյ. — Շատ բարձրաստիճան : Լորտ Թէլպոթ ինձի լուր զրկեր է թէ այդ անձը իր բարեկամն է, և երևելի մարդ մը որ չ'ուզեր ճանչցուիլ :

Ք. Պեյ. — Ա՛խ, սերեմն ալ դժբաղդ չէ : Շատ ուրախ եմ : Բայց չեմ ուզեր խօսիլ իրեն հետ. թող սուր երթամ :

Ճ. Պեյ. — Կեցիր, կեցիր : Հրաւիրէ զինքը որ տոքթէօրին պէս ինքն ալ մեզի հետ մնայ թէյ առնելու. լորտ Թէլպոթին հաճոյք պատճառած կ'ըլլանք այդպէսով :

(Կ'երթայ կը նստի աջ կողմը, թէյի սեղանին մօտ).

Քո-էյ. — (Չէթըրթընին, որ շարժում մը կ'ընէ իր սենեակը քաշուելու համար). Չէ, չէ, մի՛ երթար. քու վրադ կը խօսին կոր :

Ք. Պեյ. (Բուռնյաբըրին). — Բարեկամս, կը հաճիք բարութիւնն ունեցող պարոնին հարցնելու թէ կ'ուզէ ամուսնոյս ու զուգընդու հետ նախաձաշել :

Քո-էյ. — Աղէկ չէք ըներ զինքը հրաւիրելով չ'ախորժիր հրաւերներէ :

Ք. Պեյ. — Ամուսինս է ուզողը :

Քո-էյ. — (Հեգնաբար) Իր կամքը ամենագոր է : (Չէթըրթընին) Տիկինը քեզ կը հրաւիրէ նախաձաշի և կը փափաքի որ այս առտու թէյը իրենց հետ մեկտեղ առնես : (Ցած ձայնով, Չէթըրթընին). Մի՛ ընդունիր. ամուսնոյն հրամանովն է որ այս հրաւերը կ'ընէ. իր ուղելով չէ :

Ճ. Պեյ. (Նստած, լրագիրը կարդալով, Քիթթիին կ'ուղղէ խօսքը). — Հրաւերը եղաւ :

ասան երէ մը զոր դեռ առիթ չենք ունեցած բռնելու: (Լորտերը խնդալէն կը մարին)

Չե՛ր. (Արագ կը մտնեայ լորտ Թելպոթին, կէս-ձայնով) -- Ճորձ, այս բոլոր ըսածներդ թեթևութիւն են. ես չեմ ախորժիր: Դուն գիտես իմ բնաւորութիւնս: Յիշէ Փրիմրոզ-բլուրը: Որսէ դառնալու՞ քեզ ըսելիք ունիմ:

Լորտ Թելւ. (Սարսափած) -- Ա՛, եթէ նորէն ատրճանակով խողալու միտք ունիս, թող ուզածդ ըլլայ: Ես կը կարծէի թէ քեզի հաճոյք կը պատճառէի: Սիրող կոտորեցի՛ արդեօք. քիչ մը շատկէկ խմցինք այս առտու: Բայց ի՛նչ ըսի որ... Ուզեցի քեզ ամենուն հետ մտերմական յարաբերութեան մէջ դնել: Սա անուշիկ կնկանը համար է որ հոս ես եկած, անանկ չէ: Աչքէս բան չի փախիր:

Չե՛ր. — Մի՛րորս, մի՛րորս, ըսածդ չես գիտեր կոր:

Լորտ Թելւ. — Հասկցանք. գէշ արթնցեր է այս առտու: Տիկին Պէլ, կանանչ թէյէն մի՛ տաք իրեն. կ'ելլէ կը սպաննէ զիս այս իրիկուն:

Ք. Պէլ. (Մեկուսի) -- Տէր Ատուած, ի՛նչ լրբութեամբ կը խօսի հետս:

Լորտ Լորտ. (Կուզայ Չէթրթրինի ձեռքը սեղմել). Եստ ուրախ եմ ձեզ ճանչնալուս. ձեր ոտանաւորները զիս շատ զուարճացուցած են:

Չե՛ր. -- Չուարճացուցած:

Լորտ Լորտ. -- Այո՛, շատ. և ուրախ եմ ձեզ հոս տեղաւորուած տեսնելով. դուք աւելի ճարպիկ էք փրթեր քան Թելպոթը, գրաւ վաստկիլ պիտի տաք ինծի:

Լորտ Քիւկ. -- Այո՛, այո՛, որքան ալ իր սովիները ամուսնոյն գրպանը թափէ Թելպոթ, պիտի չյաջողի ձեռք անցընել փոքրիկ Քէթրինը, կամ ինչպէս կ'ըսեն հոս, Քիթթին...

Չե՛ր. Այո՛, Քիթթի, Քէթրինի համառօտութիւնը:

Ք. Պէլ (Մեկուսի) -- Նորէն: Այդ երիտասարդները մատով զիս ցոյց կուտան, և անոր առջև...

Լորտ Քիւկ. — Կարծեմ թէ Թելպոթին զործը պիտի վերջ ի վերջոյ յաջողէր. բայց դուք անոր տեղը բռնեցիք: Իրաւ է որ ճորձ բարի տղայ է և ատոր համար ձեզի դեմ որս չպիտի պահէ: Անհանգիստ կ'երևաք:

Չե՛ր. — Այո՛, մանաւանդ այս վայրկեանիս:

Լորտ Թելւ. — Բաւական է, պարոններ, բաւական է, չափը մի՛ անցընէք:

(Երկու կրուսներ ներս կը մտնեն)

Լորտ Թելւ. (Ճօն Պէլի ուսին զարնելով) - Սիրելիս Ճօն Պէլ, ֆրանսական և սպանիական էն աղէկ գինիները ձեր բարեպաշտ խաթունիկ կնկանը տանը մէջ կը գտնուին: Որսէ դառնալուս՝ պիտի խմենք այդ գինիները, և անձարակ ըսէք ինծի եթէ տասը աղուէս չբերեմ՝ էնոր մուշտակ շինելու համար: Եկէք մեր ճամբայ ելլելը զիտեցէք: Ձեռք վերջը, Լաուտրրաէյ, կ'աղաչեմ, անցէք: Յտեսութիւն, տիկնայք և տեսրբայս իրիկուն, եթէ Ռեպէքքա ձիս զլիսուս փորձանք մը չբերէ:

Ճ. Պէլ. — Պարոն Չէթրթրին, մեծապէս երջանիկ եմ ձեզի հետ ծանօթանալուս: (Չեռքը ուժով կը սեղմէ՝ ուր կոտորելու աստիճան) Ամբողջ տունս ձեր տրամադրութեան տակ է:

(Քիթթին, որ իր սենեակը քաշուելու վրայ է) Քէթրին, չխօսիս քիչ մը այս պարսնին հետ: Պէտք է աւելի աղուոր և աւելի սուղ սենեակ մը տալ իրեն:

Ք. Պէլ. — Չաւակներս ինծի կը սպասեն:

Ճ. Պէլ. — Կեցիր, կեցիր. քաղաքավար եղիր. խօսքս մտիկ ըրէ:

Չե՛ր. (Քուէյքըրին) — Դուրս ելլենք սըտեղէն: Վերջին ապաստանարանդ կոխուած տեսնել, միակ հանգիստդ խռովուած, քաղցր անձանօթութիւնդ մատնուած, գիշերիդ մէջ այսքան կոպիտ լոյսերու արշաւելը տեսնել, ի՛նչ չարչարանք...: Երթանք, կ'աղաչեմ: Չըսի՛ ձեզի:

Ճ. Պէլ. (Քուէյքըրին) Պէտք ունիմ ձեզի, տոքթէօր. պարոնը կնոջս հետ ձգեցէք. անպատճառ պէտք ունիմ ձեզի. խօսելիք ունիմ: Ձեզ պիտի հաշտեցնեմ նորին Վսեմութեան հետ:

Քուէյ. — Դուրս ելլելու փափաք չունիմ:

(Ամենքը դուրս կ'ելլեն: Քուէյքըրը կը մնայ նստած՝ տեսարանին մէջտեղը: Քիթթի և Չէթրթրին ոտքի վրայ, աչքերնին գետինը՝ շուարած):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ

Չեթրթրն, Քուէյքըրը, Քիթթի Պէլ

Քուէյ. — (Քիթթի Պէլին) (Չէթրթրին ձախ ձեռքը կը բռնէ և իր ձեռքը անոր սրտին վրայ կը դնէ).

Երիտասարդ, պարզ և նախնական սրտերը դեռ չեն գիտեր զսպել այն բուռն զայրոյթները զոր կը ներշնչէ մարդոց տեսքը: Տղան, խեղճ տղաս. միայնութիւնը շատ վտանգաւոր սէր մը կը դառնայ: Այդ միմնորոտին մէջ ապրելէ յետոյ, մարդ այլևս չի կրնար ամենափոքր օտար շունչ հանդուրժել:

Կեանքը փոթորիկ մըն է, բարեկամս, պէտք է վարժուիլ ծովուն դիմանալու: Յաւալի բան չէ, տիկին Պէլ, որ իր տարիքին մէջ՝ պէտք զգայ նաւահանդիստ մը քաշուելու: Պիտի ձգեմ որ խօսիք իրեն և յանդիմանէք զինքը:

Ք. Պէլ (վրդոված). — Չէ, բարեկամս. կեցէք, կ'աղաչեմ: Ծօն Պէլ կը նեղանայ եթէ քիչ յետոյ ձեզ հոս չգանէ: Եւ արդէն, պարոնը միթէ չի փափաքիր երթալ իր մանկութեան բարեկամներուն միանալ: Զարմացած եմ որ անոնց հետ չզնայ:

Քոռէյ. — Անոնց հանած աղմուկը քեզ շատ ձանձրացուց, այնպէս չէ, սիրելի աղջիկս:

Ք. Պէլ. — Ա՛, թէ իրենց աղմուկը, թէ իրենց դիտաւորութիւնները. անոնք անշուշտ իրենց ամէն գալտնիքը կ'ըսեն պարոնին:

Չէթ. — (Մեկուսի). Լսեր է անոնց ըսածները... ու վշտացած կ'երևայ... Առաջուան կինը չէ, փոխուած է...

Ք. Պէլ. — (Քուէյքըրին, քիչ մը զսպուած յուզմունքով մը). Կը զգամ, բարեկամս, որ դեռ բաւական մինակ ապրած չեմ:

Քոռէյ. — (Քիթթի Պէլին). Շատ կարևորութիւն մի՛ տար յիմարութիւններու:

Ք. Պէլ. — Ահաւաստիկ զիրք մը զոր աղջկանս ձեռքը տեսայ: (Քուէյքըրին) Հարցուցէք պարոնին թէ իրը չէ արդեօք այս զիրքը:

Չէթ. — Այո՛, իմն էր. ու հիմա, շատ գոհ պիտի ըլլայի եթէ նորէն ձեռքս անցնէր:

Ք. Պէլ. — (Մեկուսի). Շատ մեծ փափաք ցոյց կուտայ զիրքը՝ ձեռքէս ընդունելու: Աստուած իմ՛, ալ հիմա չպիտի համարձակիմ զիրքը իրեն զարձնել, ոչ ալ պահել:

Քոռէյ. — (Մեկուսի). Խեղճ կինը շուարած կ'երևայ:

(Աստուածաշունչը կ'առնէ ձեռքէն և գրպանը կը դնէ, երկուքին ալ շուարումը դիտելէ յետոյ: — Չէթըրթընին). Սնու եղիր, կ'աղաչեմ: Տես, լալուն մաղ մը մնացած է:

Ք. Պէլ. — (Ինդինքը բռնելով) Պարոնը շատ գուարթ և անշուշտ շատ ալ բարի բարեկամնր ունի:

Քոռէյ. — Ա՛, զինքը չմեղադրենք. ինքը բնաւ փափաք չունէր այդ բարեկամները տեսնելու:

Ք. Պէլ. — Գիտեմ, Պ. Չէթըրթըն չէր սպասեր անոնց հոս գալուն:

Չէթ. — Մահացու թշնամի մը ներկայութիւնը այդքան աղիտաբեր պիտի չըլլար, հաւատացէք, տիկին:

Ք. Պէլ. — Անոնք շատ լաւ ծանօնալու ձև ունին Պ. Չէթըրթընը, մինչդեռ մենք չ'անցնանք քիչ կը ծանօնանք զինքը:

Քոռէյ. — (Կէս ձայնով, Չէթըրթընին). Ա՛, թըշուառականները: Չինքը սրտէն խոցեր են:

Չէթ. — (Քուէյքըրին). Հապա զիս:

Ք. Պէլ. — Պ. Չէթըրթըն անշուշտ անոնց վարքին ծանօթ է ինչպէս անոնք ծանօթ են իր ծրագիրներուն: Բայց ինչպէս բացատրեցին անոնք պարոնին այստեղ բնակիլը:

Քոռէյ. — (Ոսքի կ'ելլէ). Կետնին տակը անցնին արտերու վրայ յարձակող սա մարախները, զոր «ախորժելի» մարդ կ'անուանեն: Տեսէք սրբան չարիք հասուցին մէկ բոպէի մէջ:

Չէթ. — (Քուէյքըրը նստեցնելով). Աստուծու սիրոյն, զուրս մի՛ ելլէք մինչև որ չզրկանամ թէ ինչ ունի ինձի դէմ: Ահաւաստի կերպով վրդովուած եմ:

Ք. Պէլ. — Պ. Պէլ յանձնարարեց ինձի որ Պ. Չէթըրթընին աւելի վայելուչ սենեակ մը տամ:

Չէթ. — Ո՛չ, իմ սենեակս ամենէն յարմարն է իմ ծրագիրներուս:

Ք. Պէլ. — Բայց մարդ երբ իր ծրագիրները գաղտնի կը պահէ, վերջ ի վերջոյ աւելի վախ կը ներշնչէ քան ինչ որ համակրութիւն կը ներշնչէր առաջ, և ես...

Չէթ. — Եւ... ինչ...

Ք. Պէլ. — Ինձի կը թուի թէ...

Քոռէյ. — Ի՛նչ ըսել կ'ուզես:

Ք. Պէլ. — Թէ այդ երիտասարդ լորտերը կերպով մը իրաւունք ունին զարմանալու որ իրենց բարեկամը զիրենք ձգած ըլլայ՝ իր անունն ու կեանքը մերիկին պէս պարզ ընաանիքի մը մէջ ծածկելու համար:

Քոռէյ. — (Չէթըրթընին). Մի՛ խռովիր, բարեկամ. ըսել կ'ուզէ թէ, այստեղ եկած ատենդ, այդ հարուստ լորտիկներուն հարուստ բարեկամն ըլլալու ձեռ չունէիր:

Չէթ. (Մանրութեամբ) — Եթէ այստեղ ինձի հարցնէին նիւթական վիճակս, անունս և կեանքիս պատմութիւնը, ոտքս այս տունէն ներս չէի դնէր... Եթէ այսօր ալ՝ մէկը ատոնց մասին ինձի հարցում մը ուղղէ, անմիջապէս կը ձգեմ կ'երթամ:

Քոռէյ. — Լուութիւն մը որ հպարտութեան արդիւնք է, կրնայ գէշ մեկնուիլ, ինչպէս կը տեսնես:

Չէթ. (Կ'ուզէ պատասխանել, յետոյ ետ կը կենայ այդ մտքէն և կը գոչէ). — Չարջարանք մը աւելի՛ մարտիրոսութեան մը մէջ, ինչ փոյթ:

(Իր սենեակը կը բաշտի փախչելով):

Ք. ՊԵԼ. (Սարսափած). Ա՛հ, Աստուած իմ. ինչո՞ւ փախաւ այդպէս: Առաջին անգամն է որ իրեն հետ կը խօսիմ, և խօսքերս ցաւ պատճառեցին իրեն... բայց յանցանքը իմն է... ինչո՞ւ եկաւ հոս... չեմ հասկնար... և կ'ուզեմ գիտնալ: Ամբողջ տունս տեղս տակնուվրայ եղած է իրեն համար և իր պաշտօնով: Ի՛նչ եմ ըրած այդ ամենուն: Ինչո՞ւ զինքը ուրիշ տեղ չտարիք և հոս բերիք: Երանի թէ երբեք երեցած չըլլայի, և այդ մարդիկը երբեք տեսած չըլլայի:

Քոռեյ. — (Անհամբերութեամբ ու ցաւով). Բայց միմիայն ինծի ըսելու էիր ատիկա: Ես ոչ կը վշտանամ՝ ոչ կը ցաւիմ: Բայց անոր ըսելը մեծ սխալ էր:

Ք. ՊԵԼ. — Բայց, բարեկամս, լսեցիք այդ երիտասարդներուն ըսածները: Աստուած իմ, ինչպէս կ'ըլլայ որ անոնք կարող կ'ըլլան այսպէս վրդովելու կեանք մը զոր Յիսուս ինքն իսկ պիտի օրհնէր: Ըսէք, դուք որ մարդ մըն էք, դուք որ այդ չար դատարկապորտներէն չէք, դուք որ ծանրզուլս էք ու բարի, դուք որ կը հաւատար ճշգրիտ և Աստուծոյ գոյութեան, ըսէք, բարեկամս, կին մը ինչպէս ապրելու է: Ո՛ւր պահուրտելու է: Լուռ կը կենայի, աչքերս միշտ գետինը կը ծռէին, առանձնութիւնը քօղի մը պէս վըրաս ձգած էի, և պատուեցին այդ քօղը: Կը կարծէի թէ գոյութիւնս մէ՛կը չէր գիտեր, և իբրև իրենց մէկ կինը կը նկատեն եզեր զիս, կը կարծէի թէ յարգուած եմ, և գրաւի մը առարկան եմ եղեր: Ի՛նչ օգուտ ունեցան իմ երկու զաւակներս որ միշտ քովս եմ պահած պահապան հրեշտակներու պէս: Ի՛նչ օգուտ ունեցաւ իմ խորին առանձնացումս: Այ՛ որ կինը պիտի յարգուի, եթէ ես չկրցայ յարգուիլ, և եթէ կը բաւէ որ երիտասարդներ կնոջ մը փողոցէն անցնիլը տեսնեն՝ որպէս՝ զի անոր անունը ամբողջին անցընեն և խաղան անով ու գնդակի պէս զայն իրարու նետեն . . .

(Զայնը կը կտրի: Կուլայ):

Այս, բարեկամս, բարեկամս. կրցածնիդ ըրէք, որ ալ անգամ մըն ալ ոտք չկոխեն իմ տունս:

Քոռեյ. — Ո՛վ:

Ք. ՊԵԼ. — Անոնք, անոնք բոլորն ալ... ամենքն ալ...

Քոռեյ. — Ի՛նչպէս...

Ք. ՊԵԼ. — Ան ալ... այն, ան ալ:

(Կը հեծկտայ)

Քոռեյ. — Կ'ուզես ուրեմն սպաննել զինքը: Վերջապէս, ինչ է ըրած:

Ք. ՊԵԼ. (Խորապէս յուզուած) Օ՛հ, Աստուած իմ, ես զինքը սպաննել... ես որ կ'ուզէի... Տէր Աստուած, դուն որուն անդադար կ'ալօթեմ, դուն զիսես թէ ես կ'ուզեմ սպաննել զինքը. բայց ես քեզի կը խօսիմ, օւ չեմ գիտեր թէ կ'իմանան զիս... Սիրաս քեզի կը բանամ, ու դուն չես ըսեր ինծի թէ կը կարգան ինչ որ կայ հոն գրուած: Եւ եթէ քու աչքդ կարգացած է հոն գրուածը, ինչպէս գիտնամ թէ զժոհն ես կամ ոչ: Այս, բարեկամս... բան մը ունիմ հոս (սիրտը ցոյց տալով) որ կ'ուզէի ըսել... Այս, եթէ հայրս ողջ ըլլար...

(Թուէյքըրին ձեռքը կը բռնէ)

Այն, վայրկեաններ կան ուր կ'ուզէի կաթողիկ ըլլալ, որովհետև խոստովանանք ունին անոնք: Վերջապէս, ուրիշ բան չէ ան եթէ ոչ սիրտը բանալ. բայց աստուածայնացած սիրտ բանալ մը պէտք ունիմ ատոր:

Քոռեյ. — Աղջիկս, եթէ խիղճդ և աղօթքներդ քեզի բաւական նեցուկ չեն, ինչո՞ւ ինծի չես դիմեր:

Ք. ՊԵԼ. — Լուռ, բացատրեցէք ուրեմն ինծի թէ ինչո՞ւ այդ երիտասարդը կը վրդովէ զիս, ինչո՞ւ կամքիս հակառակ՝ արցունք կը թափեմ զինքը տեսնելով, այն, միմիայն տեսնելով:

Քոռեյ. — Ո՛վ կին, տկար կին: Աստուծու սիրոյն, արցունքներդ ծածկէ: Ահա ինքը, կուգայ կոր:

Ք. ՊԵԼ. — Աստուած իմ, ինչպէս դեմքը այլայլած է:

Զեմբը. (Ներս կը մտնէ, խենթի պէս, առանց գլխարկի: Սենեակին մէկ ծայրէն միւսը կը քալէ, ու կը խօսի, առանց մէկը տեսնելու)

... Եւ արդէն, և արդէն, անոնց հարստութիւնն ալ իրենցը չէ, ինչպէս այս սենեակը իմն չէ: Աշխարհ՝ բնա մըն է միայն: Մէկ խօսքով կարելի է աշխարհս կորսնցնել կամ շահիլ, մէկ քառորդ ժամու մէջ: Չկայ բան մը որ մերն ըլլայ՝ բաց ի վեց սոնաշափ հողէն ուր պիտի պառկինք. մեր Շէյքսպիրը հայրն է ըսած ասիկա: Սենեակնիդ պիտի դարձընեմ՝ ձեզի՝ երբ որ ուզէք. աւելի պղտիկ սենեակ մը եթէ ունիք՝ ան տուէք ինծի: Սակայն կ'ուզէի դեռ սպասել նամակի մը պատասխանին. թերևս յաջողի: Բայց ալ խօսքը չընենք ատոր: (Թիկնաթոռի մը մէջ կը նետուի):

Քոռեյ. (Ոտքի կ'ելլէ և անոր մօտ կ'երթայ, անոր անոր գլուխը բռնելով. կէս ձայնով) Լուէ, բարեկամս, լուէ: Հանդարտեցուր հրատաճար գլուխդ: Թող որ յուզմունքներդ լուութեամբ անցնին, և մի՛ ահաբեկեր սա երիտասարդ կինը որ օտար է քեզի:

Զեմբը. (Յանկարծ ոտքի կ'ելլէ՝ «օտար» բառին, և թրթուռն հեզութեամբ մը կ'ըսէ). — Աշխարհին վրայ

հիմա չկայ մէկը որ ինձի օտար չըլլայ: Ամենուն առջև, պէտք է բարեւեմ ու լուծմի Երբ խօսիմ, շատ անպատշաճ յանգհուութիւն մը ըրած կ'ըլլամ, և որուն համար խոնարհաբար ներողութիւն խնդրելու եմ. քիչ մը հանգիստ միայն կ'ուզէի գտնել այս տան մէջ, քանի մը երես բան՝ որ պարտական եմ գրել՝ իրաւրու հետ կարելու չափ ատեն գտնել. այն, պարտական եմ այդ քանի մը երեսը գրել և սալ, ինչպէս ատաղձադործը պարտական է երեւագործին յանձնել՝ տաժանքով յղկուած քանի մը տախտակ: Գրքի գործաւոր եմ ես. այսքան: Ունեցածէս աւելի մեծ աշխատանոցի պէտք չունիմ, և Պ. Պէլլի սիրտը չափազանց շարժած կ'երևայ լորտ Թէլլոյի ինձի ցոյց տուած բարեկամութենէն: Այս տան մէջ կրնան սիրել լորտ Թէլլոյի, հասկանալի է: Բայց իր ինձի համար ունեցած բարեկամութիւնը ոչինչ է: Անիկա կը կրթնի հին գաղափարի մը վրայ զոր մէկ բառով կրնամ ջնջել, հին թուանշանի մը վրայ զոր իր մտքէն պիտի սրբեմ հանեմ, և զոր հայրս իր պատանքին ծալքերուն մէջ առաւ հետը տարաւ. բաւական խոշոր թուանշան մը, ճիշդ է, և որուն շնորհիւ ամենքը ինձի խոնարհութիւն կ'ընէին, ամենքը ձեռքս կը սեղմէին: Բայց այդ բոլորը վերջացած է. ես գրքի գործաւոր եմ: Մնաք բարով, տիկին: Մնաք բարով, պարոն: Հն, հն: Ժամանակ կը կորսնցնեմ կոր: Աշխատելու է, աշխատելու է:

(Մեծաբայ վեր կ'ելլէ սանդուղէն ու կը փակուի իր սենեակը):

S. Ե Ս Ա Ր Ա Ն Ե

Քուռյո՛րր , Քիթթի Պէլ (սարսափահար)

Ք. Ե. — Սարսափով լեցուած ես, այնպէս չէ, Քիթթի:

Ք. Պէլ. — Այն:

Ք. Ե. — Ես ալ:

Ք. Պէլ. — Դուք ալ: Դուք որ այնքան ուժով էք, դուք որուն երբեք յուզուիլը չեմ տեսած: Աստուան իմ, ինչ կայ այստեղ որ չեմ կրնար կոր հասկընալ: Այս երիտասարդը մեզ ամենս խաբեց. իբրև աղքատ եկաւ հոս ապրեցաւ, և սակայն հարուստ է եղեր: Այդ լորտերը իրեն հետ ինչպէս հաւասարի մը հետ խօսեցան: Ի՞նչ ընելու եկաւ հոս. ինչ ուզեց՝ իր վրայ արգահատանք հրաւիրելով: Եւ սակայն ինչ որ կ'ըսէ՝ ճշմարիտ կը թուի, և ինքը՝ շատ դժբաղդ կ'երևայ:

Ք. Ե. — Աղէկ կ'ըլլար որ այս երիտասարդը մեռնէր:

Ք. Պէլ. — Մեռնի՛... Ինչո՞ւ:

Ք. Ե. — Որովհետև լաւագոյն է մահը քան վիճակութիւնը:

Ք. Պէլ. — Ուրեմն կը կարծէք թէ... Այն, մահը իր կողմէս վրաս...

(Կ'իյնայ աթոռին վրայ)

Ք. Ե. — Ամենէն ուժեղ բանականութիւնը պիտի չկարենար դիմանալ իր կրած տառապանքին: Պէտք է ամբողջ մտածումս քեզի լսեմ, Քիթթի Պէլ: Երկնքին մէջ հրեշտակ մը չկայ որ քեռէ աւելի մաքուր ըլլայ: Նայուածքը դոր Տիրամայրը կ'արձակէ իր որդույն վրայ՝ աւելի անարատ չէ քան քու նայուածքը: Եւ սակայն առանց ուզելուդ՝ դուն շատ չարիք ըրիր քու շուրջը:

Ք. Պէլ. — Աստուան իմ. կարելի՞ բան է:

Ք. Ե. — Մտիկ ըրէ, կ'աղաչեմ. ինչպէս չարիքը կը ծագի բարիքէն և անկարգութիւնը կարգաւորութենէն, ահա ինչ որ դուն չես կրնար ըմբռնել, այնպէս չէ: Գիտցիր ուրեմն, սիրելի աղջիկս, որ ստոր համար բաւական եղաւ քու մէկ նայուածքը, ներշնչուած՝ ամենէն գեղեցիկ առաքինութենէն որ Աստուծոյ աջակողմը կը գահէ, գթութենէն: Այս երիտասարդը որուն միտքը չափազանց կանուխ հասունցած է բանաստեղծութեան կրակներուն տակ՝ ինչպէս հրակէզ ջերմոցի մը մէջ, աղու մը միամիտ սիրտը պահած է: Ընտանիք չունի այլ ևս, և անգիտակցաբար իրեն համար ընտանիք մը կը փնտրէ, վարժուեցաւ հոս քու իր մօտը ապրելը սեսնելու, և թերևս վարժուեցաւ նաև քու տեսքէդ ու մայրական շնորհէդ ներշնչուելու: Բաղադրութիւնը որ կը տիրէ քու շուրջը՝ այնքան վտանգաւոր է եղած այդ երազուն մտքին համար որքան քունը ձերմակ բրաբիտին տակ: Յանցանքը քուկդ չէ, եթէ, ամէն կողմէ վտարուած, ինքզինքը երջանիկ է կարծած՝ բարեացակամ ընդունելութիւն մը գտնելով. բայց վերջապէս այս լուիկ ու խորունկ համակրութեան կեանքը իր ամբողջ կեանքը եղած է: Կը կարծես թէ իրաւունք ունիս գայն իրմէ խլելու:

Ք. Պէլ. — Աւնդ. կը կարծէք ուրեմն թէ մեզ չէ խաբած:

Ք. Ե. — Լույսս տասնըութը տարեկանէն աւելի էր, Քիթթի: Ու չէս կարգար Ձեթըրթընի ձակտին վրայ՝ թշուառութեան երկչոտութիւնը: Ես մինչև յատակը սուզած եմ այդ թշուառութեան. խորունկ է ան:

Ք. Պէլ. — Աստուան իմ. ո՞վ գիտէ որքան ցաւ պատճառեց իրեն քիչ մը առաջ ըսածս:

Քո-եյ. — Իրաւունք ունիք, տիկին:

Ք. Պեւ. — Տիկին: Ախ, մի՛ նեղանաք: Եթէ պիտանայիք թէ ինչ ըրած եմ և թէ ինչ ընել մտադիր էի:

Քո-եյ. — Կ'ուզէի գիտնալ:

Ք. Պեւ. — Պ. Ձեթըրթընին համար քանի մը գումարներ իմ կողմէս վճարած եմ, և ամուսնոյս չեմ յայտնած: Դեռ չստացայ իրմէ այդ գումարները, ու բերանս ալ յառաջ չէր երթար ուզելու: Ամուսինս եղածը գուշակեց: Ճիշդ այս միջոցիս, թերեւս այս մասին պիտի խօսէի այդ երիտասարդին: Օ՛հ, որքան շնորհակալ եմ որ զիս ետ կեցուցիք այդ չարագործութենէն: Այո՛, ըրածս ոճիր մը պիտի ըլլար՝ ապահովապէս, այնպէս չէ:

Քո-եյ. — Ինքն իսկ պիտի նախընտրէր ոճիր մը գործել քան թէ ձեզի գոհացում՝ չտալ, տարակոյս չունիմ՝ այդ մասին, գիտեմ թէ որքան խրոխտ է: Ձգուշուկեամբ վարուինք հետը, աղջիկս: Բոլորովին բարոյական և գրեթէ անբուժելի հիւանդութենէ մը բռնուած է, որ երբեմն փոխանցիկ ալ է. ահաւոր հիւանդութիւն որ կը յարձակի մանաւանդ երիտասարդ, կրակոտ և կեանքի մէջ դեռ նոր բացուած հոգիներուն վրայ, որոնք արդարութեան ու գեղեցկութեան սիրովը վառուած են, և որոնք այս աշխարհս կուզան՝ հոն ամէն քայլի հանդիպելու համար գէշ յօրինուած ընկերութեան մը բոլոր անիրաւութիւններուն ու բոլոր տգեղութիւններուն: Այդ հիւանդութիւնը՝ կեանքի ատելութիւնը և մահուան սէրն է, յամառ անձնասպանութիւնն է:

Ք. Պեւ. — Ախ, Աստուած թող ներէ իրեն: Իրաւ կ'ըսէք:

(Գլուխը կը ծածկէ ձեռքերուն մէջ ու կուլայ):

Քո-եյ. — Յամառ կ'ըսեմ, որովհետեւ հազուադէպ է որ այդ դժբաղդները հրաժարին իրենց ծրագրէն երբ հեղ մը իրենց մտքին մէջ վճռուած է ան:

Ք. Պեւ. — Ուրեմն այդ վիճակին արդէն հասնած է: Ապահով էք: Ամէ՛ն բան ըսէք ինձի: Ձեմ ուզեր որ մեռնի: Ի՛նչ ըրած է. ինչ է ուզածը: Այդքան երիտասարդ... երկնային հոգի մը. հրեշտակի պէս բարի, աղու պէս պարզամիտ. մաքրութեամբ համակ շողացող այսպիսի հոգի մը ոճիրներու ոճիրին մէջ իյնայ, այն ոճիրը որուն Քրիստոս անգամ պիտի վարանէր ներել: Չէ, այդ բանը սեղի չպիտի ունենայ. ան ինքզինքը չպիտի սպաննէ: Ինչ պէտք է իրեն. դրամ: Ես կը գտնեմ: Տեղէ մը հարկաւ կը ձարենք իրեն համար: Նա՛, ահա գոհարեղէններ, որ երբեք չեմ հաճած կրել. առէք, ծախեցէք բոլորն

ալ: Ինքզինքը սպաննել, հո՛ս, իմ ու զակներուս առջև: Ծախեցէք, ծախեցէք. ես բան մը կը գտնեմ ըսելու: Նորէն կը ծածկեմ՝ ըրածս. վերջապէս ես ալ իմ ոճիրս կը գործեմ, կը ստեմ: Այսքան:

Քո-եյ. — Ձեռքերդ, աղջիկս, ձեռքերդ. տուր, պաշտեմ՝ գանոնք:

(Էնոր երկու ձեռքերը միացնելով կը համբուրէ) Քու յանցանքներդ անմեղ են, և քու սորմանձ ստուծիւնդ ծածկելու համար, սրբուհիները՝ քոյրերդ՝ իրենց քօղերը պիտի տարածէին. բայց պահէ գոհարեղէններդ. ան այնպիսի մարդ մըն է որ քսան անգամ կը նախընտրէ մեռնիլ քան ընդունիլ ոսկի մը որ ինքը չէ վաստկած կամ իր ընտանիքէն չէ ստացած: Գիտեմ որ չպիտի յաջողիմ՝ որքան ալ մաքաւիմ՝ զինքը բուժել իր միակ յանցանքէն, մուլութիւն մը որ գրեթէ առաքինի է, աղնիւ պակասութիւն, վսեմ մեղք, աղքատութեան հպարտութիւնը:

Ք. Պեւ. — Բայց նամակի մը խօսքը ըրաւ, այնպէս չէ, նամակ մը գրեր է անձի մը որմէ օգնութիւն կը յուսայ:

Քո-եյ. — Ա, ձիշդ է: Ատիկա վրիպած էր իմ մտքէս, բայց քու սիրտդ զայն լսեր է: Այո՛, ատի փրկութեան խարխիս մըն է. իրեն հետ ատոր պիտի կրթնիմ: (Կ'ուզէ դուրս ելլել)

Ք. Պեւ. — Բայց... ինչ կ'ուզէիր ըսել՝ լստ Թէլպոթի մասին խօսելով. « Անիկա կրնան սիրել այս տան մէջ, հասկանալի է »:

Քո-եյ. — Միտք մի՛ յոգնեցներ այդ խօսքին վրայ: Իրեն պէս միտք մը՝ իր աշխատութեանց ու նեղութիւններուն մէջ խորատուզուած, անմատչելի է նախանձոտ սրտնեղութեան մը գձձութիւններուն, և առաւել ևս՝ այդ արկածախնդիր պարուններուն սնտոի ինքնահաւանութիւններուն: Ի՛նչ ըսել կրնայ ուզել այդ խօսքը: Պէտք էր ուրեմն ենթադրել թէ ան կը նկատէ յորա Թէլպոթը իբրև քիթթի Պէլը զլսէ հանել ջանացող և յաջողելու մձոտ, և ենթադրել թէ Ձեթըրթըն իրաւունք կը կարծէ ունենալ ասկից նախանձ զգալու. ենթադրել ուրեմն թէ այդ մտերմական հրապոյրը իր մէջ արդէն տարփանքի է փոխուած... Եթէ այդ այդպէս է...

Ք. Պեւ. — Օ՛հ, ալ բան մը մի՛ ըսէք ինձի... ձրեցէք փախչիմ...

(Կը փախչի ականջները զոցելով, Քուէյքըրը անոր ետևէն բարձրաձայն կ'ըսէ)

Քո-եյ. — Եթէ այդ այդպէս է, կը նախընտրէի թողուլ որ մեռնի:

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ց Ե Ր Ր Ո Ր Գ

Չեքրըրընի սենեակը, մութ, փոփոխի, աղ-
ֆասիկ, առանց կրակի. ողորմելի անկողին մը՝
սակնուփայ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

Չեքրըրըն, Առանձին

(Անկողինն սոքի կողմը նստած է և ծուկներուն
վրայ կը գրէ:)

Ապահով եմ որ էն դիւ չի սիրեր: — Իսկ ես...
նալ չեմ ուզեր մտածել այդ մասին: — Չեռքերս սառ
կտրած են. գլուխս կրակներու մէջ է: Ա՛հա միս մի-
նակ եմ աշխատութեանս դիմացը: Ա՛լ խնդրը ժպ-
տելու և բարի ըլլալու, բարեկուր և ձեռք սեղմելու
վրայ չէ. այդ բոլոր կատակերգութիւնը խաղացուած
է. հիմա ուրիշ կատակերգութիւն մը պէտք է խա-
ղամ ինքզինքիս հետ. պէտք է, այս պահուս, որ
կամքս բաւական զօրաւոր ըլլայ՝ և կարենայ հոգիս
բռնել տանիլ վերակենդանացած զիակին մէջ այն
անձնաւորութեանց զոր գերեզմանէն դուրս կը հա-
նեմ և ուրուականին մէջ այն անձերուն զոր կը
հնարեմ: Եւ կամ պէտք է որ հիւանդ Չէթըրթընին,
անօթի ու ցուրտէն փառացած Չէթըրթընին առջև՝
կամքս յաւակնոտաբար կանգնեցնէ ուրիշ Չէթըր-
թըն մը, հասարակութիւնը դուարձացնելու համար
վայելչաջնորդ կերպով զարդարուած, և այս վերջինը
նկարապրոփ առաջնոյն ձեռքով, աշուղը՝ մուրաց-
կանին ձեռքով: Ա՛հա այն երկու տեսակ բանաստեղ-
ծութիւնները որ կարելի են ինծի համար, ասակց
անդին չեմ կրնար անցնիլ: Զուարճացնել զիրենք կամ
իրենց գութը շարժել. ողորմելի պէպէքներ խաղցնել
կամ իմ անձս իսկ պէպէք մը ընել և այս կապիւ-
թեամբ դրամ վաստկիլ: Միրաս բանալ և հաշուաւե-
զանի մը վրայ ի տես դնել: Եթէ վերքեր ունի, աւե-
լի լաւ, զինը կ'աւելնայ. եթէ քիչ մը յօշոտուած է,
նալ աւելի մեծ գին տալով ծախու կ'առնեն: (Ոտքի
կ'ելլէ) Ոտքի ելիր, արարսնձ Աստուծոյ, որ ռնոր
նմանութեամբն ես շինուած. ելիր այս վիճակին մէջ
ալ հիացիր վրադ: (Կը խնդայ ու նորէն կը նստի:
Հին ժամացոյց մը՝ պատէն կախուած՝ կէս ժամ մը
կը հնչէ, երկու հարուած):

Չէ, չէ:

Ժամը որ կը հնչէ՝ քու պարտքդ կը յիշեցնէ քեզի.
նստէ և աշխատէ, ողորմելի: Ժամանակդ կը կոր-
սնցնես՝ խորհրդածելով. մէկ հատիկ խորհրդածու-
թիւն մը ունիս ընելու, այն է թէ աղքատ ես: Կ'ի-
մանաս. աղքատ

Մտածիրովման ամէն մէկ վայրկեանդ՝ զողութիւն
մըն է. ապարդիւն վայրկեան մըն է: Գաղափար,
ինչ արժէք ունի գաղափարը. բառն է որ դրամ կը
բերէ: Կայ բառ որ մինչև մէկ շիլին կրնայ բերել.
մտածումը՝ հրապարակին վրայ՝ չ'անցնիլ:

Օ՛հ, հեռու ինձմէ, կը պաղատիմ, հեռու ինձմէ,
նով սառուցիկ վհատութիւն: Ո՛վ ինքնարհամարհանք,
զիս բողբոլիմ մի՛ կործաներ. մէկզի գնա. մէկզի
գնա, որովհետև հիմա անուսն ու բնակութեան տե-
ղըս, ամէն բանս յայնուուած է. և եթէ վաղը այս
գիրքը աւարտած չըլլայ, կորսուած եմ, այն, կորսու-
ած, անցոյս կերպով կորսուած. պիտի ձերբակալ-
ուիմ, դատուիմ, գատապարտուիմ, բանտ դրուիմ:

Ո՛վ ստորնացում... նով ամօթալի աշխատանք:
(Կը գրէ, յետոյ կը շարունակէ խօսիլ) Ապահով եմ
որ այդ կինը զիս երբէք պիտի չսիրէ: Բայց ինչո՞ւ
ատոր կը մտածեմ նորէն:

(Երկայն լուծիւն:)

Ո՛րքան կորսնցուցեր եմ հպարտութեանս՝ որ դեռ
ատոր կը մտածեմ: Բայց թող լսեն ինծի թէ նալ
ինչո՞ւ հպարտութիւն ունենամ: Հպարտութիւն ինչ
բանի: Ոչ մէկ աստիճանի վրայ ոչ մէկ տեղ չեմ
բռներ: Եւ ապահովապէս՝ զիս կանգուն պահողը այս
բնական խրոխտութիւնն է: Ան միշտ ականջս ի վար
կը պոռայ որ չկքիմ և դժբաղդի ձև չունենամ: Բայց
որո՞ւ համար է որ մարդ երջանիկ կը ձևանայ՝ երբ
երջանիկ չէ: Կարծեմ կիներուն համար է. ամենքս
ալ էնոնց առջև միշտ բան մը կը ձևացնենք: Խեղճ
արարածներ, էնոնք քեզ գահ մը կը կարծեն, նով հան-
րածանօթութիւն, զազիր հանրածանօթութիւն, դուն
որ ուրիշ բան չես բայց եթէ անարգութեան սիւն
մը որուն վրայ ո և է անիրազեկ անցորդ կարող
է մեզ ապտակել: Ընդհանրապէս, կիները կը սիրեն
այն որ մէկուն առջև գլուխ չի ծուր: Իրաւունք ունին:
Գոնէ, սա կինը որուն աչքերը վրաս են՝ գլուխ
ծուր կը երբէք չպիտի տեսնէ: Ա՛խ, եթէ սիրէր զիս...

(Անձնատուր կ'ըլլայ երկայն երագանքի մը, որմէ
յանկարծ դառն կերպով կը սթափի):

Գրէ, ողորմելի, կամքդ արթնցնուր: Ինչո՞ւ այդ-
քան տկար է: Դեռ չկրցաւ առաջ մղել այդ ապրու-
տամբ միտքը զոր կը զրգուէ բայց որ կը կասի: Ա՛հա
նոր նուատացում մը ինծի համար: Մինչև հիմա,
ան միշտ իր տիրոջմէն առաջ ձամբայ կ'ելլեր. սանձ
մը պէտք էր. և այս իրիկուն, խիճանի պէտք ունի:
Ինչ, դուն՝ անմահ, դուն հուժկու տէրը այս մարմնոյն,
սէզ Միտք, անդամալուծուած ես արդեօք սա գար-
շելի մառախուղէն որ այս քայքայուած սենեակէն

ներս կը թափանցէ. ո՛վ գոռոզ, կը բաւէ ուրեմն քիչ մը պաղ գոլորշի՝ քեզ նուաճելու համար:

(Անկողնոյն ծածկոյթն իր ուսերուն վրայ կը նետէ):

Թանձր մառախուղ, պատուհանիս դուրսը տա-
րածուած է՝ ձերմակ վարագոյրի մը նման, պատան-
քի մը նման: Այսպիսի մառախուղ մը տարածուած էր
հորս պատուհանին առջև՝ այն գիշերը որ մեռաւ:

(Ժամացոյցը կը հնչէ երեք քստորդ:)

Նորէն: Ժամանակը կ'անցնի. և դեռ ոչինչ
գրուած է:

(Կը կարդայ):

«Հէրոլտ, Հէրոլտ... Տէր Աստուած, Հէրոլտ...
Ուիլիըմ՝ դուքսը...»

Բայց ինչ կապ ունի ինձի հետ այս Հարոլտը,
կ'աղաչեմ: Ձեմ կրնար հասկնալ թէ ինչպէս գրե-
ր եմ ասիկա: (Խօսելով՝ ձեռագիրը կը պատռէ: Քիչ մը
գառանցանքի մէջ կ'իջնայ:)

Կաթոլիկի հոգի մը ուղեցի դգեհուլ. ստեցի: Եթէ
իրօք կաթոլիկ ըլլայի, պէտք էր վանականի, թրա-
փիսթի կեանքն ընդգրկէի: Թրափիսթը դադաղ մը
ունի իբր անկողին, բայց գոնէ կը քնանայ այնտեղ:
Քոյր մարդիկ անկողին մը ունին ուր կը քնանան.
ես ունիմ անկողին մը ուր կ'աշխատիմ՝ դրամ՝
վաստկելու համար:

(Ձեռքը գլխուն կը տանի):

Ո՛ւր կ'երթամ... ո՛ւր կ'երթամ՝ այսպէս... բառը
իր ետևէն կը քաշէ զօռով կը բերէ գաղափարը:
Ո՛վ երկինք: յիմարութիւնը այսպէս չէ որ կը յառա-
ջանայ... Ահա բան մը որ ամենէն քաջն իսկ կարող է
ահաբեկել: Հերթ է, հանդարտէ: Սըփկա աչքէ կ'ան-
ցընէի կոր... Այո՛... այս քերթուածը պէտք եղածին
չափ աղւոր չէ... Ծուռ գրուած է... Ապրելու հա-
մար գրուած է: Ո՛վ չարչարանք: Հէսթինկոսի պա-
տերազմը... հինաուրց Սաքսոնները... նորածագ
Նորմանները... միթէ ասոնք կը հետաքրքրեն զիս:
Ոչ: Ուրեմն ինչո՞ւ եմ խօսեր ասոնց մասին: Երբ
այնքան բան ունիմ տեսածներուս վրայ ըսելու:

(Ոտքի կ'ելլէ և մեծաքայլ կը քայլէ):

Պաղ մոխիրներ արթնցնել, երբ ամէն բան կը
սարսուայ ու կը տառապի շուրջս. երբ Առաքի-
նութիւնը «օգնութիւն» կ'աղաղակէ և լալէն հո-
գի՞ն բերանն է եկած. երբ տժգոյն Աշխատութիւնը
արհամարհուած է, երբ Յոյսը կորսնցուցած է իր
խարխիւը, Հաւատքը՝ իր բաժակը. Մէրը՝ իր խեղճ
դակները. երբ Օրէնքը անատուած է և ապակա-
նած՝ բողբ մը պէս. երբ Երկիրը կը պոռայ և ար-

դարութիւն կը պահանջէ բանաստեղծէն՝ անոնց դէմ
որոնք անոր ծոցն անդադար կը խուզարկեն իր ու-
կին խելու համար, և իրեն կ'ըսեն թէ առանց Եր-
կընքի կրնայ ապրիլ: Եւ ես, որ ասիկա կը զգամ,
չպատասխանեմ անոր: Այո՛, Աստուած վկայ, պիտի
պատասխանեմ: Պիտի կոխտում՝ չարերն ու կեղծա-
ւորները: Դիմակագերծ պիտի ընեմ՝ Ճերեմիա-
Մայլը և Ուարթընը:

Ա՛հ. ողորմելի: Բայց... Երգիծանքն է ասիկա:
Չար կ'ըլլաս կոր:

(Կուլայ երկարօրէն՝ դառնամիրմոք):

Աւելի լաւ է գրես սա մառախուղին վրայ որ
պատուհանիդ առջև տեղաւորուեր է՝ ինչպէս տեղա-
ւորուած էր հորդ պատուհանին առջև:

(Կը լռէ: Սեղանին վրայէն ծխատուփ մը կ'առնէ):

Ահա՛ հայրս: Ահա՛, դուն ես, բարի ծեր նաւաղ,
աներկիւղ զինուոր-նաւապետ: Գիշերը՝ կը քնանայիր
գուն, ցորեկը կը կռուէիր. խելացի փարիս մը չէիր
ինչպէս եղաւ քու խեղճ գաւակը: Կը տեսնես,
կը տեսնես այս ձերմակ թուղթը. եթէ վաղը ան
լեցուած չ'ըլլայ, բանա պիտի երթամ, հայրիկս, և
գլխուս մէջ մէկ բառ մը չեմ գտներ կոր՝ այս թուղ-
թը մ'րոտելու համար, որովհետեւ անօթի եմ: Հաց
ճարելու համար, ծախեցի աղամանդը որ կար այս
տուփին վրայ՝ ինչպէս աստղ մը քու աղւոր ձակ-
տիդ վրայ: Ու հիմա, հիմա, աղամանդն ալ չունիմ,
և անօթի եմ նորէն: Եւ քու հպարտութիւնդ ալ
ունիմ, հայրիկս, որով մէկուն չեմ ըսեր անօթի ըլ-
լալս: Բայց դուն որ ծեր էիր և գիտէիր թէ դրամ
պէտք է ապրելու համար և թէ դուն դրամ չունէիր
ինձի ձգելու, ինչո՞ւ ծնար զիս:

(Կը նետէ սուփը: Յետոյ, ետևէն կը վազէ,
ճուղի կուգայ և կուլայ):

Ախ, ներէ, ներէ, հայրիկս, ձերմակ մազերով
իմ ծերուկ հայրիկս: Ա՛յնքան անգամ՝ զիս ճուղկե-
րուղ վրայ առած ու համբուրած ես: Իմն է յան-
ցանքը. բայց կ'անպահովեմ քեզ թէ իմ անունս բանտ
պիտի չերթայ: Կ'երգնում, իմ ծերուկ հայրիկս: Տես,
ափիոն ունիմ՝ հոս. եթէ անօթութիւնս շատնայ...
կերակուր չպիտի ուտեմ... պիտի խմեմ:

Մէկը ծանր քայլերով վեր կ'ելլէ իմ փայտէ
սանդուխէս: Մածկենք այս գանձը:

(Ափիոնը կը ծածկէ):

Բայց ինչո՞ւ: Ազատ չեմ: Աւելի ազատ քան եր-
թէք: Կատոն իր նուրը ճծածկեց Մնայիր ինչպէս որ
ես, Հռոմայեցիք՝ և զլուխդ բարձր բռնէ:

(Ափիոնը սեղանին մէջտեղը կը դնէ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ .

Ձեռնարկ , Բռնեյքեր

Բռնեյ . (Ափիոնի սրուակը նկատելով) . — Ա :

Ձեռն . — Ի՛նչ կայ :

Բռնեյ . — Կը ճանչնամ՝ այդ հեղուկը : Ասոր մէջ՝ էն քիչը վաթսուն հատիկ կայ ափիոնի : Ասոր կայ քեզի պիտի տայ տեսակ մը խանդավառութիւն , որ նախ բաւական հաճելի պիտի ըլլայ քեզի՝ իբր բանաստեղծ , և յետոյ քիչ մը զառանցանք , ու յետոյ լաւ քուն մը շատ ծանր և առանց երազի , ապահով եղիր : Գուն երկայն աստեղ մինակ ես մնացեր , Ձեթըրթըն :

(Բռնեյքերը սրուակը նորէն սեղանին վրայ կը դնէ . Ձեթըրթըն գոգտուկ կ'առնէ գայն) :

Ձեռն . — Եւ եթէ ուզեմ՝ յաւիտեան մինակ մնալ , չունիմ այդ իրաւունքը :

Բռնեյ . — (Կը նստի անկողին վրայ . Ձեթըրթըն կանգուն կը մնայ , աչքերը սևեռուն և դժնեհայեայ) : Հեթանոսները այդպէս կ'ըսէին :

Ձեռն . — Թող ինծի տան մէկ ժամ երջանկութիւն , և անստողիտ քրիստոնեայ մը պիտի ըլլամ : Ինչ որ... ինչ որ կը վախնաք , ստոյիկեանները գայն կ'անուանէին բանաւոր ելի :

Բռնեյ . — Ճիշտ է , և նոյն իսկ կ'ըսէին թէ մեզ կեանքին կապող պատճառները շատ ուժեղ ըլլալով , կարելի էր անկից բաժնուիլ մինչև անգամ թեթև պատճառներու համար : Բայց , բարեկամս , պէտք է նկատել թէ բազմ յաճախ կը փոխուի և շատ բան կարող է ընել , և թէ , բան մը եթէ կարող է ընել , ողջերուն համար է միայն որ կարող է :

Ձեռն . — Բայց մեռածի մը դէմ ալ ոչինչ կրնայ ընել . ես կ'ըսեմ թէ ան աւելի չարիք կ'ընէ քան բարիք , և անխելութիւն չէ անկից փախչիլ :

Բռնեյ . — Իրաւունք ունիս : Միայն թէ աստիկա քիչ մը վախկոտ ընթացք մըն է : Երթալ՝ անկից վախնալով խոշոր քարի մը տակ , մեծ ծակի մը մէջ պահուելով , վատութիւն է :

Ձեռն . — Դուք կը ճանչնաք շատ վառեր որ ինքզինքնին սպաննած ըլլան :

Բռնեյ . — Ներոնը հերիք է :

Ձեռն . — Ես չեմ հաւատար անոր վատութեանը : Ազգ մը վատերը չի սիրեր . և կայսրի միակ անունն է ատ՝ որ ժողովրդական է դարձած Իտալիոյ մէջ :

Բռնեյ . — Ատիկա ցոյց կուտայ թէ ի՛նչ տեսակ բան է ժողովրդականութիւնը : Բայց , արդէն , բնաւ քեզի հետ հակաձառու է չէ միտքս : Աղէկ կ'ընես քու ծրագրիդ հետեւելով , որովհետեւ աստիկա քու ոտխ-

ներուդ մեծ հաճոյք պիտի պատճառէ : Անոնց մէջ պիտի գտնուին այնպիսիներ որ բաւական ամբարիշտ պիտի ըլլան մահոյ խեղիատակ ձեռով մը պատմելով հասարակութիւնը զբոսցնելու համար : Եւ ինչ որ անոնք երբէք չպիտի կարենային ընել , դուն կ'ընես անոնց համար . կ'անհետանաս : Աղէկ կ'ընես՝ անոնց ձգելով քու բաժինդ այդ փառքի անամէջ սակորէն զոր ամենքդ կը կրծէք : Վեհանձն է վարմունքդ :

Ձեռն . — Ինծի աւելի կարևորութիւն կուտաք քան ինչ որ կ'արժեմ : Ո՞վ գիտէ անունս :

Բռնեյ . (Մեկուսի) — Այդ լարը դեռ կը թըրթրուայ կոր : Տեսնենք արդիւնք մը կրնամ քաղել անկից : (Ձեթըրթընին) Անունդ՝ ճիշդ ծածկել ուզած ըլլալուդ համար՝ շատ աւելի ծանօթ է ամէն տեղ :

Ձեռն . — Իրաւ : Գոհ եմ ատիկա զիտնալուս : Լաւ , ուրեմն մահուընէս յետոյ աւելի ազատօրէն պիտի արտասանեն գայն :

Բռնեյ . (Մեկուսի) Բոլոր ճամբաները զինքը իր սեւեռեալ գաղափարին կ'առաջնորդեն : (Բարձրաձայն) Բայց ինծի այնպէս երեցաւ այս առաւ թէ բան մը կը յուսայիր նամակէ մը :

Ձեռն . — Այս , նամակ մը՝ զրած էի լորս քաղաքապետին , Պ . Պէքֆորտին , որ բաւական մտերմական յարաբերութիւն ունեցած է հօրս հետ : Ես անգամ ինծի առաջարկած էին որ իր պաշտպանութեանը դիմեմ , միշտ մերժած էի , որովհետեւ չեմ ատրոթիր պաշտպանեալ մը ըլլալ : Յոյսս գաղափարներու վրայ դրած էի՝ ապրելու համար : Ի՛նչ յիմարութիւնս Երէկ անոնք ամենքն ալ զիս լքեցին . մէկ հատ մը միայն մնաց , պաշտպան ըսուած բանը փորձել :

Բռնեյ . — Պ . Պէքֆորտ Լոնտոնի ամենէն պարկեշտ մարդը և ամենէն լուսամիտներէն մին կը համարուի : Լաւ ես ըրեր : Ինչո՞ւ ես կը կենաս հիմա այդ գաղափարէն :

Ձեռն . — Մարդ մը տեսայ անկից ի վեր , և այդ տեսներս բաւեց :

Բռնեյ . — Ինեթ մը տեսներէն յետոյ խելօք մը տեսներն ալ փորձէ : Ի՛նչ կը կորսնցնես :

Ձեռն . — Բայց ինչո՞ւ այդ յապաղումները : Երևակայութեան մարդիկը յաւիտենապէս կը խաչուին . հեղուկութիւնը և թշուառութիւնը իրենց գամերն են : Ինչո՞ւ կ'ուզէք որ ուրիշ գամ մըն ալ միտի մարմնոյս մէջ , — պարապ տեղը ստորնացած ըլլալու խղճի խնայելու : Կ'ուզեմ բանաւորապէս դուրս ելլել :

Բռնեյ . — (Ոտքի կ'ելլէ) . Թող Տէրը ներէ ինծի ինչ որ պիտի ընեմ հիմա : Մտիկ ըրէ : Ձեթըրթըն , ես շատ ծեր եմ , ես քրիստոնեայ եմ , և Քրիս-

տոսի տիեզերական Հանրապետութեան ամենէն մաքուր աղանդին կը պատկանիմ: Իմ ամբողջ կեանքս եղբայրներուս հետ խոկման, սիրոյ և աղօթքի մէջ անցուցած եմ: Յանուն Աստուծոյ, ճշմարիտ բան մը պիտի ըսեմ՝ քեզի, և ատիկա ըսելով՝ քեզ ազատելու համար՝ իմ ձերմակ մագերուս վրայ արատ մը պիտի դնեմ:

Չէթըրթըն, Չէթըրթըն, կրնաս քու հոգիդ կորսնցընել, բայց իրաւունք չունիս երկու հոգի կորսնցընելու: Արդ, կայ հոգի մը որ քու հոգիդ կապուած է և զոր քու դժբաղդութիւնդ դէպ ի քեզ քաշեց՝ ինչպէս Սկովտայիք կ'ըսեն թէ յարդը իրեն կը քաշէ ճաճանչաշող աղամանդը: Եթէ դուն մեռնիս, էն ալ պիտի մեռնի. և ճիշդ քեզի պէս, առանց երկնահաճոյ վիճակի մը մէջ գտնուելու, յաւիտենապէս անարժան՝ Աստուծոյ առջև երևալու:

Չէթըրթըն, Չէթըրթըն, դուն կրնաս յաւիտենականութեան մասին տարակուսիլ. բայց էն չի տարակուսիր. դուն պիտի դատուիս՝ քու դժբաղդութիւններդ և յուսահատութիւնդ ի նկատի առնուելով, և կրնաս մեղքիդ թողութիւն յուսալ. բայց ոչ էնիկա, որ երջանիկ էր և բոլորովին քրիստոնեայ: Տղոս, ահա ծունկ չոքած կ'աղաչեմ որ գրիսս էնոր, որովհետև այս աշխարհիս վրայ էն ինծի համար զաւկի պէս է:

Չէթը. — Աստուծո՛ւմ իմ. բարեկամս, հայրս, ինչ ըսել կ'ուզէք... Արդեօք... ոտքի ելէք... կ'ամչցնէք զիս... Արդեօք...

Քո-էյ. — Գրո՛ւ, վասն զի եթէ դուն մեռնիս, էն ալ պիտի մեռնի...

Չէթը. — Բայց ո՞վ, ո՞վ...

Քո-էյ. — Որովհետև էն մարմնով և հոգիով տկար է, սրտովը միայն ուժեղ:

Չէթը. — Անունը տուէք... կրնայի երբէք կարծել...

Քո-էյ. — (Ոտքի կ'ելլէ). Եթէ երբէք իրեն ըսես այս գաղտնիքը, զաւաճան մը կ'ըլլաս: Այն ատեն անձնասպանութեան պէտք չես ունենար. ես կը սպաննեմ քեզ:

Չէթը. — Ուրեմն...

Քո-էյ. — Այո՛, իմ հին բարեկամս, քու տանտիրոջդ կ'ինը... այն աղուոր տղաքներուն մայրը:

Չէթը. — Բիթթի Պէլը:

Քո-էյ. — Կը սիրէ քեզ. տղաս: Կ'ուզես հիմա ինքզինքդ սպաննել:

Չէթը. — (Քուէյքըրի բազուկներուն մէջ իյնալով). Անո՛ղ, ուրեմն այլ ևս ոչ ապրիլ կրնամ, ոչ մեռնիլ:

Քո-էյ. — (Կորովի շեշտով մը). Պէտք է ապրիլ, լուել և աղօթել Աստուծոյ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

(Առաջին արարուածին տեղում)

Քիթթի Պէլ. Բուէյքըրը

Ք. Պէլ. — (Առանձին, դուրս կ'ելլէ իր սենեակէն և սրահին մէջ չորս կողմը կը նայի). Մտրդ չկայ: Ելէք, զաւկներս:

Մարդ երբէք ծածուկ բան ընելու չէ, բայց ի միայն երբ բարեգործութիւն մը կ'ընենք:

Շնուտ, գացէք իր սենեակը, տարէք իրեն... (Քուէյքըրին). Հիմա կուգամ, բարեկամս, հիմա կուգամ ձեր ըսելիքը լսելու. (իր զաւկներուն) Տարէք իրեն ձեր բոլոր պտուղները: Մի՛ ըսէք որ ես եմ ձեզ զրկողը, և վեր ելած ատեննիդ աղմուկ մի՛ հանէք:

(Երկու տղաքը, կազով մը բռնած, կամաց կամաց վեր կ'ելլեն սանդուղէն և Չէթըրթընի սենեակը կը մտնեն):

Շատ լնւ: Ապրիք:

(Երբ արդէն վերն են ու սենեակը մտած են, դառնալով՝ Բուէյքըրին).

Ուրեմն կը կարծէք, բարեկամս, թէ լոլո-քաղաքապետը պիտի օգնէ իրեն: Օ՛հ, բարեկամս, պատարաստ եմ ընելու ինչ որ խորհուրդ տաք ինծի:

Քո-էյ. — Այո՛, պէտք պիտի ըլլայ որ քիչ ատենէն երթայ ուրիշ տուն մը բնակի, թերևս իսկ Լոնտոնէն դուրս:

Ք. Պէլ. — Օրհնեա՛լ ըլլայ այն տունը ուր ան երջանիկ պիտի ըլլայ, քանի որ չի կրնար երջանիկ ըլլալ իմ տանս մէջ: Բայց թող ապրի՛, ատիկայ հերիք է ինծի:

Քո-էյ. — Հիմա այդ որոշման մասին պիտի չխօսիմ իրեն. կամաց կամաց պիտի զինքը պատարաստեմ ատոր:

Ք. Պէլ. — (Վախ ցոյց տալով որ Բուէյքըրը իր առաջարկը չընդունի). Եթէ կ'ուզէք, ես խօսիմ իրեն՝ այդ մասին:

Քո-էյ. — Չէ. դեռ շատ կանուխ է:

Ք. Պէլ. — Բայց եթէ, ինչպէս կ'ըսէք, իրեն համար պարզապէս սովորած մէկ տեղէն հեռանալ մըն է...

Քո-էյ. — Անշուշտ. շատ վայրենի է: Հեղինակները միմիայն իրենց ձեռագրերնրը կը սիրեն... սիրաբ մէ՛կուն կապուած չէ. մէ՛կը չիսիրեր... բայց կանուխ է դեռ:

Ք. Պէլ. — Ինչո՞ւ կանուխ ըլլայ, քանի որ կը

կարծէք թէ իր այստեղ գտնուելը այնքան աղե-
տաբեր է:

Ք-եյ. — Այո՛, այդ է կարծիքս: Ըստձս ետ չեմ
առներ:

Ք. Պէլ. — Սակայն, եթէ պէտք է, պատրաստ
եմ հիմա հոս ըսել իրեն ատկա:

Ք-եյ. — Ձէ, չէ, եթէ հիմա ըսես, շատ
գէշ կ'ըլլայ արդիւնքը:

Ք. Պէլ. — (Գոհ) Ուրեմն, բարեկամս, ընդու-
նեցէք որ, եթէ հոս մնայ, չեմ կրնար հետը գէշ
վարուիլ. պէտք է վերջապէս որ ջանանք զինքը
նուազ դժբաղդ ընել: Ձաւակներս զրկեցի որ քիչ մը
զբօսցնեն զինքը. և ուզեցին անպատճառ անոր տանիլ
իրենց նախաձաշի մասը, իրենց պտուղները: Ասիկա
մեծ ոճիր մըն է ինձի համար, ոճիր մըն է զուակ-
ներուս համար:

(Քուէյքըրը, նստելով, զուակն անդին կը դարձնէ:
արցունք մը սրբելու համար:

Ք. Պէլ. — Ուրեմն կ'ըսեն թէ շատ աղւոր գիր-
քեր գրած է: Կարգացնէր էք իր գիրքերը:

Ք-եյ. — (Կեղծ անասրբերութեամբ մը) — Այո՛,
գեղեցիկ հանձար մըն է:

Ք. Պէլ. — Եւ այսքան երիտասարդ տարիքի
մէջ... կարելի՞ բան է: Ա՛, չէք ուզեր պատասխանել:
Իրաւունք չունիք, որովհետեւ ես ձեր ըսածներէն մէկ
բառ չեմ մոռնար: Այս առտու օրինակի համար, չէ՞
մի որ ինձի ըսիք թէ աղքատ մարդու մը ըրած մէկ
նուէրը իրեն ետ դարձնելը, զինքը վերաւորել և իր
ամբողջ թշուառութիւնն իրեն զգացնել է: Հետեւա-
բար, ապահով եմ որ իր Աստուածաշունչը իրեն ետ
չէք դարձուցած: Ըիշդ չէ՞. խոստովանեցէք:

Ք-եյ. — (Աստուածաշունչը տալով էնոր) —
Ա՛, գաւակս. քանի որ ես եմ քեզի տուողը, կրնաս
պահել:

Ք. Պէլ. — (Քուէյքըրին ոտքերուն առջև կը
նստի, պզտիկ տղոց ձևով որոնք շնորհ մը կը խնդրեն):
Օ՛հ, բարեկամս, հայրս, ձեր բարութիւնը երբեմն չար
ձև մը ունի, բայց միշտ լաւագոյն բարութիւնն է:
Դուք մենէ վեր էք ձեր խոհեմութեամբ. կարող էք
ձեր ոտքերուն տակ տեսնել մեր բոլոր փոքրիկ փո-
թորիկները զոր դուք կ'արհամարհէք, և սակայն
առանց անոնցմէ վնասուելու՝ կը խառնուիք անոնց,
կը տառապիք անոնցմով՝ ձեր ներողամտութեանը
պատճառով, ու յետոյ քանի մը բառ կը նետէք, և
ամպերը կը փարատին, և մենք ձեզի երախտապիտու-
թիւն կը յայտնենք, և արցունքները կը սրբուին, և

կը ժպտինք, որովհետեւ դուք թո՛ղ կուտայք:

Ք-եյ. — (Ձէնիկա ձակտէն համբուրելով). —
Ձաւակս, սիրելի՛ գաւակս. գոնէ քեզի հետ՝ այսպէս
վարուելուս ապահով եմ որ երբեք չպիտի զոջամ':
(Դրսէն՝ խօսելու ձայն կը լսուի): Մէկը կուգայ...
Երանի թէ իր բարեկամներէն մին չըլլար: Ա՛, այդ
Թէլյոթն է. ապահով էի: (Որսական սրափողի ձայն
կը լսուի):

S T U V X Y

Նոյնի, Լորս Թէլյոթ, ձօն Պէլ

Լորս Թէլյոթ. — Այո՛, այո՛, պիտի երթամ անոնց
բոլորին ըսեմ որ միանան ու գուարձանան: Ես, ալ
սիրտ չունիմ՝ գուարձանալու: Երեսնին տեսնելու
այլ ևս փափաք չունիմ. թող առանց ինձի ընթրեն:
Բաւական գուարձացայ տեսնելով որ ինչպէս ամբողջ
ունեցածներն կը մնիսէին՝ ինձի հետեւի փորձելով:
Հիմա, այդ խօսքը ալ կը ձանձրացնէ զիս: Պարոն
Պէլ, խօսելիք ունիմ ձեզի: Ինձի չէիք ըսած իմ
Ձէթըրթըն բարեկամիս ցաւերն ու աղքատութիւնը:

Ճ. Պէլ. (Քիթթի Պէլին) Տիկին Պէլ, մեզ միակ
ձգելդ հարկաւոր է, վայրկեան մը:

(Քիթթի Պէլ իր սենեակը կը քաշուի յամրացայ):
Բայց, միտրա, եթէ ցաւեր ունի, ետ ինչպէս գիտ-
նայի. գալով իր աղքատութեանը, սաչափը գիտեմ՝ որ
այստեղ բնաւ պարտք չունի:

Լորս Թէլյոթ. — Տէր Աստուած, ինչպէս մէջէն
կ'ելլէ: Ա՛, եթէ գիտնայիք, և դուք ալ, բարի
Քուէյքըր, եթէ գիտնայիք ինչ որ հիմա բոլոր մը
առաջ ինձի իմացուցին...: Նախ, իր գեղեցիկ քեր-
թուածները պատառ մը հաց խկ չեն տուեր իրեն:
Ատիկա շատ պարզ է. քերթուածներ են, և այդ
քերթուածները գեղեցիկ են. բնական է որ այդպէս
պիտի ըլլար: Յետոյ, բանասէրի պէս բան մը, ան-
ձանօթ ու չար ողորմելի մը, հրատարակեր է վեր-
ջերս (Աստուած տայ որ ինքը չիմանայ) զգուելի
դրպարտութիւն մը: Յաւակներ է ապացուցանել թէ
Հեռոյցին և իր միւս բոլոր քերթուածներուն բուն
հեղինակը ինքը չէ: Բայց ես ատոր հակառակը պիտի
հաստատեմ, ես որ իմ քովս ի վեր՝ դեռ աղայ
եղած ատենը՝ ատոնք զրելը աչքովս տեսած եմ.
պիտի հաստատեմ, զրաձս պիտի սպեմ, և պիտի
ստորագրեմ անունովս, Թէլյոթ:

Ք-եյ. — Աղբիս, պարոն:

Լորս Թէլյոթ. — Բայց դեռ ուրիշ բան ալ կայ:
Սքիլներ անուն մարդու մը այստեղ գալ ոլքտայը
չտեսնաք երբեք:

Ճճ ՊԵԼ. — Այն, այն, գիտեմ. հարուստ կա-
լուածատէր մըն է որ շատ տուններ ունի Լոնտոնի
մէջ :

ԼԵՐ թԵԼՂ. — Ճիշդ այդ մարդը

Ճճ ՊԵԼ. — Երէկ եկաւ հոս :

ԼԵՐ թԵԼՂ. — Ահա այս մարդը Ձէթըրթընը կը
փնտռէ զայն ձերբակալել տալու համար. ինք որ
երեք միլիոն ունի, կ'ուզէ զայն բանա դնել ապա
տան վարձքի խեղճով գումարի մը համար զոր ան
դեռ չէ կրցեր վճարել: Եւ Ձէթըրթըն... Օ՛հ, ասիկա
սուկայի բան է...: Եսիկա այնքան ամօթալի բան
մըն է մեր երկրին համար, որ կ'ուզէի այնքան ցած
ձայնով ըսել որ օդն անդամ չիմանար: Մօտեցէք
երկուքդ ալ: Ձէթըրթըն, կարենալու համար անոր
ստունէն դուրս ելլել, գրասուր և ստորագրուած խոս-
տում է տուեր անոր—ճճ, կարդացի...—որ այս ինչ
օրը (և այդ օրը կը մօտենայ) իր պարտքը պիտի
վճարէ, և թէ՛ այդ օրէն առաջ եթէ մեռնի, վիրա-
բուժական վարժարանին կը ծախէ... ան, մարդուն
բերանը առաջ չերթար ըսելու... կը ծախէ իր մար-
մինը՝ որպէս զի այդ գումարով իր պտուղը վճա-
րուի, և միլիոնատէրը ընդուներ է այդ գրութիւնը:

ՔԻՆԵՅ. — Ո՛վ թշուառութիւն, վսեմ թշուա-
ռութիւն :

ԼԵՐ թԵԼՂ. — Չմտածեցիք այդ մասին. առանց
իր գիտնալուն՝ բոլոր իր պարտքերը պիտի վճարեմ.
Բայց հանդարտութիւնը զոր կրցեր է պահել, ինչպէս
կարելի է ըմբռնել:

ՔԻՆԵՅ. — Ու իր հպարտութիւնը, բարեկամ,
ինչպէս չես ըմբռնել:

ԼԵՐ թԵԼՂ. — Է՛, պարոն, ես զանիկա ձենէ
առաջ կը ճանչնայի: Ո՛ւր է ինքը. կ'ուզեմ տեսնել:
Գիտեմ թէ ինչ ձևով խօսելու է հետը: Պէտք է
զինքն ստիպել որ իր ապագայով զբաղի... և արդէն
կայ բան մը զոր պարտաւոր եմ դարմանել:

Ճճ ՊԵԼ. — Վնչ նզովից արմատ. աս ինչ խայ-
տառակ գործ մը եղաւ ասիկա: Ձինքը ձեզի հետ,
միլիոն, այնքան մտերիմ տեսնելով, կարծեցի թէ
ճշմարիտ ձէնթիւմէն մըն էր. այդ բոլոր բաժնետերերիդ
տանս մէջ կրնան խաղքութիւն մը յառաջ բերել:
Երտակը կ'ուզէք. կը փափաքիմ որ հաճիք այդ երի-
տասարդին իմացնել թէ ան մէկ ամիսէն աւելի չի
կրնար հոս մնալ:

ԼԵՐ թԵԼՂ. (Դառն ժպիտով մը) — Այլ ատոր
խօսքը չընենք, պարոն: Կը յուսամ որ իմ տունս,
եթէ հաճի գալ, ձեր տանը տեղը կրնայ բռնել:

Ք. ՊԵԼ (Ներս կը մանէ երկշտաբար) — Նորին
Վսեմութեան մեկնելէն առաջ, կը փափաքէի բան մը
հարցնել իրեն, Պ. Պէլի թոյլտուութեամբ:

Ճճ ՊԵԼ. (Սենեակին խօրը վեր վար քալելով) .
— Իմ թոյլտուութեանս պէտք չունիս. ըսէ ըսելիքդ:

Ք. ՊԵԼ. — Միտորը կը ճանչնայ արդեօք Պ.
Պեքֆորտը, Լոնտոնի քաղաքապետը:

ԼԵՐ թԵԼՂ. — Հարկաւ կը ճանչնամ, սիկին,
նոյն իսկ կարծեմ քիչ մը ազգական ենք. զինքը կը
տեսնեմ ամէն անգամ որ կը կարծեմ թէ զիս չպիտի
ճանճրացնէ, այսինքն տարին անգամ մը: Միշտ ինձի
կ'ըսէ թէ պարտքեր ունիմ. ինձի համար՝ ապուշին
մէկն է. բայց ընդհանրապէս կը յարգեն զինքը:

Ք. ՊԵԼ. — Պ. Տոքթօրը ըսաւ ինձի թէ այդ
պարոնը իմաստուն և բարեգործ անձ մըն է:

ԼԵՐ թԵԼՂ. — Երտակն ըսելով, ու լրջօրէն
խօսելով, Անգլիոյ ամենէն պարկեշտ մարդն է: Եթէ
իրմէ բան մը ուզելու միտք ունիք, այս իրիկուն իսկ
կ'երթամ կը տեսնեմ զինքը:

Ք. ՊԵԼ. — Այստեղ, կարծեմ կայ մէկը որ
իրեն հետ գործ մը պիտի ունենայ, և...
(Այս միջոցին Ձէթըրթըն իր սենեակէն վար կ'իջնէ
երկու տղաքներուն հետ)

Ճճ ՊԵԼ. — Ի՞նչ ըսել կ'ուզես: Խէնթ ես:

Ք. ՊԵԼ. (Խոնարհութիւն մը ընելով) — Գանի
որ չես ուզեր, չեմ ըսեր:

ԼԵՐ թԵԼՂ. — Բայց ձգեցէք որ խօսի:

ՔԻՆԵՅ. — Միակ միջոցը որ կը մնայ Ձէթըր-
թընին, այդ մարդուն պաշտպանութիւնն է:

ԼԵՐ թԵԼՂ. — Ձէթըրթընին համար է: Անմի-
ջապէս երթամ ուրեմն:

Ճճ ՊԵԼ. (Իր կնոջը) — Բայց ինչպէս իր գոր-
ծերը այսքան ազէկ գիտես:

ՔԻՆԵՅ. — Ես իրեն ըսի:

Ճ. ՊԵԼ.— Եթէ երբէք . . .

Ք. ՊԵԼ. — Կիրք մի՛ ելլեր նորէն. միանկ
չենք:

Ճ. ՊԵԼ. — Այլ այդ երիտասարդին խօսքը չպիտի
ընես:

(Ձէթըրթըն որ երկու տղաքը իրենց մօրը ձեռքը
յանձնած է՝ դէպ ի շքմիւնէն կ'ուզողով):

Ք. ՊԵԼ. — Քու կամքդ թող ըլլայ:

Ճ. ՊԵԼ. — Միլիոն, ահա ձեր բարեկամը. իր
զգացումները իրմէ կարող էք իմանալ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ

Չեքըրթըն, Լորս Թեղուր, Բուհյրըր,
Ճօն Պել, Բիթթի Պել.

(Չեթըրթըն հանդարտ և գրեթէ երջանիկ ձև մը ունի: Թիկնաթուփ մը վրայ կը նեւէ քանի մը ձեռագիր)

Լ. Թեւշ. — Թո՛ւմ, քեզի ծառայութիւն մը մատուցանելու համար նորէն եկայ հոս. թոյլ կուտան:

Չեթը. — (Չայնին մէջ աղու մեղմութիւն մը դնելով և ամբողջ տեսարանին միջոցին անդադար Բիթթի Պելին նայելով). — Պիտի համակերպիմ, ճորճ, ամէն բանի, գրեթէ ամէն բանի:

Լ. Թեւշ. — Այդ Սքիլիներ ըսուած սրիկային հետ ձախորդ գործ մը ունիս եղեր: Կ'ուզէ կոր վաղը քեզ ձերբակալել տալ:

Չեթը. — Չէի գիտեր. բայց իրաւունք ունի:

Ճ. Պել. (Բուհյրըրին). — Միլրտըր շատ բարի է որ կը հանդուրժէ. սըւոր ամբարտաւան ձևը նայեցէք:

Լ. Թեւշ. — Իրաւունք ունի:

Չեթը. — Իրաւունք ունի՝ օրէնքին համեմատ: Երէկ պէտք էր որ վճարէի պարտքս. այդ վճարումը պիտի ընէի ծախելով ձեռագիր մը որ չէ աւարտած. այդպէս խոստացած եմ գրաւորապէս. եթէ ցաւեր ունեցայ, եթէ ներշնչումը որոշեալ ժամուն չեկաւ, առ անոր գիտնալիք բանը չէ:

Այն, պէտք չէր որ այդ աստիճան իմ ուժերուս վրայ յոյս դնէի և մուսայի մը գալուն ու մեկնելուն թուականը ճշդէի ինչպէս ձիւն մը վաղը կը հաշուեն: — Յարգանքի պակաս մըն է որ ունեցայ իմ անմահ հոգիիս նկատմամբ, զայն ժամով վարձու տուի և ծախեցի: — Ես եմ յանցաւորը. արժանի եմ գըլխուս զախքին:

Բուհյ. — (Բիթթիին). — Գրաւ կը դնեմ որ ասոնք զինքը խենթ կը կարծեն հիմա. ըսածները չափազանց գեղեցիկ են իրենց համար:

Լ. Թեւշ. — (Խնդալով, բայց քիչ մը վիրաւորուած). — Իմ կարծիքէս ըլլալէ վախնալուդ համար է որ զինքը կը պաշտպանես:

Ճ. Պել. — Այն, պարզապէս ըսածնուդ հակառակն ըսելու համար է:

Չեթը. — Ո՛չ: Հիմա կը մտածեմ թէ ամէնքը իրաւունք ունին, բայց ի բանաստեղծներէն: Բանաստեղծութիւնը ուղեղի հիւանդութիւն մըն է, Իմ մասիս չէ որ կը խօսիմ. ես բժշկուած եմ:

Բուհյ. — (Բիթթիին) — Այս ըսածը վրաս գէշ կ'ազդէ:

Չեթը. — Ա՛լ մէկ հատիկ ոտանաւոր մը պիտի չգրեմ, կ'երդնում. ինչ ալ պատահի, մէկ հատիկ ոտանաւոր մը պիտի չգրեմ:

Բուհյ. (Աչքը անոր վրայէն չզատելով). — Հըմ. նորէն ակարացեր է:

Լ. Թեւշ. — Ճիշդ է որ յոյս դրած ես Պ. Պէքֆորտին վրայ, որ ազգականս է: Կը զարմանամ որ աւելի իմ վրաս յոյս դրած չըլլաս:

Չեթը. — Լորտ-քաղաքապետը ինձի համար կառավարութիւնը ըսել է, և կառավարութիւնը՝ Անգլիան է, միլոն. Անգլիոյ վրայ է որ յոյս դրած եմ:

Լ. Թեւշ. — Հակառակ այս բոլորին, իրեն պատրաստ եմ ըսելու ինչ որ ուզես:

Ճ. Պել. — Արժանի չէ, շիտակը:

Բուհյ. — Ահն պաշտպանութեանց մրցում մը: Մեր լորտը աւելի պիտի ուզէ պաշտպանութիւն շընորհել քան երիտասարդ լորտը: Թերևս արդիւնքը օգտակար ըլլայ:

(Կառքի թաւալման ձայն մը կը լսուի դրէն):

Բ. — Կարծես թէ կառքի ձայն մը կ'իմանամ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Չ.

Նոյնի եւ Պեֆորտ

(Երիտասարդ լորտերը վար կ'իջնեն անձեռոցները ձեռքերին և որսի զգեստներով, լորտ-քաղաքապետը տեսնելու համար: Վեց սպասաւոր ջահեր կրելով կը մտնեն ներս և երկու կարգ կը շարուին լորտ-քաղաքապետին գալուտը կը ծանուցանեն):

Բ. Պել. Ինքն իսկ, լորտ-քաղաքապետը հոս կուգայ, Պ. Չեթըրթընին համար: Ռաշէլ, զաւակներս, ինչ երջանկութիւն, համբուրեցէք զիս:

(Կը վազէ անսոց մօտ և կը համբուրէ զանոնք եռանդով),

Ճ. Պել. — Կիները անբացատրելի խենթութեան վայրկեաններ ունին:

Բուհյ. — (Մեկուսի) Մայրը՝ առանց գիտնալու՝ պիտուհի համբուր մըն է որ կուտայ իր զաւակներուն:

Պ. Պեֆ. (Բարձրաձայն խօսելով և ծանր ու վեհապահ ձևով մը թիկնաթուփ մը մէջ տեղաւորուելով). — Ա՛, կարծեմ այն ամէնքը որ մէկտեղ կ'ուզէի տեսնել՝ հոս են: Ա՛, Ճօն Պել, հաւատարիմ բարեկամս, կ'երևայ թէ ձեր տան մէջ ապրիլը հա-

ձեղի է. որովհետև հոս կը տեսնեմ՝ զուարթ զեմքեր որունք աղմուկը և անկարգութիւնը պէտք եղածէն աւելի կը սիրեն : — Բայց իրենց տարիքին բերմունքն է :

Ճ. Պէլ. — Միլորտ Ձեր Վսեմութիւնը շատ բարի է որ երկրորդ անգամ իմ տունս գալու պատիւը կ'ընէ ինձի :

Պ. Պէ+Ֆ. — Այո՛, շիտակ է, Պէլ, բարեկամս, երկրորդ անգամն է որ կուգամ... Ա՛, ինչ աղւորիկ զաւակներ ունիք : Այո՛, երկրորդ անգամն է : Առաջին անգամը՝ եկայ ձեր մանիֆաթուրայի գործարաններուն մասին ձեզի շնորհաւորութիւններս յայտնելու : Եւ այսօր այս տունը աւելի քան երբէք գեղեցիկ կը գտնեմ : Ձեր խաթունիկ կնիկն է որ այս բոլորը կարգի կը դնէ : ապրի : — Թէլպոթ քուզէնս, ինչու բերանդ չես բանար : Խանգարեցի քեզ. բարեկամներուդ հետ զուարճանալու վրայ էիր, այնպէս չէ : Թէլպոթ քուզէնս, դուն զուարճանալէն ուրիշ բան չես գիտեր. բայց տարիքիդ բերմունքն է :

Լորո Թէլպ. — Ինձմով մի՛ զբաղիք, սիրելի լորտ :

Լորո Լառաբ. — Ամէն օր մենք այդ կ'ըսենք իրեն :

Պ. Պէ+Ֆ. — Դուք ալ, Լառաբրտէյլ, դուք ալ, Քինկսթըն, մի՛շտ իր հետը, մի՛շտ զիշերները կ'անցընէք երգելով, խոսելով ու խմելով : Ամենքդ ալ գէշ պիտի վերջանաք : Բայց ըսելիք չունիմ. ամէն մարդ իրաւունք ունի իր հարստութիւնը ուղածին պէս վատնելու. — ճօն Պէլ, ձեր տանը մէջ կը բնակի, այնպէս չէ, Ձէթըրթըն անուեով երիտասարդ մը, որուն համար ուզեցի անձամբ գալ հոս :

Ձէթ. — Ես եմ, միլորտ, որ նամակ գրեցի ձեզի :

Պ. Պէ+Ֆ. — Ա՛, դուն ես, սիրելի պարոն : Սանկ մօտս եկուր նայիմ, քիչ մը երեսդ տեսնեմ : Հայրդ ձանջցած եմ. պատուական մարդ՝ որ ա՛յնչպի կրնայ ըլլալ : Աղքատ զինուոր մը որ կամաց կամաց յառաջացեր ու զիրքի հասեր էր : Ա՛, դուն ես Թոմաս Ձէթըրթընը : Ատենդ ոտանաւոր գրելով կ'անցունես եղեր հն : Մէկ անգամը հոգ չէ, բայց պէտք չէ շարունակել, մարդ չըկայ որ այդ յիմարութիւնը ըրած չըլլայ : Հէ՛ հէ՛, ես ալ քեզի պէս եմ ըրած երիտասարդ եղած ատենս, և ոչ Լիթըրթըն, ոչ Սուրֆիթ, ոչ Ուայլքս չեն կրցած երբէք գեղուհիներուն համար գրել ոտանաւորներ որ իմ գրածներէս աւելի կնահած ու սրամիտ ըլլային :

Ձէթ. — Ձեմ տարակուսիր, միլորտ (Հեգնաբար) :

Պ. Պէ+Ֆ. — Բայց պարապ ժամերս է միայն որ

կուտայի Մուսայներուն : Գիտէի ինչ որ Պեն Ճօնսըն կ'ըսէ այդ մասին, այսինքն թէ աշխարհիս ամենէն գեղեցիկ մուսան մարդուս փորը չի կշտացներ, և թէ այդ օրիորդները իբր սիրուհի առնելու է և երբէք իբր ամուսին :

(Լառաբրտէյլ, Քինկսթըն և լորտերը կը խնդան)

Լառաբ. — Ապրիք, միլորտ, շատ ձիշղ է :

Քուզէ+ — (Մեկուսի). — Կուզէ կոր գայն մաղմաղ կրակի վրայ մեռցնել :

Ձէթ. — Այո՛, շատ ձիշղ է. միլորտ. այդպէս ըլլալը այսօր կը զգամ :

Պ. Պէ+Ֆ. — Բու զլլաւդ եկածը հազարաւոր երիտասարդներու զլլաւն եկած է. ուրիշ բան չես կրցած ընել մինչև հիմա բայց եթէ այդ անիծեալ ոտաւորները զրել և ինչի՞ կը ծառայեն, ըսէ կ'աղաչեմ. տես, հօր պէս կը խօսիմ կոր քեզի. ինչի՞ կը ծառայեն : — Լաւ Անգլիացի մը իր երկիրն օգտակար ըլլալու է : Ըսէ տեսնեմ, ինչ կերպով կ'ըմբռնես մեր ամենուս պարտականութիւնները :

Ձէթ. — (Մեկուսի). — Էնոր սիրոյն, Էնոր սիրոյն, պիտի խմեմ բաժակը մինչև մրուրը : (Բարձրաձայն) : Կարծեմ թէ կը հասկնամ այդ պարտականութիւնները, միլորտ : — Անգլիան նաև մըն է : Մեր կղզին նաև ձե ունի արգէն, ցուռը դէպի հիւսիս զարձած, ծովերուն մէջտեղը՝ կարծես խարխս է նետած, աչքը աշխարհիս վրայ տնկած : Անդադար իր կողերէն կը հանէ ուրիշ նաւեր՝ իր նմանութեամբը շինուած, և որոնք կ'երթան գայն ներկայացնել աշխարհիս բոլոր ծովափունքներուն վրայ : Բայց մեծ նաւուն վրայ է որ մեր ամենուս բուն գործը կը գտնուի : Թագաւորը, լորտերը, համայնքները՝ դրօշակին, դէկլին և կողմնացոյցին կը հսկեն. մենք ամենքս պարաններով զբաղելու ենք, կայմերուն վրայ մագցելու, առագաստները պարզելու և թնդանօթները լեցնելու ենք, և մեր փառաւոր նաւը վարելու գործին մէջ չկայ մէկը որ անօգուտ ըլլայ :

Պ. Պէ+Ֆ. — Գէշ չէ, գէշ չէ, թէպէտ նորէն ըսածիդ մէջ բանաստեղծութիւն կայ : Բայց նոյն իսկ ընդունելով այդ գազափարդ, կը տեսնես որ նորէն իրաւունք ունիմ : Ի՛նչի կը ծառայէ բանաստեղծը՝ նաւը վարելու գործին մէջ :

(Վայրկեան մը սպասում)

Ձէթ. — Աստղերուն մէջ կը կարգայ այն ճամբան զոր ցոյց կուտայ Աստուծոյ մատը :

Լորո Թէլպ. — Ի՛նչ կ'ըսէք, միլորտ իրաւունք չունի : Նաւուղիդը անօգուտ չէ :

Պ. Պէ+ֆ. — Երևակայութիւն կամ խենթութիւն, միևնոյն բանն է: Դուն բանի մը չես ծառայեր, և այդ խենթութեամբ գաղափարներովն է որ այդպէս անօգուտ մարդ մը եղած ես: — Բաւական բան իմացած եմ վրայ... Ճիտակը ըսելով...

Լորր Թէւոյ. — Միւրորտ, իմ բարեկամս է Ձէթըրթըն, շատ շնորհակալ կ'ըլլամ եթէ փափկութեամբ վարուիք հետը:

Պ. Պէ+ֆ. — Ա՛, ճորճ, դուն զինքը սիրողներէն ես. ուրեմն գոհ պիտի ըլլաս, որոշած եմ օգնել քու պաշտպանեալիդ, հակառակ Պէյլի երևան հանած բաներուն: Ձէթըրթըն չի դիտեր որ իր ձեռագրի վարպետորդութիւնները մէջտեղ ելած են. բայց շատ մեծ յանցանք մը չէ: կը ներեմ իրեն: Իր խաղը երեւան հանող գրուածքը շատ լաւ գործուած բան մըն է. ահա հետս եմ բերեր, որ կարդաս ու խելքդ գըլուխդ ժողվես. (լրագիր մը կը հանէ կուտայ) հետն ալ նամակ մը գրած եմ որ պիտի գտնես իմ առաջարկութիւնս: տարին հարիւր ոսկի ունիս շահելու, կը յուսամ որ չհաւնելիք չես ըներ ինչ է, վերջապէս հայրդ թագաւորին եղբայրը չէր. և շիտակն ըսելով, քեզի առաջարկածէս ուրիշ բանի ալ չես ի գար. սկզբնաւորութիւն մըն է ատ. միշտ քովս կ'ըլլաս, և մօտէն կը հսկեմ վրայ, (Քիթթի Պէլ գուշակելով անոր վարանուը, նայուածքովը կը պաղատի Ձէթըրթընին որ չմերժէ:)

Ձէթը. (Կը վարանի վայրեան մը. յետոյ, Քիթթի Պէլին նայելէ ետքը). — Կ'ընդունիմ ինչ ալ ըլլայ, միւրորտ:

Լորր Լուսոր. — Ի՛նչ բարի է միւրորտը:

Ճ. Պէլ. — Առաջին թօսթը ձեզի պիտի ուղղեմ, միւրորտ:

Ք. Պէլ. — (Իր աղջկանը). — Գնա՛ ձեռքը համբուրէ, աղջիկս:

Բուռ. — (Ձէթըրթընի ձեռքը սեղմելով). — Ապրիս, բարեկամս. քաջ եղար:

Լ. Թէւոյ. — Թո՛ւ քուզէնս վրան գրած յոյսս պարապը չհանեց: — Է՛հ, ըրի ըրի, վերջապէս զինքը նուազանգիտոր հասուցի:

Պ. Պէ+ֆ. — Ճօն Պէլ, մեծարգոյ պարոն Պէլ, երթանք ընթրել, սա խենթերուն սեղան նոտիլը կ'ուզեմ տեսնել: — Մարդ կ'երիտասարդանայ իրենց վրայ նայելով:

Լ. Թէւոյ. — Ամէնքն ալ պիտի շտկուին. նոյն իսկ Քուէյքըրն ալ: — Ձեր շնորհիւ կամ իմ շնորհիւս, ահա Ձէթըրթընին գործը կարգադրուեցաւ. ալ չմտածենք այդ մասին:

Ճ. Պէլ. — Ամէնքս մէկտեղ առաջնորդներ միւրորտը դէպ ի ճաշատրահը: (Քիթթի Պէլին) Քիչ մը ետքը եկուր հիւրերը պատուատիրելու: (Քիթթի Պէլ իր սենեակը կ'ուղղուի):

Ձէթը. — (Քուէյքըրին) Բոլոր ուղածնիդ ըրի, այնպէս չէ: (Բարձրաձայն, Պ. Պէքֆըրտին) Միւրորտ, քիչ մը ետքը կուգամ ձեզ կը գտնեմ: Բողբ մը տուէք ինձի, քանի մը թուղթեր ունիմ այրելու:

Պ. Պէ+ֆ. — Աղէկ, աղէկ... բանաստեղծութենէ բոլորովին կը բուժուի կոր... Աղէկ: (Դուրս կելլեն):

Ճ. Պէլ. — (Յանկարճ իր կնոջը մօտը կուգայ). Ինչո՞ւ չես մտներ սենեակդ: Ու մի՛ մոռնար որ կը սպասեմ քեզի:

(Քիթթի Պէլ պահ մը կանկ կ'առնէ զրան առջև և մտտանջ Ձէթըրթընին կը նայի):

Ք. Պէլ. — (Մեկուսի). — Ինչո՞ւ կ'ուզէ միմակ մնալ, Աստուած իմ:

(Կը մտնէ սենեակը երկու գաւակներուն հետ):

S Ե Ս Ա Բ Ա Ն Ի

(Չեքրորդն, միևնակ, վեր վար պտտելով)

— Է՛, բարի բարեկամներ... Չարմանալի է որ բաղդս այսպէս յանկարճ կը փոխուի: Հաւատարս չի գար կոր. բայց երևոյթին նայելով՝ անտարակուսելի է: — Սակայն ինչ ըսել ուզեց՝ վարպետորդութիւններու խօսքն ընելով: Ա՛, ան ըլլալու է ինչ որ ամէնքը կ'ըսեն (ինչ որ ես իսկ խոտովանած եմ արդէն) թէև զբքիս բուն հեղինակը ես եմ: Ահա խորամանկութիւն մը որ շատ պարզուկ է, կ'ընդունիմ: — Ի՛նչ պաշտօն է արդեօք առաջարկածը: Թերևս զբաղիրի պաշտօն մը: Ի՛նչ կ'ըլլայ. պատուաւոր գործ մըն է: Կարող պիտի ըլլամ ապրուստս ձուրել՝ առանց ստիպուելու հացի համար հասարակ բաներ գրել: — Քուէյքըրին հոգին, զոր խռովեցի, պիտի հանդարտի նորէն. ու Քիթթի Պէլին մահուան պատճառ պիտի չըլլամ... եթէ իրաւ է որ ես կրնայի էնոր մահուան սրտածառ ըլլալ: — Կրնամ հաւատալ ատոր: Կը տարակուսիմ: Ինչ որ մարդ այդպէս ծածուկ կը պահէ՝ ուժեղ զգացում մը չի կրնար ըլլալ. մայրական հոգի մը ունենալու է, քանի որ այդքան սիրալիր կ'երևայ: Հոգ չէ՛ այսպէս աւելի լաւ է. այլևս երեսը չպիտի տեսնեմ... Որոշուած բան է... Բայց թերևս լաւագոյն էր որ սպաննէի ինքզինքս: Դիակ մը ծածուկ պահել՝ դիւրին է: Մարդ էնոր չպիտի իմացնէր այդ բանը: Քուէյքըրը բոլոր պէտք

եղածը պիտի ընէր որպէսզի հեղիկա չիմանայ: — Եւ հիմա, ինչո՞ւ ապրիմ: Որո՞ւ համար ապրիմ... Պէտք է ապրիմ, որպէսզի քիթթին ապրի. բաւական է այդ:

Է՛, կանգ առէք, սե՛ գաղափարներ մի՛ գաք նորէն...

Կարգանք սա յօրուածը:

(Լրագիրը, զոր Պ. Պէքֆորտ տուած էր իրեն, կը կարդայ):

«Ձէթըրթըն ինքն իսկ չէ իր գործերուն բուն հեղինակը: Ասիկա բոլորովին ապացուցուած բան մըն է՛: Այդ սքանչելի քերթուածները ճշմարտապէս Բաուլէ անուն վանականի մը ձեռքէն ելած են, և ան ալ զանոնք թարգմանած է Թիւրկօ անուն տասներորդ դարուն ապրած վանականի մը գրածէն: Այս խաբեբայութիւնը, որ դպրոցականի մը ներելի է, դպրոցէն ելած մարդու մը մարդու համար՝ ոճիր մըն է...» — Յօդուածագրին անունն է Պէյլ: Պէյլ: Ինչ է, ո՞վ է այս Պէյլը: Ինչ ըրեր եմ իրեն Ի՛նչ կոյանոցէ կ'ելլէ այս օճը:

Ի՛նչ... ուրեմն անունս սեպած, փառքս մարած, պատիւս կորսուած է... Ահա՛ դատաւորը:

Տեսնենք բարերարը... Նայինք ինչ է առաջարկածը:

(Նամակը կը բանայ, կը կարդայ, և կը պոռայ՝ զայրոյթով)

Սենեկապան ծառայի պաշտօն մը իր տան մէջ...

Ա՛խ, անիծուած երկիր, արհամարհանքի աշխարհ, կործանիս...

(Ափիսի սրուակը ձեռքն առնելով) Ո՞վ իմ հոգիս, քեզ ծախեր էի... ահա ասով քեզ կ'ազատեմ նորէն...

(Կը խմէ ափիսը)

Սքերնէրին դրամը պիտի վճարուի: — Հիմա ազատ եմ ամենէն. հաւասար եմ ամենուն: Մ՛հ, ասիկա հանգիստի տուածին ժամն է որ կը ձաշակեմ կեանքիս մէջ: Ո՞վ իմ վերջին ժամն, ո՞վ արշալոյս յաւիտեանական օրուան, կ'ողջունեմ քեզ: — Մնաք բարով, նուաստացումներ, ատելութիւններ, հեղնութիւններ, ստորնացուցիչ աշխատանքներ, անստուգութիւն, անձկութիւն, թշուառութիւն, սրտի չարչարանք, մնաք բարով: Ա՛խ, ինչ երջանկութիւն, մնաք բարով կ'ըսեմ ձեզի: — Եթէ գիտնային, եթէ գիտնային թէ ո՞րքան երջանիկ եմ հիմա... ոչ մէկը այսքան երկայն պիտի չվարանէր...

(Անխոփման վայրկեանէ մը յետոյ, որու մի-

ջոցին իր դէմքը երանութեան արտայայտութիւն մը կ'ստանայ, ձեռքերը կը միացնէ և կը շարունակէ)

Ո՞վ մահ, ազատարար հրեշտակ, ինչ քաղցր է քու խաղաղութիւնդ: Իրաւունք ունէի քեզ պաշտելու, բայց մինչև ցարդ ուժը չունէի քեզի տիրանալու: Գիտեմ որ քու քայլերդ յամր ու ապահով պիտի ըլլան: Տես, ո՞վ ծանրադէմ հրեշտակ, անս ինչպէս ամենուն աչքէն պիտի ջնջեմ քայլերուս հետքը այս աշխարհիս վրայ:

(Կրակը կը նետէ իր բոլոր թղթերը) Գացէք, աղիւ մտածումներ՝ այդ բոլոր արհամարտոտ սպեւախառնիւրուն համար գրուած, գացէք բոցին մէջ մաքրուեցէք և ինծի հետ երկինք բարձրացէք:

(Աչքերը երկինք կը բարձրացնէ և կամայ կամայ կը պատռէ իր քերթուածները, ծանր ու յափրշտակեալ ձևով մարդու մը որ հանդիսաւոր զահատարութիւն մը կ'ընէ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ը:

Չեքրորդն, Բիթրի Պեյ

(Բիթրի Պեյ յամրաքայլ դուրս կ'ելլէ իր սենեակէն, կանգ կ'առնէ, կը դիտէ Ձէթըրթընը, և կ'երթայ կը կենայ շըմինէին և անոր միջև: Ձէթըրթըն յանկարծ կը դադրեցնէ թերթերը պատուելը:)

Ք. Պեյ (Մեկուսի). — Ի՛նչ կ'ընէ... Երբեք պիտի չհամարձակիմ իրեն հետ խօսիլ: Ի՛նչ կ'այրէ: Այդ բոցը սիրտս դող կը հանէ, ու կրակէն լուսաւորուած դէմքը ահաւոր արտայայտութիւն մը ունի: (Ձէթըրթընին)

Ինչո՞ւ չէք երթար միլիտրին քով:

Ձե՛ր. — (Թղթերը ձեռքէն վար կը ձգէ՝ ամբողջ մարմնովը կը դողայ). — Արդէն... Դո՞ւք էք... Ա՛հ, տիկին, ծունկի եկած կը պաղատիմ... մոռցեք զիս:

Ք. Պեյ. — Աստուած իմ, բայց ինչո՞ւ ինչ էք ըրած.

Ձե՛ր. — Պիտի մեկնիմ: — Մնաք բարով: — Հաւատացէք, տիկին, պէտք չէ որ կիները խաբուին մեկէ: Բանաստեղծներու սէրը հագիւ թէ գոյութիւն ունի: Պէտք չէ սէր տալ անոնց, ոչինչ կը սիրեն անոնք. ետականներ են, ամենքն ալ: Ուղեղը կը սնանի ի վնաս սրտին: Երբեք մի՛ կարդաք անոնց գրածները և մի՛ տեսնէք զանոնք երբեք: Ես անոնց ամենէն գէշը եղայ:

Ք. Պեյ. — Աստուած իմ, ինչո՞ւ «եղայ» կ'ըսէք:

Ձե՛ր. — Որովհետև ան չեմ ուզեր բանաստեղծ
լլալ. կը սեսնէք, բոլոր գրածներս պատուեցի: —
Ասկից ետքը ըլլալիքս ալ լաւագոյն բան մը չէ, բայց
նով գիտէ: Մնաք բարով: Մտիկ ըրէք. զմայլելի
ընտանիք մը ունիք, ձեր զաւակները կը սիրէք,
այնպէս չէ:

Ք. Պէլ. — Կեանքէս աւելի:

Ձե՛ր. — Սիրեցէք ձեր կեանքը՝ անոնց համար
որոնց դուք էք կեանք տուած:

Ք. Պէլ. — Անաղ, արդէն միայն անոնց համար
է որ կեանքը կը սիրեմ:

Ձե՛ր. — Եւ ինչ կայ աշխարհիս մէջ աւելի
զեղեցիկ, նով Քիթթի Պէլ: Այդ հրեշտակները ծունկը-
ներնուզ վրայ, զուք աստուածային գթութեան կը
նմանիք:

Ք. Պէլ. — Օր մը անոնք պիտի բաժնուին
ինձմէ...

Ձե՛ր. — Ոչինչ կը հաւատարի ատոր: Այդ է
միակ ճշմարիտ բանը՝ կեանքի մէջ: Ահա սեր մը
անխռով և աներկիւղ: Անոնց մէջ է ձեր արիւնին
արիւնը, ձեր հոգիին հոգին. ամէն բանէ աւելի ու
միմիայն գանոնք սիրեցէք, տիկին: Խոստացէք ինձի
որ այսպէս պիտի ընէք:

Ք. Պէլ. — Աստուած իմ, աշուրներնիդ արցունքով
լեցուն են, ու կը ժպտիք...

Ձե՛ր. — Երանի թէ ձեր ազուր աչքերը եր-
բեք չլան և ձեր շրթունքները միշտ ժպտին: Քիթ-
թի, մի՛ թողուք որ ձեր խաղաղ ընտանիքին հոգերէն
զուրս ո և է ցաւ ձեր սիրտը մտնէ:

Ք. Պէլ. — Անաղ, միթէ մեր ձեռքն է ասիկա:

Ձե՛ր. — Այո, այո: Գաղափարներ կան որոնց-
մով կարելի է սիրտը գոցել: Բուէքքըրէն խնդրեցէք,
ան կուտայ ձեզի այդ գաղափարները: Ես ատեն
չունիմ. ձգեցէք երթամ: (Իէպ ի իր սենեակը կ'ուզ-
ղուի:)

Ք. Պէլ. — Այո, յայտնի է որ կը տառապիր...

Ձե՛ր. — Ընդհակառակը. բժշկուած եմ: Միայն
թէ գլուխս... տաքութիւն ունիմ... Ա՛հ, բարութիւն,
բարութիւն, դուն աւելի կը ցաւեցես զիս քան անոնց
բոլոր հոգիի սեւութիւնը:

Ք. Պէլ. — Ի՞նչ բարութեան մասին կը խօսիր:

Ձե՛ր բարութեան:

Ձե՛ր. — Կիները իրենց բարութեանը զո՛հ կ'եր-
թան: Ձեր բարութիւնն է պատճառ որ այստեղ եկաք
դուք: Ձեզի կը սպասեն այնտեղ. վստահ եմ: Ի՞նչ
կ'ընէք հոս:

Ք. Պէլ. (Խորապէս յուզուած, և նայուածքը

մոլորուն). — Հիմա, եթէ ամբողջ աշխարհս ալ
սպասէ ինձի, այստեղ պիտի մնամ:

Ձե՛ր. — Կ'աղաչեմ, ձգեցէք երթամ վայրկեան
մը... Քիչ մը ետքը կուգամ նորէն կը գտնեմ ձեզ:
Մնաք բարով: Մնաք բարով:

Ք. Պէլ. (Կեցնելով զայն). — Այ չըպիտի գաք...

Ձե՛ր. — Պէտք է երթամ. պէտք է երթամ:

Ք. Պէլ. — Օ՛հ, չէք ուզեր գալ...

Ձե՛ր. — Տիկին, այս տունը ձերն է, բայց այս
վայրկեանը ինն է:

Ք. Պէլ. — Ի՞նչ կ'ուզէք ընել:

Ձե՛ր. — Ձգեցէք զիս, Քիթթի: Մարդիկ ունին
բոպէներ ուր այլ ևս չեն կրնար կիներուն հասակին
խոնարհիլ և էնոնց համար ձայներնին մեղմայցելու...
Քիթթի Պէլ, ձգեցէք զիս:

Ք. Պէլ. — Երբէք երջանիկ պիտի չըլլամ եթէ

ձեզ ձգեմ այսպէս:

Ձե՛ր. — Իմ պատիժս էք դուք արդեօք: Ո՞ր
չար ոգին ձեզ ինձի կը զրկէ:

Ք. Պէլ. — Անբացատրելի սարսուտ մը:

Ձե՛ր. — Եթէ մնաք հոս՝ այն ատեն է որ պիտի
սարսուտիք:

Ք. Պէլ. — Տէր Աստուած... չար մտքեր ունիք

ուրեմն...

Ձե՛ր. — Բաւական չէ ինչ որ ըսի... ինչպէս
կ'ըլլայ որ դուք հոս էք:

Ք. Պէլ. — Եւ ինչպէս այլ ևս հոս չըլլայի:

Ձե՛ր. — Վասն զի կը սիրեմ ձեզ, Քիթթի:

Ք. Պէլ. — Ա՛յո, պարոն, եթէ ատիկա ինձի

կ'ըսէք, ուրեմն կ'ուզէք մեռնիլ:

Ձե՛ր. — Իրաւունք ունիմ մեռնելու: Կ'երդնում
ձեր առջև, և պիտի հաստատեմ Աստուծոյ առջև,
թէ իրաւունք ունիմ:

Ք. Պէլ. — Եւ ես, կ'երդնում որ ոճիր մըն է

սա. մի՛ գործէք այդ ոճիրը:

Ձե՛ր. — Պէտք է, Քիթթի. դատապարտուած
եմ ես:

Ք. Պէլ. — Մէկ օր մը, գոնէ մէկ օր մը ըս-
պասեցէք՝ ձեր հոգիին ազատութիւն մտածելու համար:

Ձե՛ր. — Բան մը չկայ որուն մտածած չըլլամ,
Քիթթի:

Ք. Պէլ. — Մէկ ժամ գոնէ, ազօթելու համար:

Ձե՛ր. — Ա՛լ չեմ կրնար ազօթել:

Ք. Պէլ. — Ուրեմն իմ սիրոյս համար, կ'ա-
ղաչեմ: Ես կը մեռնիմ, եթէ այդ բանն ընէք:

Ձե՛ր. — Ըսի ձեզի... ալ ուշ է:

Ք. Պէլ. — Բայց եթէ ես ալ կը սիրեմ ձեզի:

2ԷԽ. — Զգացի ասիկա, և ասոր համար է որ աղէկ ըրի մեռնիլ որոշելով: Ասոր համար է որ Աստուած կրնայ ներել ինձի:

Ք. ՊԵԼ. — Ի՞նչ ըրիք սւրբմ...

2ԷԽ. — Այ ուշ է, Քիթթի: Մեռել մըն է որ կը խօսի ձեզի:

Ք. ՊԵԼ. (Մոռնկի կ'իյնայ, ձեռքերը երկինք բարձրացնելով). — Երկնաւոր թագաւոր, խնայէ իրեն:

2ԷԽ. — Գացէք, գացէք... Մ'ննք բարով:

Ք. ՊԵԼ. (Զկրնալով ոտքի ելլել) Այ չեմ կրնար երթալ...

2ԷԽ. — Ուրեմն... ազօթէ ինձի համար՝ աշխարհիս վրայ և երկնքին մէջ:

(Էնոր ձակատէն կը համբուրէ և դողդոջելով սանդուղէն վեր կ'ելլէ. իր սենեակին դուռը կը բանայ և ներս կը նետուի):

Ք. ՊԵԼ. (Ախիտի սրուակը կը գտնէ) Աստուած իմ... ի՞նչ է աս... Աստուած, ներէ իրեն...

Տ Ե Ս Ա Բ Ա Ն Թ

Քիթթի Պեղ, Քուէյրըրը

Քուէյ. (Վազելով) — Ո՛ւր էք... Ի՞նչ կ'ընէք հոս...

Ք. ՊԵԼ. (Սանդուղին ոտքերուն վրայ ինկած). — Հոն գացէք, պարոն, շո՛ւա, գացէք. պիտի մեռնի... ազատեցէք զինքը... եթէ ուշ չէ արդէն:

(Մինչդեռ Քուէյըրըրը դէպ ի սանդուղը կ'ուղղուի, Քիթթի Պեղ, ապակեոր դռներէն կը նայի, տեսնելու համար թէ չկան մէկը որ օգնութեան կարենայ հասնիլ. յետոյ մէկը շտեմնելով, Քուէյըրըրին ետեւէն կ'երթայ՝ սարսափահար, Չէթըրթընի սենեակէն եկած ձայները մտիկ ընելով):

Քուէյ. (Մեծաբայ վեր ելլելով, Քիթթի Պեղին) — Կեցի՛ր, կեցի՛ր հոս, աղջիկս: Մի՛ գար հետս:

(Կը մտնէ Չէթըրթընի սենեակը և դուռը կը գոցէ ետեւէն: Տարտամ կը լսուին Չէթըրթընի հառաչները և Քուէյըրըրին խրատուական խօսքերը. Քիթթի Պեղ վեր կ'ելլէ, կէս-մարած, իւրաքանչիւր ոտքի բարամբունքին կըթնելով, ձիգ մը կ'ընէ դուռը բանալու համար. վերջապէս կը բացուի դուռը. կը տեսնուի Չէթըրթըն հոգեվարք, Քուէյըրըրին թևին վրայ ինկած: Քիթթի Պեղ ձիգ մը կ'արձակէ, կը սահի՝ կէս-մեռած՝ բարամբունքին վրայէն, և սանդուղին վերջին աստիճանին վրայ կ'իյնայ: Մօտակայ սրահէն ճօն Պեղի ձայնը կը լսուի.)

Ճ. ՊԵԼ. — Տիկին Պեղ:

(Քիթթի Պեղ յանկարծ սաքի կ'ելլէ՝ կարծես զսպանակէ մը մղուած):

Ճ. ՊԵԼ. (Երկրորդ անգամ) — Տիկին Պեղ:

(Քիթթի Պեղ կը սկսի քալել, և կուգայ կը նստի, Աստուածաշունչը կը բանայ կը կարգայ և ցած ձայնով բառեր կ'արտասանէ որոնք չեն լսուիր: Երկու գաւակները կը վազեն և շրջապագեստին կը կառչին):

Քուէյ. (Սանդուղին վերէն Քիթթիին նայելով). — Տեսնու արդեօք... անոր մեռնիլը տեսնու արդեօք... (Կ'իջնէ վար, կուգայ Քիթթիին մօտ) Աղջիկս, աղջիկս:

Ճ. ՊԵԼ. (Կուպաբար ներս մտնելով և սանդուղին երկու ոտք վեր ելլելով) — Ի՞նչ կ'ընէ կինս հոս: Ուր է այդ երկտատարը: Կ'ուզեմ՝ որ այդ պարոնը անմիջապէս դուրս հանեն տունէս:

Քուէյ. — Ըսէք՝ « անոր մարմինը » դուրս հանեն... մեռնի:

Ճօն ՊԵԼ. — Մեռնու:

Քուէյ. — Այո՛, մեռա՛ւ՝ տանըրուծը տարեկան Դուք ամենքդ այնքան լու վարուեցաք հետը... ու կը զարմաննք որ մեկնած ըլլայ:

Ճ. ՊԵԼ. — Բնոյց...

Քուէյ. — Լռեցէք, պարոն. կին մը չի կրնար զիմանուլ այսքան սարսափի...

(Կը նայի Քիթթիին, և կը տեսնէ որ հոգեվարք է)

Պարոն, ներս տարէք գաւակները: Թող չտեսնեն...

(Տղաքը կ'առնէ մօրերնուն վրայէն, կուտայ ճօն Պեղին, և անոնց մայրը թևերուն մէջ կ'առնէ: ճօն Պեղ գաւակները քիչ մը հեռուն կը տանի և կը մնայ ապշած: Քիթթի Պեղ կը մեռնի Քուէյըրըրին թևերուն մէջ):

Ճ. ՊԵԼ. (Ահաբեկած) — Քիթթի, Քիթթի, ինչ ունիս: (Կը լռէ, տեսնելով որ Քուէյըրըրը ծունկ կը չօքի):

Քուէյ. (Մոռնկի եկած) Քու ծոցդ, ո՞վ Տէր, քու ծոցդ ընդունէ այս երկու նոհասակները:

(Քուէյըրըրը կը մնայ ծնրադիր, աչքերը երկինք վերցուցած, մինչև որ վարագոյրը վար կ'իջնէ):

« ՆՈՐ ՔՆԱՐ »

Հետեւեալ քանի մը բանաստեղծութիւնները քաղուած են մեր տաղանդաւոր աշխատակից Արտաշէս Յարութիւնեանի մէկ նոր հատորէն, որ ի մօտոյ լոյս պիտի տեսնէ՝ « Նոր քնար » տիտղոսով: Այս հատորը, որուն ձեռագիրը տեսնելու հաճոյքն ունեցած ենք, մեր ժամանակակից քերթողական գրականութեան մէջ սահմանուած է կարեւոր տեղ մը գրաւելու՝ իր ի յայտ բերած ինքնատիպ խոհանորդի ներշնչմամբն ու նրբահիւս նկարէն ոճովը:

ՈՍԿԻԱՄԱՅՐ ԳԻՅՈՒՂԻՆ



Տիկին Զ. ԵՍԱՅԵԱՆԻՆ

Ո՛վ ինձ կուտար ամանորի հրնուանքն հիմ,
Նաւասարդի մարգարտաւառ ջիւղ առտուն,
Սոյրն եղջերուաց, վագելն ազատ եղներուն.
Ո՛վ ինձ կուտար հանդարտ ծուխը ծրխանին:

Գինով հոգիս՝ անլուռ բամբիւս՝ ցրնազին
Կը հագնեցդ յուզն հիւստեայ տներուն,
Եր կը փորձէ հրնչել հրնարն իմ քրքունս՝
Վաղնչուց փառն Ասուածուհոյն ոսկեծին:

Ըզգասութեան, իմաստութեան Մա՛յր, թոյլ տու
Ոգել պարծանե՛ր՝ հոգւոյս խանդովն երկնատուր,
Եւ հրնարիս բիւր լարերս բո՛ղ քրնդա՛ն:

Յեսամբնաց վիպասանն եմ շուարուն . . .
Իցիւ շունչըստուրի երկնից հովերուն
Եւ յաւիտեան հրնչէ նոր երգն այս գողբան:

ՃԵՐՄԱԿ ՏՕՆԸ

Քրնաքաթախ մըսկոտ առտուն ձրմեռուան
Կը սարսրայ ձորձերու մէջ ձիւնեղէն.
Ջիւղ է երկինն, ամայութեանց օթեւան,
Կը ծաղկի այգն հեռասանին լեռներէն:

Թարմ արեւին պայծառ ժրպիտը անհուն՝
Կ'ոսկեցօժէ փառը ձիւնէ շուրջառին.
Բիւր զանակներ, կայծեր՝ հեռուի բլուրներուն
Մարգարտապատ կողին վրայ կը վառին:

Լեռնանրկար հորիցոնր փառաւոր,
Սէզ շրթալու՛մ՝ ազամանդեայ բուրգերու,
Ճերմակ հրդեհ մը կը վառէ անտոյր,
Տարաւարհիկ օրեղութեամբ՝ իր նուծկու:

Շափիւղաներ կը բանդակուին ձիւնին մէջ,
Աննաւելի փողփողում մը՝ ամէն բան,

Եւ ցոլերու խրտրանքն ու ելեւէջ՝
Կը խաղաղեն ձիւնին սրնդուսն անսահման:

Մեծվայելուչ է ամէն իր. ամէն ինչ,
Կրօնական խորհուրդով մը սրբաբնուէր.
Ու ձրմեռուան տօնն բայիսակ ու շինիչ՝
Կը թելադրէ ինձ զարնաւէտ անուրջներ:

Ամենուրեք՝ խաղաղութիւն է համակ.
Մեծ հաւատարման մ'օժուումն ունի ամէն բան,
Ու վեհ տօնին պայծառութիւնն անապակ՝
Կը համակէ հոգւոյս ծալներն իմ խոպան:

Ասուածային ոսկերչութիւնն է վրտեմ,
Որուն առջեւ կը ծնւադրեմ հոգեզմայլ,
Եւ հոն միտիկ հեռութիւնը ես կ'ըմպեմ
Նուիրական ներմակ տօնին մաքրափայլ:

Օ Ր Ս

Ո՛վ իմ օրս, անփայլ, սոխն, անթրուկ,
Եղերական՝ պարզութեամբը կեդակարծ.
Մեռօրինակ ո՛վ իմ օրս չարաւուր,
Խաչելութեանս խորհուրդովը բեռնաբարձ:

Կը նուակեմ մուխտար ու լի հեռանկով
Անկիւնիս մէջ՝ ողբերգութիւնը մրսերիմ,
Եւ իրեկուան, անվերջ նամբուն երկայնով
Կ'ըրթամ փրկեսուել իմասն օրուան մ'իմ կեանքին:

Հոն կը ծրնիմ լրջութիւնը խորհուրդիդ.
Աննրբա՛ն օր, ոչ մէկ դէպքով յոգնասանց:
Մարդիկ կ'անցնին կովէս համբը, անծրպիս,
Անել ուխտին դաժան նամբէն աննահանց:

Ու կ'ապրի՛մ կեց թէ չեմ ապրի՛ր, օ՛ր նրսեմ.
Ես ինձ իր մ'եմ սյլես անյայտ ու միթին,
Եւ անթրուկ խաչելութեան այս վրսեմ՝
Գաղսնամածուկ խրնկոտ խորանը մեերիմ:

ՈՐՔԱՆ ԶԳԱՍՏ...

Որքա՛ն լրզգաս եմ, ո՛վ նոցիս. ա՛լ ոչի՛նչ
Կը մրնայ ինձ երբեմնի խօլ աւիւնէն:
Խաղաղութիւնն ունիմ ծովի լանջի՛ն ջիւղ,
Եւ երկինքին՝ երբ հոն աստղեր կը հրսկեն:

Ժպտուն դիմակն եմ հաւատարմանց գերագոյն,
Կը լուծուի հոն ցասման կրննիւր յետին՝
Եւ անխոնքն բոցէ կիրներն իմ հոգւոյն
Պարզ աչքերու սահմաններէն կ'աննետին:

—Ո՛հ, դառնահամ իմաստութիւնն այս ինչո՛ւ.
Ալ չե՛ս փորձեր պատրանները կարկթել:

—Չէ՛, վաղն առունն է եւ կանգի այս առտու
Մագերուս մէջ տեսայ արծաթ զոյգ մը թել:

ԱՐԻՒՆՈՏ ԻՐԻԿՈՒՆ

Իրիկուն է, հոգիս կ'երթայ վերստին
Գիւղէն հեռու, դաւե՛րուն մէջ, աւնան մօտ,
Եւ գեղամոյ վրկայ անդարձ կորուսին՝
Ըստփոփել իր երկբայանքները քփոք:

Գեռ անձկագին իրիկունը կ'երազէ
Մայրամուտի խոհուրդին մէջ հոգեխումով.
Հորիզոնը բոցակարմիր սրնդուտէ
Կը բռնընկի իր ծիրանի վերե՛րով:

Խորն երկինքին՝ բիւր երանգներ կը բուչին.
Գաւե՛րուն մէջ կը պլպլան մեղմ ցոլքեր.
Գունասախտակն աստուածային արուեստին
Այս պահձալի իրիկունան մէջ է բափեր:

Արեան անձրեւ մը կը նրծայ ամպերէն,
Որ կը սուզուին ոսկի ծովուն մէջ պայծառ,
Եւ կըրակէ ծրփուն գե՛տ մը, ուղիւտէն
Կը լըզուբոսէ հոռիզոնը բոցավառ:

Արեւն անբոց, արիւնո՛տ աչք սեւեռուն,
Ինձ կը նայի ոււադո՛ւրբեամբ մոլեգին,
Ու կը դիւթէ մենուքիւնը դաւե՛րուն
Պակուցիչ փայլն իր վիրաւոր նայուածքին:

Հերոսական կարմիր մա՛հն է արեւին.
Պասանքն ամբողջ՝ արիւնլրայ կը փռուի,
Եւ իրիկունն եղբրական ջրամալին
Գիւրե՛րուն մօտ անհունօրէն կը ճշմի:

Եւ կը սահի, կ'անցնի՝ պահը դիւքական,
Մայրամուտի խոհուրդին մէջ գուժաւոր,
Ու կը դիտեմ հոռիզոնըս գիւղական
Ուր ա՛լ աւեր եւ մոխիր կայ արգաւոր:

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՄԱՍՄԱՆՑ ՏՈՒՆ²¹

Հայ ժողովրդական վեպի մասին կարգ մը
ծանօթութիւններ

Իմ միտքս չէ՛ այստեղ տալ բաղդատական
կատարեալ ուսումնասիրութիւնը Սասմանց Տան
ամբողջ մասերուն, որ առանձին բազմաշխատ
գործ է: Կ'ուզէի միայն հայթայթած ըլլալ հա-
մեմատական եզրեր մը, և լուրջ ուշադրութիւ-
նը հրաւիրել հմուտ ազգագրագէտ-պատմաբան-
ներու և լեզուաբաններու՝ մեր ժողովրդական
անգիր վեպ ու հեքիաթին, աւանդութիւննե-

րուն և հաւատալիքին, բառին ու տառին վրայ:

Ժողովրդական վեպին — Սասմանց Տան —
պատմալեզուական յարգն ու կարեորութիւնը,
չափով մը ճանչցուելու է արդէն մեր մէջ: Բայց
դեռ պէտք եղած ուշադրութիւնն ընծայուած
չէ անոր, և մանաւանդ հեքիաթներուն պարու-
նակութիւնը: Հեքիաթներ՝ որք առաւելագէտ
կ'նկատուին շատ-շատերէ իբր առասպելական
հաճելի ընթերցանութ, և չէ թէ վեպին ան-
ջատուած ու թափառիկ անդամներ:

Հեքիաթ անունով վերցուած այդ հրաշա-
պատում անգիրներուն վրայ նայելու է, առանց
երկմտութեան, իբր ամենակարեոր անգիր-ծած-
կագիր soflումաներու, որոնց ամբողջական բաղ-
դատական ուսումնասիրութիւնը, — մօտիկ ապա-
գայի մէջ — ահապին լոյս պիտի տրուէ ինչպէս
ժողովրդական վեպին՝ այնպէս ալ մեր գրաւոր
պատմութեան տարտամ ամբողջութեան վրայ:

Անոնք, — հեքիաթ անունով մ'կրտուած ժո-
ղովրդական անգիր պատմաւածքները — փրթած,
անջատուած մասեր են՝ կեդրոնական մա՛յր
պատմավեպի մը, որուն իրանն է առ այժմ Սաս-
մանց Տունն իր փոփոխակաւոր ձիւղագրոյցներով:

Նախնական դարերէն աւանդաբար պատ-
մուած, աճած, ձիւղաւորած և փոփոխակներու
վերածուած միակ մա՛յր պատմավեպին զանա-
գան գիծերը, — կարկառուն, տպաւորիչ, անմո-
ռանալի մասերը՝ ժամանակի ընթացքին անջատ-
ուելու են մա՛յր բունէն, պատմուելու են իբր առան-
ձին գրոյց կամ ուրոյն վեպիկներ: Բիշ-բիշ մոռ-
ցուելու են մայր վեպին մէջ հիւսուած ու պահ-
ուած (անձերու) անունները, կամ կոչումները:
Նոյնիսկ նոր ընթացիկ կոչումներ պատուաստուելու
են՝ անջատուած վեպիկներուն մէջ այլևս տար-
տամօրէն դեր ունեցող դիւցազներու, ու տա-
կաւ վիպական բովանդակիչ հիւսուածքէն մեր-
կանալով՝ կազմեր են անորոշ, անկապ ու թա-
փառական գրոյցներ՝ այս անգամ հեքիաթ անու-
նով:

Օրինակի համար, այդ թափառական ան-
ջատուած գիծերէն մէկն է, անկասկած, շատ
հեքիաթներու մէջ յիշուած «քառսուն գողեր» ու
պատմութիւնը, և անանուն կամ նորանուն քա-
ջի մը կողմէ անոնց սպանումն ու այրին մալ-
skովիքին տիրացումը:

Այդ 40 հարամիները՝ Սասմանց Տան Դա-

ւիթին հանդիպած 40-ներուն (դեղ, գող, հարամի) կրկնութիւններն են, և գանոնք մորթոտող հերոսը՝ Գաւիթ Սասունցին է: Ասոր նման տակաւին շատ օրինակներ, բայց ինքնին արդէն աւելորդ է կասկածիլ այս կէտին մէջ, զի՝ նման փրթած-թափառիկ վիպական գիծեր՝ ձկնաչափ առատ՝ կ'ըղան մեր ծովածաւալ հէքիաթներուն մէջ:

Կար ժամանակ մը, երբ հիմակուան յղըւած լուսացնցող աղամանդը սև ածուխի կտոր մըն էր: Ըսել կ'ուզեմ՝ երեսնեակ մը տարիներ առաջ իբր սովորական պարզ հեքիաթ մը հայկե ծանօթ էր՝ «Սասունց Տուն»ը, որ հիմա անգընահատելի պատմական գործ մըն է արդէն հայ միւլգէոնի անգիր ու գրաւոր բաժինին համար: Սրուան ձտեան նոյնիսկ՝ որ առաջին անգամ լոյս աշխարհ գնելու բախտն ունեցաւ հայկական հէքիաթներու կարգին ձեռքն անցած «Սասունցի Գաւիթ» և Մհերի Գուռ» անուն անգրանիկ պատմուածքը, — և իրեն հետ իր ժամանակակից նորաբաց ազգագիր միտքեր, — հէքիաթ տիտղոսով միայն կ'մկրտէին հայ ժողովրդի պատմական կոթողն եղող Սասունց Տան պատմութիւնը:

Ժողովուրդն ինքը, «Սասունցի Գաւիթի հեքիաթ» կամ «Սասնու Ծուերաց հեքիաթ» կամ «Սասունց Տան» հեքիաթ», «Սանասար-Բաղդասարի հեքիաթ», կ'յորջորջէր և կը պատմէր միւս հէքիաթներու կարգին, ոչինչ ինտրիլով, կամ մէկ միւսէն աւելի ազգային գոյնով ներկայացնելու գիտումն ունենալով:

Բայց կոթողը միանգամ իր պատուանդանին վրայ դրուելէն ետք՝ զայն հրաշակերտող ժողովրդի բնիկ մկրտութեան իսկ կնքանուելին սպասելու էր, և ան չուշացաւ:

* * *

ՍԱՍՄԱՆՑ ՏԱՆ ԸՆՈՒՆԸ. —

Հայ ժողովրդական դիւցազնական պատմավէպին գոյութիւնը պահող ու բերնէ-բերան աւանդող ժողովուրդը՝ բնական էր որ, մասնաւոր անունով մը ձանձնար իր վէպը:

Առաջին անգամ վէպին գոյութիւնը մէջտեղ հանող անգրանիկ փոփոխակին տէրը, — Սըրուան ձտեան — «Սասունցի Գաւիթ կամ Մհերի Գուռ» անունը տուեր էր վէպին:

Ատի՛ վէպին բնիկ ժողովրդական մկրտու-

թիւնն ու անուանակոչութիւնը չէ՛ր սակայն: Բանահաւաքին ի՛ր կողմէ յարմար դատուած անուն մըն էր: Միակ անձի մը պատմութիւնը չէր կրնար գրաւել այն դիրքը՝ որուն մէջ պէտք է գտնուի ժողովրդական վէպը:

Առանձին Գաւիթի մը գրոյցին համար գուցէ կ'բաւէ «Սասունցի Գաւիթ» խորագիրը, շատ-շատ՝ Մհերի մը դերակատարութիւնն ալ զգացնող, «Մհերի Գուռ» երկրորդ բացատրութիւնով մը ածած: Բայց այդ զոյգ միացած կոչումներն ընդհանուր նկարագրէ գեռ շատ հեռի կ'պահեն վէպը: Անոնք անգոր են իրենց մէջ բովանդակելու համաժողովրդական վէպի մը գաղափարը:

Այդ երկուրեակ խորագիրը կարգաշնուս պէս՝ տարբեր ընդարձակ պատմական սահման մը չի պարզուիր մեր մտքին առաջ՝ քան այս թէ՛ գիրքը կ'պարունակէ «Սասունցի Գաւիթի մը և Մհերի անունով կոչուող դրան մը պատմութիւնը»: Այդչափ: Ատոր սահմանը յոյժ անձուկ է, պատմական միակ կամ առ առաւելն երկու գլուխ միայն:

Առաջինէն տասնեակ մը տարի վերջ լոյս աշխարհ եկող երկրորդ փոփոխակը, — Մանուկ Աբեղեանի «Գաւիթ և Մհեր» — աւելի ընդարձակ սահման մը չկրցաւ առ ժողովրդական վէպին: Նախամասը հանդիսացած առաջին պատմութեան թով առաջին անգամ փոփոխակ (variante) տուող այս երկրորդ ժողովածուն՝ եթէ մէկ կողմէ անշունչին տեղ շնչաւոր էակի մը անունովը կ'որոշուէր, միւս կողմէ ստորագուած անուններ մը՝ իրենց ստորագելիներէն մերկ կ'ձգէր, անելի՛ անորոշ և անհանրակաւ խորագիր մը փակցնելով ժողովրդական վէպին ձակատը, «Գաւիթ և Մհեր» փոխան «Սասունցի Գաւիթ կամ Մհերի Գուռ» գրական անունն:

Եկաւ «Սասնայ Ծուեր» կոչումով երրորդ պատմուածքը, (Գ. Վ. Յովսէփեանի), որ իր բովանդակակից ճիւղերով պահանջ կ'ընէր աւելի արտայայտիչ անուանադրութիւն մը՝ ժողովրդական վէպին, որ ա՛լ հասունցեր էր, ու մասնաւորէ աւելի՛ ընդհանուր հայկական նշակութիւն ունէր:

«Սասունցի Գաւիթ կամ Մհերի Գուռ» և «Գաւիթ և Մհեր» վերնագիրն ամբողջապէս չի արտայայտում վէպի բովանդակութիւնը, որով-

հետև բացի Գաւթից և Մհերից՝ վէպի մէջ կան և ուրիշ գործող գլխաւոր հերոսներ (Սանասար Ալի-Մելիք և ուրիշները)։ Այդ ինկատի ունենալով՝ մենք աւելի յարմար ենք գտնում (կ'ըսէ Յովսէփեան Գ. վրդ. «Սամայ Ծուեր»-ու իր յառաջաբանին մէջ) այդ վէպը իր ընդհանուր վերնագրով անուանել «Սամայ Ծուեր», որ նշանակում է «Սասունի Գթեր»։ Այդ կոչումը գեղեցիկ ու արտայայտիչ և միանգամայն ժողովրդական է, որովհետև Սամայ Ծուեր է վէպի մէջ գործող իւրաքանչիւր հերոսը, և մինչդեռ այսօր էլ ժողովրդի բերանում գործածական է Սամայ Ծուեր կոչումը՝ վէպի ամէն մի հերոսի համար, և ժողովուրդն այդ վէպը «Սամայ Ծուեր» է անուանում։ Սամայ Ծուեր կոչումը վէպի հերոսների համար՝ կայ և Հ. Սրուանձտեանի վարիանտում։

Հակառակ այսքան փաստաբանութեան՝ պարզ է սակայն թէ՛ «Սամայ Ծուեր» կոչումը, զոր դրեր է Յովսէփեան իր փոփոխակին վրայ՝ չէ՛ բնաւ ժողովրդական, և վէպին ազգային նկարագիրը չի դրօշեր։

Այդ կոչումը—Սամայ Ծուեր—Յովսէփեանի ի՛ր անձնական յարմար դասած անունն է. եթէ ըլլար բո՛ւն ժողովրդական, պէտք էր ուղղագրուէր «Սանու Ծուեր» կամ «Սասոնայ Ծուեր», ինչպէս իր յիշած Սրուանձտեանի փոփոխակին մէջ երեք անգամ կ'գտնենք ասոնց (մէկը գրականացուած) ձևը, — «Սասոնոյ Ծուեր», «Սանու Ծուեր», «Սանու Ծուեր» (1րդ Սրձ. 150, 154, 167)։

Արջափ որ Յովսէփեանի իր փոփոխակին մէջ, քանիցս կ'յեղյեղուի «Սամայ Տուն» կամ «Սասնայ Տուն» ձևը (եր. 104-107), բայց այդ դարձեալ պակասաւոր կամ կրճատ մէկ ձևն է, կարծէք, բուն ընդհանուր-ժողովրդական կոչումին, Բանահաւաք հայրը՝ կրցած չէ օգտուիլ իր փոփոխակին մէջ «Սամայ Ծուեր» կամ «Սամայ Ծուեր» յորջորջումներէն շատ ու շատ աւելի առիթներով յեղյեղուած «Սաման Տուն» կոչումէն, — միանգամայն ժողովրդական ու արտայայտիչ։

Անկէ ետք, իրարու ետեւէ լոյս աշխարհ ինկող չորրորդ հինգերորդ և յաջորդ տասնեակ փոփոխակները՝ նոր, աւելի՛ ընդունելի կոչում մը չբերին մեր վէպին։ «Սասունցի Գաւթ»,

«Մհեր», «Սամայ Ծուեր», վաղածանօթ խորագրերը՝ պատրաստ կոչումներ դարձան նոր փոփոխակներու համար։ Մէկը (6 րդ) պիտակուցաւ նաև «Սամայ փահլուաններ» կոչումովը, որ նոյնքան սանն է հաւաքողին անձնական կրթաֆայրութեան, և առաւելագէտ հէքիաթային և կրօնական-ըմբշական նկարագիր կուտայ վէպին։

Սակայն ժողովրդական վէպը, որ ամբողջ ժողովրդին պիտի պատկանի, չէ՛ր կրնար գոյութիւն ունենալ մէկ-երկու հերոսի կամ հերոսներուն թերի մէկ կողմին անունովը. առանց արտայայտիչ ընդհանուր կոչումի մը։ Ժողովրդի ստեղծագործ հանձարը մէկ հերոսի անձին մէջ չէ՛ր սահմանափակուիր, կամ հերոսներուն տղայական խեղճութիւններուն մէջ չէ՛ր որ աթոռ գնելու պիտի սահմանուէր. Հանձարն իրեն յատուկ սեռն ու սոհմն ունի։ Իրեն սեփական «դարոցը» կ'բանայ, — սո՛ւն մը՝ ուր պիտի ծնին, մեծնան, սնին ի՛ր սոհմին շարունակիչ տարրերը։

Հայ ժողովրդական վէպը, ահա կ'ներկայանայ մեզի իր սեփական սոհմին, դպրոցին ու ճուղին կնքանունովը, — ՍԱՍՄԱՆԵՑ ՏՈՒՆ։

Սանասար ու Բաղդասար ըսին, «Պապի՛կ», — ըսին, վը՛լա, դու մեր տան անուն մ'դրիր՝ ու բա՛լէ դրիր, Սասո՛ւմ ու Սասո՛ւմ... Ենդուց ետ՝ ըն տան անուն մնաց Սամայնց տուն։ (Իմ «Ս. Տուն» ԱԿԲ. 336-37, ԲՍԲ. 154)։

Այո՛, ժողովրդի վէպին ընդհանուր բովանդակիչ անունը «Սամանց Տուն» է, որ ինամի է անշուշտ «Քաջանց Տուն» կամ «Աղնանց Տուն» զոյգ կոչումներով ծանօթ նոյնքան ժողովրդական վէպի մը, և հոմանիշ է՝ «Զոջանց Տուն» յորջորջումին (տե՛ս Ս. Կանայեանցի գրքոյկը՝ Զոջանց Տան Սամայ Ծուեր)։

Այդ կոչումը, — Սամանց Տուն — առաջին անգամ իբր ընդհանուր անուն՝ վէպին տուին իմ Կառկաուցի և Սպարկերտցի անգիր պատմիչներս։

Ես ինձմէ՛ «յարմար դատելով» չէ՛ր որ դրի «Սամանց Տուն» անունը՝ հայ ժողովրդական վէպին (իմ գրի առած քառեակ փոփոխակներովը)։ Ես պարզ փոխադրիչն եղայ իմ անգիր պատմաբաններու։ Անոնք ըսես՝ — Խուրօ, Կրծկուկ Ակօբ, Կանչօ, վերջէն նաև «Յէրան-Թիւ-

բան՝ իս պատմիչ Մանուկ — չո՛րան ալ “Սասմանց Տուն” անունէն տարբեր ո՛չ մէկ կոչումով չէին յիշեր վէպը՝ ընդհանուր յիշատակութեանց պարային:

Իրենք ալ իրենց կողմէ չէ՛ր որ կուտային այդ կոչումը, այլ իրենց կարգին՝ առեր էին վէպին եղանակով երգուած դասական հասուածներէն, որոնք կ’պահեն անկասկած բարձր ու հարազատ հնութիւն մը, աւելի՛ քան արձակ պատմուած կտորները:

Ես կարծեմ սակայն, մօտիկ ապագայի մէջ, “Սասմանց Տուն” ինքն անբաւական պիտի յայտարարուի ընդհանուր հայ ժողովրդական վէպին իբր բովանդակիչ անուն: Երբ աւելի խո՛ր ուսումնասիրուին մեր հէքիաթներն ու հէքիաթավէպերը և արդէն եղածներուն քանակովը չգոհանալով՝ դեռ նորանոր փոփոխակ վէպ ու հէքիաթ հաւաքելով բաղդատուին՝ այն ատեն դուրս պիտի գայ — ես խորապէս համոզուելու եմ — հայ ժողովրդական ընդհանուր վէպը, որ սեփական չէ միմիայն Սասունի մը, որ անձուկ տեղական հայրենիքէ մ’աւելի՛՝ ոգևորուած պիտի ըլլայ ամբողջ հայ հայրենիքին հին սահմաններուն մէջ:

Այն ատեն “Սասմանց Տուն”ը՝ ճիւղերէն մէկը պիտի դառնայ բուն մա՛յր վէպին, որ կը կոչուի հաւանաբար “Ազնանց Տուն”, ազգ կագմող Աբրահամ անունէն: Այդ մա՛յր բունին ճիւղերէն պիտի ըլլան գուցէ՛ քաջանց կամ Զոջանց Տուն, և Յերան-Թիւրան . . . :

Վէպին՝ Սասմայ Ծուեր անունը տալն ուրիշ տեսակէտով մ’ալ աններելի է: Զի նկատելու է որ միմիայն Թշու-Դաւիթի ճիւղին մէջ է որ արտակերպոն, խենթուխելառ գործեր մը կ’երևան, մինչ Սանասար-Բաղդասարի և միւս ճիւղերուն հերոսները յայտնապէս չունին ծուութեան (խենթութեան) արժանի շարժումներ: Թողունք դեռ այն կէտը թէ՛ վէպին որակած ծուութիւնները՝ Դաւիթի սովորական անհատ մը չըլլալը ցուցնելու նշանակութիւնն ունին, և ծուռ մակդիրը պէտք է վերցնել՝ քաջ, անվախ, դիւցազն իմաստով:

“Սասմայ Ծուեր” անունով եղած փոփոխակներուն մէջ՝ իրա՛ւ ալ կան խենթութեան գիծեր, որք իրաւունք տուած ըլլան այդ կոչումին: Իմ կառկառեան և սպարկերտեան փոփո-

խակներուս մէջ—որչափ գիտեմ—ո՛չ մէկ տեղ չի՛ յիշուիր ծուռ մակդիրը Սասմանց Տան դիւցազներէն մէկ կամ միւսի հասցէին: Հաղիւ միայն “Սասնու ժողովակեր Դաւիթ” որակումին կ’հանդիպինք մէկ-երկու առիթներով, այն ալ օտարներու (Մարամելիքի մօր և Համտօղի) բերնով արտասանուած:

Կառկառցի և Սպարկերտցի պատմիչներուս դիւցազնավիպած “Սասմանց Տունը,” իր կոչումովն իսկ բովանդակիչ ու լուրջ իր անունին պէս լրջութեան խո՛ր երանգ մ’ունի ծայրէ ծայր: Կարծես իր պատմիչները՝ միւսներէն աւելի՛ լրջօրէն գիտակից են իրենց աւանդած վէպի պատմական դերին, և այնպէս իբր սովորական ժամանցի նիւթ ըլլալու սահմանուած հէքիաթի նկարագրէն բարձր դերով ճանչցած:

Միայն իմ երրորդ փոփոխակին (Վանի բարբառին) մէջ՝ տեղ մը կ’յիշուի “Սասման Ծուեր” յորժորջումը, որ առանձին ալ չէ սակայն, այլ կ’յիշուի “Սասուժ քաղաք”ի հետ միասին, “Սասուն քաղաք կէր (կար) Սասման Ծուեր, ձեռ կ’թալէր բարդի ծառեր . . . ևն”:

“Սասուժ քաղաք” կոչումին կ’հանդիպինք նաև Զ-րդ (Յովհ.) փոփոխակին մէջ, ինչպէս Հալաբայ քաղաք, Դիարբարու քաղաք, Մըսրայ քաղաք, Բըջայ քաղաք, Վանայ քաղաք, ևն: Իսկ Ե-րդին մէջ կ’յիշուի նաև “Սասմայ տեղ” կոչումը, որ գուցէ դեռ պէտք է ըլլայ. — Սասմայ գեհ (Սասմայ կողմ, երկիր):

Ժողովուրդը՝ քիչ անգամ փոխաբերութիւն է ըրիր իր վէպին մէջ՝ “Սասնու ծուռ” կամ Սասնու ծուեր” կոչումը գործածելով: Ընդհակառակն շատ սովորական գործածական է “Կաճետայ ծուռ”, Կաճետայ ծուեր” կամ աւելի ընդհանուր երանգով “Հատխու ծուեր” կամ “Հատխու գիտոսիկներ” ասացուածը: Կաճետայ ծուերը նշանաւոր են նոյն իսկ՝ և բաւական տարածուած գրոյցներ կան անոնց խենթութիւններուն շուրջը: Եւ այդ խենթութեան ալ բնական պատճառ մը կայ. առանց ասոր՝ Կաճետ ինքնին ծուռ չի արտագրեր: Աղբիւր մ’է իբր թէ այդ ծուութեան ստնտուն, որ կ’գտնուի Հատխու Կաճետ գեղին մէջ, և որմէ խմողը խելքի թեթևութիւն մը կ’ունենայ: Բայց թէ արդեօք իսկապէս բնական ջրի աղբիւր մ’է այդ թէ՛ տգիտութեան բարոյական աղբիւրը՝ ես չեմ կրնար որոշել:

Սակայն, Սասանեց Տունը, ընդհակառակն, չէ թէ խելքէ պակաս զիւցազներու ցեղ մ'է, այլ քաջամարտիկ զիւցազներու արքայական յայտնի և շարունակական սոհմ մը (dynastie), որմէ սերած են իշխանազուններ, «Արքայորդի՛ ի սերմանէ Սանասարայ՝ Խորն. Գ. Ծե.՝ 504):

Պիտի տեսնենք թէ՛ այդ սերունդն ուրկէ՞ և դէպ ո՞ւր:

Այց նախ քան այդ՝ քանի մ' խօսք ալ Սասանեց Տուն կոչումին Սասուն բառի մասին:

* * *

Վէպին զիւցազներուն շինած բերդին անունը կ'տարբերի փոփոխակէ փոփոխակ, նա-յելով թէ ի՞նչ ստուգաբանութիւն է տրուեր պատմողներուն կողմէ՛ վէպին բնոյթին համա-ձայն:

Անդրանիկ երկուրեակ եղբայրներուն (Սա-նասար-Բաղդասարի) շինած բերդը կը կոչուի Սասուն, ըստ առաջին փոփոխակի (Սրձ. 144) — «Չընքի որ անուն չըք դրի, քարէ սան սուն էք պարկէ՛ ընդրա անուն տ'եղնի Սանսուն, Սասուն»: Նոյն կը կրկնուի նաև երկու փոփոխակի մէջ, — «Չեր բերդի անուն՝ սուն վըր սան, — Սասուն (3րդ՝ 19, և 10-րդ՝ 17):

Իբր ստուգաբանական հիմ կ'տրուի՝ «քարէ սան (սիւնին) սուն պարնել՝ կամ «սուն վեր սան» (սիւն՝ սիւնի վրայ) բունագրօս բացատրութիւնը, որ սակայն բուն պահուած անուանակոչութեան մէջ չի մնար Սան-Սուն, այլ՝ Սա-սուն ձևովը:

Խուճը մը փոփոխակներ կ'համաձայնին աւելի՛ բանաւոր ստուգաբանութեան մը վրայ. — Սասուն ձևին համար:

Այսպէս իմ կառուու փոփոխակիս մէջ՝ պա-պիկը կ'ըսէ. % «էսիկ էլ տուն չի, էսիկ էլ տան բազար չի՛ . . . էսիկ Սասուն՝ ա, Սասուն . . .»: Ու երկրորդ (Սպարկերտի) փոփոխակովս նոյնն աւելի կորովի կ'արտայայտուի, — «Վայ ապրի՛ս դու պապի՛կ, Աստուած քի արքայութիւն տայ . . ., մեր տան անուն մ՛հ գրի՛ր՝ ու բալէ գրի՛ր, — Սասուն ու Սասուն . . .»:

Միևնոյն ստուգաբանութիւնը նաև ուրիշ հինգ փոփոխակներով, — բերդին սարսափելի Սասուն մեծութեան նկարագիրն իբր միտկ պատ-ձառ այդ անուանակոչութեան:

Եօթերորդին Սասուն ձևը տառապէս թէև

տարբեր՝ բայց իմաստով նոյն է Սասուն ձևին հետ: Արդէն անմիջապէս ստորէջ տրուած բա-ցատրութիւնն է. «Ահագին, սարսափելի»:

Սասուն բառը՝ վերցուած ահագին, սար-սափելի նշանակութիւնով՝ գործածական է ժողո-վրդի հասարակ բարբառին մէջ ալ: «Սասուն՝ կրակ», «սասունական կրակ» կ'ըսեն վանեցիք՝ անդիմադրելի, տարածուն, բարկ կրակին, «Սա-սուն տուն մ'ի շինէ՛ որ . . .», «Սասուն քարե՛ր կէր դան (կար հոն)». ևն. ևն. ոճեր՝ գործածա-կան են տեղական բարբառին մէջ:

Իհնք այդ բառին կ'հանդիպինք նաև ուրիշ առիթով մը, և երկու տեսակ հնչումով: Այդ՝ «Սասան ժամ» կամ Յասան խաչ՝ ձևերն են: Առաջին հնչումը կ'գտնենք մեր նահանգի հա-րաւարնիկներու (կառուա, Մոկս, Սպարկերտ ևն.) բարբառին մէջ, իսկ երկրորդը՝ մեր Վանին:

Սպարկերտցի Մանուկէ երբ տեղեկութիւն-ներ կ'քաղէի «Ծրագիր Հայ Ազգագրութեան» (Խալաթեանցի) 251րդ հարցումին համար՝ կ'ըսէր. — «Գեղէն՝ գեղական ամէն-մէկ բան մը կուտայ՝ կ'թափին միատեղ, ամէր մէկտեղ մատաղ կ'ընեն, հաց կ'ցրուեն աղքատներու, անոր համար կ'ը-սեն Սասան ժամ, — մեծամբոխ ժամագատարագ»:

«Սասան ժամ» կամ «ցասան ժամ» կ'յիշ-ւին մեր վէպին փոփոխակներէն (3-րդ՝ 90, 1-րդ՝ 153) . . . Ըտոնց գեղ ցասան ժամ է, պատա-րագ է, տղէն էդ ապով անգցիք է՛: «Նախրուրդ էսաց, Գաւիթ, մեր գեղ սասան ժամ ի . . ., իս էրթամ ճաշ պիրիմ՝ ուտինք»:

Սասուն կամ սասունի սոսկառիթ նշանա-կութիւնն է որ կ'երևայ դարձեալ կուգ-Բագօի խօսքերուն մէջ. «Ես գիտէի՛ Սասուն դաշտ էր ու դուրսն. Ես ի՞նչ գիտէի քար էր ու կապան. Մարդ էր ելեր սասունական — variante՝ գա-զանական»: «Սասունական՝ին փոխան յիշուած գազանական հոմանիշն ալ ինքնին առանց պատ-ձառի չ'է յատկացուեր Սասանց տան ու տնե-ցիներուն անունին, գործերուն ու երկրին:

«Յէրան-թիւրան՝ի մէջ յեղյեղուած և ազ-գարանութեան վերին կատարը դրուած՝ Սասուն՝ կուալ երկարաշեշտ անունն ալ, կարծեմ, ունե-նալու է ոչ տարբեր նշանակութիւն՝ քան մե՛ծ, ահեղ, սարսափելի, քաղաւոր (կռալ):

Մէկ կողմ՝ թողլով պարսիկ Սասուն, սասան (կան) անունին հետ մեր վէպին սասուն և սասուն

կոչումին առնչութեան հաւանականութիւնը, իմ ուշը կը կեդրոնանայ մասնաւորապէս աւելի հին, բւեռագրական անունի մը վրայ:

Յայտնի է թէ այդ նոր կարգացուած արձանագրութիւններուն համեմատ Մուսասիր կը կոչուէր ա՛յն երկիրը՝ որ հիմա հուան Մուշ-Տարօնն է: Այդ հին կոչումն աւելի պատշաճ է բաղդաստի Մուշ և Սասուն, Սասուն երկրանուններուն հետ:

Հրջելով Մուսասիր անունը՝ կ'ունենանք րի-Սասուն: րի կամ իր կրնայ արդեօք ձայնաշարութիւնը սեպուել ուր մասնակին, որ Սասիմ բառին հետ կը կազմէ Մուսասիրի հին թագաւորի մ'անունը, Աւրասիմ (Բգմվպ. 1909, թիւ 2՝ 74 բ, և՛ ստորէջ):

Աւրասիմի վերջին վանկն ալ՝ կազմիչն է գուցէ Սասունի Սիմ կամ Սել-սար լեռնանուններուն:

Այս կէտին վրայ ուշագրութիւնը կ'հրաւիրեմ բաղդաստական լեզուաբանութեան ու պատմա-ագագրութեան հմուտ բանասէրներուն, որք պիտի կրնան մեծ ծառայութիւն մատուցանել մեր աշխարհի և դրացի երկիրներու նախնի մշուշապատ տարածութեան:

Յիշելով նաև "Յէրան-թիւրան" վէպիս մէջ յիշատակուած "Սուսանայ Դաշտ" տեղանունը, որ գուցէ Սասունայ Դաշտ՝ պէտք է ըլլայ (կամ Հաւարշանայ)՝ ես կ'անցնիմ Սասանց Տան տեղին:

* * *

ՍԱՍՄԱՆՑ ՏՈՒՆԻՆ ՏԵՂԸ.—

Սասանց Տան անդրանիկ երկուրեակ գիւցազներն են Սանասար և Բաղդասար:

Առաջին փոփոխակը (Սրձ. 137) Սանասարը կ'յիշէ իբր կրտսեր եղբայր, և Բաղդասար անունին տեղ կ'դնէ Աբամելիի իբր երէց եղբայր:

Երրորդին՝ Աբարանի բարբառով փոփոխակն ունի Սանասար և Ասիմելիի անունները՝ երէցութեան ճիշտ կարգովը (3-րդ Յվս.՝ 13): Իսկ Մովսէս բարբառովն ունի Սանասար և Բաղդասար անունները, նոյն կարգով:

Ութերորդ պատմուածքն ալ համանման է իմ զոյգ փոփոխակներուս (Տրդ. Հյկնի.՝ 5): Եօթերորդին Արարատեան փոփոխակը նոյնպէս (7՝ Աբդ.՝ 48):

Եթէ փնտռենք այս անունները մեր ամե-

նէն հին պատմագրքին մէջ, անոնց որոշակի յիշուածը կը գտնենք թէ՛ մէկ թէ՛ միւս անուններով: Խորենացին անցողակի յիշելով Սենեքերիմ թագաւորի որդիներուն Հայոց մէջ գալը՝ կուտայ Ադրամէլիք և Սանասար անունները, երէցն իբր թէ Ադրամէլն ըլլալով Բայց քիչ վարը՝ կ'դնէ Արգամոզան (փոխան Ադրամելի) վրը կրտսեր եղբայր Սանասարի:

Այստեղ կ'թելադրուիմ խորհելու՝ արդեօք Արգամոզան անունը Ադրամելի երկրորդ անունն է զոր կրկնութենէ խուսափելու համար կ'յիշէ Խորենացին քիչ վարը ա՛յն տեղէն՝ ուր կուտայ անոր բուն անունը, կամ թէ՛ Արգամոզան կոչուածը Ադրամելի երէցութեան տիրողն է, (արգ—մեծ, արք. տեսնել նաև իմ Սպարկերտի փոփոխակը՝ 649, Արեադ թագաւոր) զոր իբր անուն է աւեր Խորենացին:

Կայ նաև ուրիշ վարկած մը: Արդեօք Արգամոզանն ալ երրորդ եղբայր մէ Ադրամէլին ու Սանասարին, թէև պատմութիւնն ու ժողովրդական վէպը միաձայն՝ երկու եղբայրէ աւելի չեն յիշեր ոչ մէկ անգամ՝ ի Հայս եկած (տեսնել քիչ վարը): Երրորդ եղբոր մը գոյութիւնն ընդունելուն, Արգամոզան անունն համահունչ Հաւա անունը կուգայ մէկտեղ, որ գիտենք թէ փեհլիվան մակդիրովը կը կազմէ Սասանց Տան եօթերորդ ճիւղը, Համա փառիվան:

Այսպէս՝ Արգամոզան անունը տրոհելով՝ կ'ունենանք Արգ- Աւ (ո) զա(ն) ձևը, որուն Աւզա վերջամասը՝ շատ բնականօրէն կրնար դառնալ քրդախօս հայերու համազա ձևին՝ այդ անունը ամէն օր գործածող անգիր ժողովրդի մը լեզուին վրայ:

Հիմա, Խորենացու այդ հատուածն ուշի-ուշով նկատի առած՝ կ'տեսնենք հակասութիւն կամ թիւրբանցութիւն մը պիտի ըլլայ բնագրին մէջ: Առաջին անգամ՝ Սենեքերիմի ի Հայս փախըտական զոյգ որդիներուն անունները կ'դնէ Ադրամել և Սանասար, իսկ ատոնց՝ մեր երկրի մէջ տեղաւորուելը յիշելուն՝ Սանասար և Արգամոզան:

Գարձեալ խորագիրն ու բնագիրը (ԻԳ-րդ գլխուն)՝ զիրար կ'հակասեն ու կ'լրացնեն նոյն տտին: "Յազագս որդւոյն Սենեքերիմայ, և թէ Արծրունիք և Գնունիք և բղեշխն անուանեալ Աղձնեաց՝ ի նոցանէ, սերեալք՝ կ'ըսէ խորագրին մէջ, մինչդեռ երկրորդ հատուածին վերջը կ'զրէ՛

“Իսկ Արգամոզանն յարեւելից հարաւոյ նորին կողմանն բնակեալ, ի սմանէ ասէ պատմագիրն լինել Վերծրունիս և գնունինս”:

Ինչ պիտի հասկնանք՝ այս դերանունին՝ տեղ մը յոքնակի տեղ մը եգակի գործածուելէն: Անշուշտ սա թէ՛ խորագրին յոքնակի դերանունին (ի նոցանէ— որդւոցն Սենեքերիմայ) ուժովը՝ Արծրունիք և Գնունիք սերած են Ասորեստանի Սենեքերիմ թագաւորի ՚ի Հայս փախստական որդիներէն, Ադրամել և Սանասարէն, կամ Սանասար և Արգամոզանէն: Իսկ երկրորդ հատուածին “ի սմանէ” եգակի դերանունէն պիտի հետեցընենք որ՝ Արծրունիք և Գնունիք կ’սերին Արգամոզանէն (որդի Սենեքերիմի, և եղբայր Սանասարի), որ նոյն է Ադրամելի հետ:

Խորենացին ուրիշ տեղ մ’ալ (Բ. Գիրք. Է. 165)՝ այդ զոյգ նախարարութիւնները սերած կ’համարի Սենեքերիմի մէկ զաւակին, առանց անունը յիշելու. “Եւ են այս երկու տունքս ի զաւակէ Սենեքերիմայ, Արծրունիս և Գնունիս”:

Սենեքերիմի այդ մէկ զուկին անունը կարծէք որոշուած է հետեւեալ կտորին մէջ. “. . . Այո՛, ասէ (Շաւասպ Արծրունին առ Շապուհ) ճանաչեմ և զիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ” (Խորեն. Գ., ԾԵ. 504):

Սակայն թովմա Արծրունին կ’իշէ Ասորդան(իս) անունով երրորդ որդի մ’ալ՝ Սենեքերիմի (Թ. Արծ. 36): Ասորդան — ինչպէս կ’երևի — իրենց որդին էր, և Սենեքերիմ հօր երուսաղէմի պաշարումէն դարձին՝ նենգութիւնով անոր տեղը կ’գահակալէ, իսկ Ադրամելէր և Սանասար կ’սպանեն Սենեքերիմ հայրերնին ու կ’փախչին Հայաստան:

Կ’թուի թէ՛ իմիններուս հետ մէկ-քանի փոփոխականներուն յիշած Բալդասար տնունը — զոր չունին ոչ 1-րդ և ոչ 3-րդ փոփոխականները (վերջինիս Աբարանից բարբառին) և ոչ գրաւոր պատմութիւնները՝ նոյն եղած պիտի ըլլայ Սենեքերիմի երրորդ որդի Ասորդան(իս)ի հետ:

Ասոր աւելի հաւանականութիւն պիտի գտնենք զեռ յիշելով Բիւռոսի խօսքերը զոր կ’իշէ խորէն Ստեփանէ՛ իր խորենացու աշխարհաբար թարգմանութեան Ծանօթութիւններու կարգին (N° 128)՝ Յովսեփիոս Փլաբիոսի տուած մանրամասնութիւններէն. “. . . Այս գործից զարհուրած, ժողովուրդը արքորեց նոցա՝ նոքա

փախան Հայաստան, և նորա կրտսերագոյն որդին Ասար-Բախոդ յաջորդեց նրան”:

Արդ Ասար Բախոդ անունը շրջած՝ կ’ունենանք Բախոդ-Ասար, որ մօտիկ կուգայ Բախ(ո)դ-Ասար անունին, — Բաղդասար՝ ժողովրդի բերնին մէջ:

Յաւակնութիւն է անշուշտ այս տեսակ ըստուգաբանութեան փորձը, բայց կրնայ անհիմն չըլլալ, կամ ծառայել աւելի՛ հմուտներուն խորին ուշադրութիւնը սեւեռելու՝ այս կէտին վրայ: Ժողովրդական կրճատ գործածութիւնով՝ Բաղասր կ’ըսեն Բաղդասարին: Բայց կան նաև Բաղդիկ և Բաղդօ, կամ Բղդիկ և Բղդի, Բղդօ, Բասօ, Բաս-Բաս ձևերը:

Գուցէ ապագայ ուսումնասիրողները՝ կապ մը գտնեն նաև Բա(ղ)ս(ար) — Բազ անուններուն մէջ, նկատելով որ Բազ եղբորորդին է Արմենակի, որ ծներ է Բաբելոնի մէջ, ինչպէս երկիցս կ’իշատակէ Խորենացին (Ա. Ժ. 53, ԺԲ.՝ 60):

Բաբելոն, կ’իշուի ժողովրդական վէպին մէջ Բաղդաս անունով (Է-րգ՝ 143-44), ուր է ըստ վէպին՝ Սասմանց Տան Բաղդասարի գերեզմանը, ինչպէս որ քաղաքն ալ իր անունով կոչուէր է Բաղդաս:

Բաբելոն քաղաքը սակայն շիներ է, ըստ աւանդութեան, Նեբրոլթ կամ Բէլ, որուն այս վերջին անունը՝ Ասորեստանի թագաւորներու կարգին՝ Պաղ կամ Պալլոս դարձած Սարդանա-Պաղ, — Պալլոս)՝ անկարելի է որ չ’իշեցնէ Բաղդասար անունը, որուն տարբեր մէկ ձևով երևցած Ասար-Բախոդ կամ Ասորդանը կ’իշխէր Բաբելոնի վրայ, ինչպէս թովմայի բերնով յիշեցի քիչ վերը:

Սանասար անունը, որ թէ՛ գրաւոր աւանդումներուն և թէ՛ ժողովրդական անգիր զրոյցներուն մէջ պահուած կ’տեսնենք միակերպ, անփոփոխ՝ տեղական կրճատ ձևով կ’որջորջուի նաև Սանօ կամ Սանոս, երբեմն ալ Սանիկ:

Վէպին անփոփոխ պահած Սանասար անունը՝ անշուշտ տարբեր մէկ ձևն է Սալմանասար ասորի անունին: Այս վերջինէն ալ հաւանաբար ծագած ըլլալու է Սալման անունը, որուն կ’հանդիպինք “Յէրան-Թիւրան”ի հայ-պարսկական մէջ (Սալման-փալէվան, Սալման-է-Սընգի): Ասար բառը՝ որ իբր անանց տրուած կ’տեսնենք Ասորեստանի շատ թագաւորներու անունին՝ անբաժան է նաև

մեր վէպի Սանասար և Բաղդասար անուններէն,— Սան-Ասար, Բաղդ-Ասար: Նոյնը նաև "Յէրան-Թիւրան"ին. — Սալման-Ասար, Սալման-ասար, Ս-(ալմ)ան-ասար:

Ասար կամ Ասոր նոյն են ասորական լեզուին մէջ: Արդ գարմանալի չէ՞ երբ կ'գտնենք Սալմոյ-Ձոր յորջորջումը այն հայ գաւառին համար, ուր է Սասուն, Սանասարի հիմնած Սասմանց Տունը . . . "Նկատի առնենք որ ս և ձ տառերը լծորդ են միշտ, օտար լեզուէ փոխադրութեան մէջ, և հետևաբար կարելի է հնչել Սալմոյ Ձոր՝ օտարի մը հնչումով Սալմասոր: Ձոր և սոր բառերն արդէն իրենց սկզբնական սահմանին մէջ հոմանիշ են:

Մենք ունինք գեռ ևս ուրիշ տեղական անուն մը, որ կ'երթայ այդ նոյն Սալմանասար և Բաղդասար ասորական հնչումներուն վրայ:— Վարագայ Սարի մէկ ձորի մէջն է Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքը, որ կը կոչուի նաև Սալմապասու Ս. Գրիգորի վանք, հաւանաբար այն պատճառով որ՝ քովը կայ Ջառնապաս անուն աղբիւրը՝ իր բարեհամ ջրովը նշանաւոր:

"Սալնապատ" կամ "Ջառնապատ" (վերջինս ժողովրդական յորջորջումով) իր մէջ ունի, կարծէք, շրջուած ձևը՝ Բաս-Սար ("Բասո, Բատ-Բատ, Բաղդասար) անունին . . . :

* * *

Գանք հիմայ բուն խնդրին:

Ուր հաստատուեցան Ասորեստանի Սենեքերիմ թագաւորի փախստական զոյգ զաւակները: Եւ որո՞նք են իրենց սերունդը կազմող նախարարութիւնները:

Հիմ բունելով գրաւոր և անգիր աւանդութիւնները՝ մենք կրնանք որոշապէս ըսել թէ՛ պատմական "Սանասունք"ի և զիւցազնավպիական "Սասմանց Տուն"ի ամբողջ արարուածները տեղի կ'ունենան ծովակի մը բոլորտիքի երկիրներուն մէջ:

Այդ ծովակը գրաւոր յիշատակարաններու յիշած Աղւոյ, կամ Բզնուհեաց և կամ Վանայ Սովն է, ասոր կասկածելու տեղի չկայ:

Արդ, Սենեքերիմի որդիներ Ադրամէլէք և Սանասար՝ Նինուէէն կ'փախչին կուգան (ի Հայս) "յարեւելս հիւսիսոյ", և բուռն գնդաւ . . . քան

մտանեն ի լեառն Սիւ, որ յանուն հաւոյն իւրոյ Սեմայ անուանեալ էր, (Թ. Արծր. 5 և 36 երես), եւ "յորոց զմինն յարեւմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաղ նախնին, այսինքն զՍանասարն, և ի սմանէ սերեալ լցին զՍիւնց տասցեալ լիառն" (Խորն. Ա. Իգ. 106):

"Իսկ Արգամոգանն յարեւելից հարաւոյ նորին կողմանն բնակեալ, ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս" (նոյն տեղ):

Առաջնորդուելով զոյգ պատմագիրներուն ցուցած ճամբովը, ուրեմն, մենք կ'տեսնենք որ Ադրամէլէք և Սանասար փախչելով Ասորեստանի Նինուէ քաղքէն՝ իրենց սահմանամերձ Հայաստան՝ "բուռն գնդաւ" կ'դիմեն դէպ արեւելեաց հիւսիս (Թ. Արծր. 36), ուր էր Հայոց թագաւորը, Սկայորդին:

Սկայորդին անշուշտ սիրով ընդունելով Ասորեստանի հայրասպան փախստականները, Ադրամէլէք և Սանասար, անոնց կ'յատկացնէ բնակութեան տեղ:

Անոնցմէ մէկը՝ Սանասար (իրեններով) կը բնակցնէ մեր աշխարհի արեւմտեաց հարաւը, Սիւմ լեռան վրայ, զոր ապա բազմանալով կ'իջնեն յաջորդ սերունդներ: Վերջէն այդ ցեղի պերճքն և գլխաւորքն . . . մտերմութիւն վաստակոց առ թագաւորն մեր ցուցեալ, բոլորտութիւն կողմանցն արժանաւորեցան աւնուլ" (այսինքն՝ Բոլորտութիւն Աղձնեաց) (Խորն. Ա. Իգ. 106):

Կ'մնայ Ադրամէլէքին յատկացած վայրը նկատի առնելը

Խորենացին անմիջապէս կուտայ այդ տեղեկութիւնը, բայց ոչ թէ Ադրամէլէքի անունով այլ Արգամոգանի: Իբր անմիջական կցորդ "Յորոց զմինն" (Սանասար) յիշուածքին՝ կ'յարէ. "Իսկ Արգամոգանն յարեւելից հարաւոյ բնակեալ (լուսութեամբ՝ Սկայորդո՛ւ կողմէն), ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս":

Եթէ ընդունինք Արգամոգանն իբր Ադրամէլէք կամ Բաղդասար (ըստ ժող. վէպին)—և ուրիշ կերպ կարելի չէ՛— այն ատեն կ'ունենանք անգիր և գրաւոր պատմութեան բաղդատարար համաձայն հետեւեալ արդիւնքը:—

Սանասար որ ժողովրդական վէպին համեմատ առաւելապէս երէց եղբայր կ'ձանչցուի,

կ'ընակի Հայոց Աշխարհի արեւմտեան-հարաւ՝ Սիմ լեռան շուրջը, և հիմնադիրը կ'ըլլայ Սանասարեան տոհմին, կամ Սասան(ց) Տուր-ին: Պատմութիւնը կ'ըսէ՝ «Եւ ի սմանէ սերեալ լցին զՍիմն ասացեալ լեռան», կամ՝ եւ եղեալ նոցա ի Սիմ լեռին մինչ ՚ի Տիգրանն հայկազնեաց»:

Ժողովրդական վէպը կ'ըսէ՝ «Սանասար նրա տուկ էր Սասուն», «Արամէլէք . . . օրերուց օր մ'լէ գարկեց գնաց չուր ՚ի Մըսըր (1), սպանեց զՄարայ թագաւոր . . . , ու նստաւ Մըսըր, եղաւ թագաւոր «(1-րդ՝ 145): — «Ասիմէլէք էլաւ . . . ջոկաւ . . . , գնաց հասաւ ուր հօր քաղաք . . . , (հոն) բերեցին Ասիմէլէք զրին թագաւոր . . . : Էդի մնաց էր տեղ, ետ դառնանք՝ էրթանք Սանասարի կուշտ: «. . . Սանասարին եղաւ մէկ տղայ» (Սասուն Բերդի մէջ) [3-րդ՝ 19-20]: — «. . . Սանասարին էլ զրին թագաւոր Սասունայ մէջ՝ 7-րդ՝ Ա՝ 49):

Աւրեմն Սիմ լեռան շուրջ բնակողը Սանասարն է, և իր սերունդը տակաւ բազմանալով կ'լեցնէ ամբողջ Սիմ լեռան բնակելի մասերը: — Աղձնէք-Տուրուբերան:

Սիմ լեռը, կ'իշխատակուի «Աղձնեաց Սասնոյ գաւառին մէջ, և կը կոչուի նաև Սասուն, Խոյթ և Տօրաս»: Իսկ Մուշի տեղական յորջորջումով այդ լեռը երկու անուն ունի, — Սիմ սար և Սեւ սար (սև սարեր), ինչպէս կ'տեսնուի Մուշի աշխարհացոյց քարտէսէն:

Ժողովրդական վէպի բոլոր փոփոխակներու մէջ, արդէն կ'հանդիպինք Սեւ-Սար կամ՝ Սասնոյ-Սար կոչումներուն, որ նոյն է Սիմ կամ Սև Սարերու հետ: (Կայ սակայն ուրիշ վարկած մը Սև Սարը Մասիս ըլլալու մասին):

Իսկ Աղբամալէք կամ Բաղբասար կամ Արգամոզան, վերջապէս Սանասարի եղբայրը, — որ ժողովրդ. վէպին մէջ առաւելապէս կրտսեր եղբայր կ'ընանչցուի, — բնակեր է մեր աշխարհիս արեւելեան-հարաւ (Խորն.), ամէն հաւանականութեամբ Վանայ Ծովակին եզերքը, այսինքն բուն իսկ Մուշ-Ռշտունիք-Վանտոսպ գաւառներուն մէջ:

Աւրեմն Ասորեստանի փախստական արքայորդիներէն Սանասարն ըլլալով Սասմանց Տան նախահայր-հիմնադիրը՝ Աղբամալէք-Արգամոզան-Բաղբասարն ալ կ'ըլլայ Վան-Վասպուրականի

Արծրունեաց տոհմին հիմնադիրը: Ասոր մէկ ճիւղէն ալ հաւանաբար, Գնունեաց նախարարութիւնը:

Բայց ի՞նչ անուն տալ Սասմանց Տան կամ Սանասարի սերունդէն առաջացած նախարարական տոհմին:

Մեր պատմագիրները՝ Տարօնի նախարարական նշանաւոր տոհմին անունը Մամիկոնեան կ'իշխեն, եկած՝ իբր թէ արևելեան-հիւսիսէն Հայոց երկիր փախող ճեմաց Մամգուսէն: (Խորն., Թ. Արծր.):

Մամիկոնեան և Արծրունի տուները, ըստ վերոյիշեալ զոյգ պատմագրերուն՝ փոխադարձ խնամութիւն ունէին իրար հետ— . . . Բայց Սամելի Մամիկոնեանի զատուցեալ գնաց առ կայսրն Արկադ . . . , երկնչելով ի Պարսից և ի քեռեաց իւրոց Արծրունեաց «(Խորն. Գ. Խը. 483-84):

Արծրունիք ուրեմն, քեռիները — մօրեղբայր — էին Մամիկոնեաններու:

Իսկ Թ. Արծրունի (216) կ'ըսէ— «. . . զԳուրգինայ (Արծրունի) ասեմ, զյոյժ փառացի, և ճոխ և նազելի գնախաբահ նստեալ զարմէ, յերկուց թագաւորականց զաճմանն սեռի բերելով զբողբոջս, զՍենեքերիմայն, և ի մօրէ զՄամգոնեացն»:

Այստեղ ալ Մամիկոնեաններն են մօրեղբայր (քեռի)՝ Արծրունեաց տոհմին, եթէ այդպէս պէտք է հասկնալ՝ «ի մօրէ զՄամգոնեացն» խօսքովը:

Ամէն պարագային՝ Սասմանց կամ Մամիկոնեանց Տունը պէտք է բնակած ընդունիլ Վանայ Ծովակին արևմտեան-հարաւակողմը. իսկ բուն Արծրունեաց Տունը՝ նոյն ծովուն արևելեան-հարաւային եզերքը:

Այստեղ միանգամ կ'ըսուի ահա Արեւելոց և Արեւմտոց իշխանութիւններու գոյութեան հարցը, որուն յաճախակի կը հանդիպինք հէքիաթներու և հէքիաթավէպերու տարտամ ամբողջութեան մէջ, նոյն իսկ ներկայ Սասմանց Տան երկրորդ փոփոխակին՝ Համլա-փալէվանի ճիւղին սկիզբը՝ «Արևելոց և Արևմտոց թագաւորներ» ու անունովը կ'ըսուի:

Ընդունելով թէ բոլոր ժողովրդական հէքիաթներու մեկնակէտ մը կայ, Ազգային վէպը կրնայ ըլլալ միայն, ուրեմն վէպին ամէն մէկ հասուածն իր որոշ նշանակութիւնն արժէքն

1) « Մո'ւսուլ » չէ թէ եգիպտոս' (աշխարհագրագետ):

ունի հէքիաթներուն համարոյ հատուածները քննասիրելու տեսակէտով:

Վէպին ունեցածը՝ հիմնական պէտք է սեպել. իւրապատուի և աճեցուն, իսկ հէքիաթներունը՝ փոխառիկ: Վէպը բնական ինքնարժէք լոյսի վառարան մ'է, հէքիաթները՝ փոխառիկ, ցոլացած լոյսով լուսաւորուող մոլորակներ միայն: Մէկն Արևն է, միւսները, միգամած արբանեակներ: Այս է փոխաբերաբար ժողովրդական Պատմավէպի արեգակնային Գրուքիւնը:

“Արևելոց-Արևմտոց”, կամ “Արևելայ-Արևմտայ” անուններով սահմանուած որոշ իշխանութիւնները՝ միայն ժողովրդական Վէպին մէջ չէ որ երևան կուգան: Հէքիաթներ որոնք աւելի մշուշապատ են քան Վէպը, հիւսուած են արդէն այդ երկու սահմաններուն անունովը: Արևմտայ կողմերը՝ “Արևելայ” են կամ “Արևմտայ”: Արևելոց թագաւորն որ կ'ըսէ Արևմտոյ թագաւորին վրայ, կամ “Արևելայ և Արևմտայ թագաւորներն են որ խնամութիւն կ'հաստատեն իրարու հետ:

Վերջապէս Արևելք և Արևմուտք երկու սահմանաձայրեր են ժողովրդական Վէպին ու հէքիաթներուն անհամար միգամածներուն մէջ, որոց մէջտեղ փուռած ասպարէզին վրայ թատերաբեմը կ'երկարաձգուի, կամ կ'սեղմուի ըստ կամս:

Արևելքի և Արևմուտքի կոիւճ, կամ հաշտութեան աղեղի ձգում: Լոյսի ու խաւարի յաւիտենական պայքար, բարի-չարի յաղթանակ՝ ժամանակէ ժամանակ . . . շարունակ:

Բայց այստեղ, մեր վէպին համար՝ այդ Արևելեան ու Արևմտեան մտաւոր սահմանները սեղմ կարկինի ծայրերով են գծուեր: Արևելոց ու Արևմտոց թագաւորներուն երկիրները շատ հեռու չեն իրարմէ. հազիւ գուցէ ջուր մ'ու հող մը կ'բաժնեն իրարու քաղաքները:

Ամէնէն հաւանականը, Վէպին համար, այդ բաժանող ջուրը Վանի Ծովակն է, որուն երկու ափերուն վրայ դէմ-դէմի կ'նստին Արևելոց ու Արևմտոց քաղաքի պարիսպները:

Հէքիաթներուն մէջ՝ կրնան այդ պարիսպները ու անոնց ներքը թագաւորող ուժերը ձգուիլ գեռ աւելի՛ դէպ Արևմուտք ու Արևելք, շատ աւելի ընդարձակ միջոց մը պահելով մէջերնին:

բայց ամէն պարագային՝ յորձանքի պտոյտը Վանի փոքրածիր լճակն է. երկանաբարին պորան է ան.— շուրջը կ'դառնան արտակերպոն մասնիկները՝ թափառիկ պտոյտով:

Մաս մը փոփոխակներու մէջ ալ կ'հանդիպինք “Արևելոց” կամ “Արևմտոց” թագաւորութիւններու յիշատակութեանը: Բայց մասնաւորապէս երրորդին մէջ կ'տեսնենք նոյն ուխտագրութիւնը “Արևելոց կողմի մարդ”ուն ու Գաւիթի մէջ, որ “Արևմտոց թագաւորի տղէն” է:

— “Գաւիթ հարցուց թէ՛ — Դու ո՛ր կողմի մարդն ես: Ըսեց “Ես Արևելոց կողմի մարդն եմ”: Ըսեց. “Գաւիթ, իմ խոշունին դադմիշ մ'եղնի, արի՛, ես դու ահգ ու շարթ էնենք՝ Ըսեց. Ի՞նչ ահգ ու շարթ էնենք: Ըսեց. Մկայ ես լէ ազաբ, դու լէ ազաբ, մենք օր կարգուանք քրդի տղայ էղաւ, ընձի աղջիկ, իմ աղջիկ տամ քու տղին, քրդի ախջիկ եղաւ՝ ընձի տղայ, քու ախջիկ տուր իմ տղին”:

Այստեղ ուրեմն Գաւիթ՝ արևմտայ թագաւորական ուժին ներկայացուցիչն է, իսկ հակառակորդը — Մըսրայ բանակին մէկ թևը — Արևելայ:

Եթէ նկատենք որ Համգա-Փալէվանի Սասմանց ձիւղէն սեպուելը՝ կապ մ'է որով կ'միանան Գաւիթ ու փալէվան, ուրեմն ուխտագիր կողմերէն մէկին անունն է Գաւիթ, միւսին Մըսրամէլը:

“Արևելոց” ու “Արևմտոց” դէմադէմ թագաւորութիւններու յիշատակութիւնն ալ լուրջ ուսումնասիրութեան նիւթերէն մէկն է Հայ Պատմավիպումին համար:

Գառնանք մեր նիւթին:

Հաւանաբար, ինչպէս գրաւոր պատմութենէն ալ յայտնի է, Սանասարի և Բաղդասարի Ազրամել կամ Արգամողան) սերունդները, ժամանակի անցումով օտարացան, խորթացան իրարմէ, և աւելի վերջերը նոյն իսկ թշնամական դիրք բռնեցին իրար հանդէպ:

Գէթ այդպէս խորհիլ կուտայ՝ նեղ իմաստով ժողովրդի յիշած հէքիաթներուն “Արևելոց և Արևմտոց թագաւոր”ի սահմանումը, ընդունելով Վանայ Ծովն իբր առանցք: Թէև

ի հարկէ, հէքիաթային կռիւներուն թատերա-
վայրը, կըրնայ աւելի ընդարձակ սահմաններու
վրայ երեցած սեպուիբ: Նոյնքան Արևելք և
Արևմուտք է անշուշտ՝ ժողովրդի հէքիաթնե-
րուն համար՝ Յէրան և Թիւրանը, Պարսկաստանն
ու Հայաստանը, Հայաստանն ու Բիւզանդեան
կայսրութիւնը, ընդարձակ ըմբռնումով:

Կամ թէ՛ մեր վէպին յատուկ տեղեկա-
գրութիւնով՝ Սասունն ու Վանը, Կապուտկոզն ու
Խոյալ քաղաք, Խլաթ կամ Պղնձէ-Քաղաք, Սա-
սուն կամ Մըսըր (Մուսուլ) ևն:

Ամիրոփելով ըսենք որ, Սանասարի հիմնա-
դրած Սասանց Տունը, իբր կռուող և հայրե-
նիք պաշտպանող քաջ ցեղ՝ պէտք է պահած
ըլլայ իր անունը մինչև այն օր՝ երբ բեմին վրայ
կ'երևի Մամիկոնեան տոհմը, ճենաց (Ջանկայ
ընկել) Մամիկոն իշխանէն սերած:

Մամիկոնեան ցեղին՝ անգամ մը տեղացի
բնիկ հանգամանքն ստանալէ ետք՝ ա՛լ Սասանց
Տան անունը կ'նսեմի, կ'նոյնանայ ապա Մամի-
կոնեան Տան հետ, և այս անգամ հանդէս
կուգան Մամիկոն ցեղին դիւցազնները՝ Դեվ անու-
նով Այդ՝ այլևս Քաջանց Տան (Քէճանց Ամիրի)
պատմութիւնն է: Եւ մեր հէքիաթներու մէջ,
շատ տեղ, կ'իշուին Քեհանց ամիրա, Քեհանց
տուն, Քեաչի (քաջք) ևն. յորջորջումները:

Դեվերու ցեղին պատմութիւնը՝ Քաջանց
Տան անունով ճանչցուած, իր մէջ կ'հիւսէ սա-
կայն ոչ միայն Մամիկոնեան նախարարական
տոհմին զրոյցները, այլ աւելի ընդարձակ սահ-
մանով՝ նոյն իսկ Հայ-Արշակունի հարստութեան
մեծ մասին անգիր աղաւաղ վէպը:

Պիտի յիշէի նաև որ՝ Սասանց Տան պատ-
մավէպին հետ զուգընթացաբար, կամ անկէ
անջատ՝ հէքիաթավէպերու մէջ, կ'յեղյեղուի
միշտ Չիւնաց կամ Չիւնաչիւնայ բազաւորութիւն,
որ նոյն է ճենացի Մամիկոնեաններուն ցեղին
հետ, ու հայրենիքին ալ գուցէ (Տեսնել «Յէրան-
Թիւրան» Ծնթ.՝ 372 և 478):

Ահա այսչափ՝ Սանասար-Քաղաքաւորի ծնունդ
տուած ցեղերուն և բնակած վայրի մասին:
Բայց յվշենք զեռ մէկ քանի ցուցմունքներ ալ
յաջորդ յօդուածաշարով մը:

Վան 2ԻԹՈՒՆԻ

ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ

(Նորունայութիւն և վերջ)

ՀԱՄԲՈՅՐ ԺԱՂԱՍԵՐԹԱՆՑ

Համբոյր մի լոկ, համբոյր անուշ,
Թո՛յլ տուր քաղեմ՝ շուրթէդ քընքուշ.
Ո՛հ, իմ ծարաւ շրթանց թո՛յլ տուր
Ըմպել սիրոյդ ըզկոյսն աղբիւր:

Գիտեմ, որ զայդ շընորհ անբաւ
Չես մահացուի տըւած բընաւ.
Գիտեմ որ կոյս են քո շըրթունք,
Եւ չէ՛ վայլած ոք զիւր բուրմունք:

Այլ և իմ սէր՝ անհամեմատ,
Քան զամենիցն է սիրահարտ.
Միթէ չէ՛ նա, ո՞ր գեղանի,
Մեծ այս շնորհին քո պրճանի:

Եթէ գոր ինչ զլանաս այլում,
Ժըխտես և ինձ ևս, ապաւնում՝
Ինչո՞վ պիտի յայտնես, ո՞վ կոյս,
Թէ քեզ հաճոյ են տրոփք ոգւոյս:

Այսպէս ես միշտ հեծեծէի,
Եւ զայդ շընորհ պաղատէի.
Այլ դու՛ անլուր միշտ թըւէիր,
Արցունքներուս անկարեկիր:

Եւ մինչ էի ես յուսաբեկ,
Յանկարծ յայգուն տեսայ երէկ
Որ ինձ մերձեալ քօղածածուկ՝
Եւ փարեցար յիս սիրանցուկ:

Եւ այլ յայլմէ, հրավառ ի գող,
Ի վեր առի ըզկոյս քո քօղ.
Ծարաւակեզ շրթունքս յեռանդ
Ընդ կոյս շըրթանցդ յօղեցան անդ 1):

Ի՛նչ ըզմայլմամբ լի էր համբոյր
Ձոր քաղեցի ես՝ վարթաբոյր
Շըրթունքներէդ քո սիրափայ,
Ո՞վ Ազինէդ իմ կուսանադ:

Երկնի հրեշտակն իսկ բոցահուր
Չունի շրթներ քո սիրատուր
Եւ ոչ գարնան այգ լուսաշող՝
Մարգարտափայլ քո չունի ցօղ:

Եւ երբ իմ սիրտ զըւարթախորհ
Կզգայ որ ե՛ս լոկ զայդ շընորհ
Վայելեցի քննէ, Ազի՛կ,
Մընչեմ «քան զիս ո՞վ կըջանիկ»:

1) Վարիանք. — Ջօղեցան, կնեցան:

Մեծ այդ շնորհին երախտապարտ,
Քեզ կ'ընծայեմ կեանքս իմ ցաւարտ.
Իմ հօւր շուրթներ պիտի պահեն
Ձերմ շրթունքիդ բոյր խընկեղէն:

Ա՛հ ի՛նչ անձառ են քաղցրութիւնք
Ձոր հաղորդեն քո վառ շրթունք,
Ար մի համբոյրդ ի հօւր աւիւն
Բորբոքեց զիմ սիրտ և արիւն:

Ինչ երկնազգիկ գաղանիք ունիս
Շրթանցըդ մէջ ըզմայլելիս.
Ար մի համբոյր քո սրբոտառուր
Ազդեց հոգեոյս կեանք բոցահօւր:

Ա՛հ, թոյլ տուր մերթ, կոյս իմ անուշ,
Առնուլ համբոյր շուրթէդ քընքուշ.
Տե՛ս ո՛րքան զիս կ'երջանկացնէ
Քո մի համբոյր, կոյս Ազինէ:

ՄԻԱՅՆՈՒԹԻՒՆ

Քենէ հեռի, մըռայլօրէն
Վ'անցնին իմ կեանք վշտօք անհուն,
Ինչպէս մըթին հովտաց մէջէն
Կը հոսի գետ, պըղտօ՛ր, ծըփուն:

Աչ սոխակին անդ դայլալիկ
Վ'ընէ զըւարթ նորա եզերս.
Եւ քաղցրաբոյր ոչ մի ծաղիկ
Ձիւր խընկաման ջընդէ յայերս:

Այսպէս և իմ ժամք և օրեր
Յանապատիս իմ մէջ՝ անկեանք,
Վ'անցնին տըխուր և սըգաստուեր,
Աւր չիք ձայնիդ հեշտ արձագանք:

Ձի ձայն քո քաղցր է ինձ յաւէտ
Քան բիւր թըռչնոց աւաջք քընքուշ.
Եւ շունչ ոգեոյդ քո կենսաւէտ
Քան խընկոց բոյրն է ինձ անուշ:

Ա՛հ, ես թըշուառ իմ, Ազինէ՛ս
Ձի ի քէն զուրկ, միայն, անյոյս,
Կը թափառիմ, հալիմ այնպէս
Ձերդ տունին յաւազ, անջուր, անլոյս:

ԱՂԲԻՐ ԿՈՒՍԻՆ

Կը տեսնէ՞ք մատաղ կոյսն որ սափօր առած յուս՝
Իբրև նոր Ռեբեկա, գէւք ծածկեալ ի սընդուս,
Կուգայ ջուր վեր բերել յաղբերէն պողպաջուն.
Եւայի դձուար է նէ, քան իւր մայրն ըզմայլուն,
Թէ հրեշտակ զը տարթուն:

Ճակատ իւր սըրբափայլ կը շողայ քօղին տակ.
Վարդք ցանուած են յայտեր, նըրբաւարտ է
Չայն իւր քաղցր է կարծես գոլ երկնից ար-
ձագանգ-
Իւ ի ձեւ՝ ամօթղած՝ ուր չըկայ բնաւ պըջրամբ,
Գ'ազդէ սո՛ւրբ պատկաւանք (1):

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷ Էջ ՄԸ 2)

ԳԻՐ ԱՄԵՆ ՑԵՂ ԴՈՆԻ (?) ԵՒ ՅԱԻԻ

Ա՛ն պողպատ դանակ մի, տեսունագրէ
Ի վրայ, և ասէ գաղօթս .

Ծառ մի կայր ի մէջ երկրի, որ ոչ ձեզ
ուներ և ո՛չ տերև և ո՛չ արմատ, արծիւ մի
նոտեալ էր ի վերայ նորա, որ ոչ գլուխ ուներ և
ոչ թև և ոչ ոտք: Հարցունք եղեն արծիւն այն
և ասեն՝ Ար նստեալ ես ի ծառդ որ ոչ ձեզ
ունի և ոչ տերև և ոչ արմատ: Ասէ արծիւն աշն
պիղծ. Երթամ նստիմ ի գլուխն մարդուն, զմիսն
ուտեմ և զըղեզն՝ ծծեմ: զաչից լուսն պակաս-
նեցնեմ: Լսեցին զայն հրեշտակք և հրեշտակա-
պետք, հրամայեցին և ասեն. Կապեմ զքեզ երեք
հարիւր վաթսունևհինգ սրբովք որ ոչ հրեշտակ
գիտեն ոչ հրեշտակապետք, բայց միայն Հայրն:
Եւ դարձեալ ասեն. Կապեմք զքեզ երեք հա-
րիւր վաթսունևհինգ սրբովքն որ կան ի սիրտ
արեգական, որ ոչ հրեշտակ գիտեն և ոչ հրեշ-
տակապետք, բայց միայն Հայրն: Եւ դարձեալ
ասեն. Կապեմք զքեզ երեք հարիւր վաթսունև-
հինգ սրբովքն որ կան ի մէջ ծովուն, որ ոչ
հրեշտակ գիտեն և ոչ հրեշտակապետք, բայց
միայն Հայրն: Եւ դարձեալ ասեն. Կապեմք
զքեզ ի քնարն Դաւթի, ի մատանին Սողոմոնի
ի տախտակն Մովսէսի, ի պատմուձան Ահարոնի,
ի դաստառակն Քրիստոսի. ի քաղցր կաթն
սուրբ Կուսին, ի չորեք բլեռն Քրիստոսի,
որ Տեառն արեամբն մկրտեալ էր. կապեմ
զքեզ կապանօքն Պետրոսի և Պաւղոսի, այլա-
կերպութեամբն Քրիստոսի, որ ի լերինն, երեք-

(1) Այսեղ ձեռագիրը կ'աւարտի. այս երթումսին վեր
ջին մասը կը պակսի :

2) Մեր հին ձեռագիրներուն մէջ կայարդական գրակա-
նութեան վերաբերող բազմաթիւ նիւթեր կան, որ դեռ ոչ
հրատարակուած են ոչ ուսումնասիրուած: Միելու համար
մասնագէտ-բանասէրները որ մեր հին մատենագրութեան այդ
նիւղը լուրջ ճննութեան ենթարկեն՝ կը հրատակեն այդ օտ-
րէն օտնեկան էջ մը:

սրբեան լուսովն որ երեւցաւ ի վերայ անմահ գագաթանն Քրիստոսի, չունիս իշխանութիւն որ աճիս և նիւթիս և զորանաս և խտանաս այլ չորանաս, չիք ես և ի չիք դառնաս, բանիւ սեռան մերոյ Յիսուսի Քրիստոսի զգիրս ես կարգամ, գեղն Յիսուս Քրիստոս լինի, ամէն: Կապեմ զքեզ ի քսանեչորս մարգարէքն, ի յերկոտասան առաքեալն, ի փառքն Ազամայ, ի վայելչութիւն գրախտին, յօգն որ հովանի եղև, ի բանն որ ասաց Քրիստոս ի խաչին՝ էլի էլի լամայ սաբաբթանի, կապեմ զքեզ ի Պետութիւնքն և իշխանութիւնքն և ի բարձրեալ քերովբէքն, կապեմ զքեզ ի խաչն Քրիստոսի, զի նա է լուս և լուսատու տիեզերաց. կապեմ զքեզ 366 ցաւ և գան և ախաժէտ որ ոչ այլ երեւիս թէ՛ գլխովար ես, թէ՛ գլխովեր ես, թէ՛ գնայուն ես, թէ՛ սողուն ես, ուտիչն ես, թէ՛ կերն ես, թէ՛ առիքէն ես, թէ՛ գետնաուիւծն ես, թէ՛ ազուեսակն ես, թէ՛ ծիրանուկն ես, թէ՛ խուլիկն ես, թէ՛ խլուրդն ես, թէ՛ աչքունքն ես, թէ՛ մազիկն ես, թէ՛ շուտիկն ես, թէ՛ զիպուկն ես, թէ՛ գորտիկն ես, թէ՛ սև բուշտն ես, թէ՛ խաղողիկն ես, թէ՛ խուժրան ես, թէ՛ խոցաուկն ես, թէ՛ ցաւն ես որ մարմնագոյն ես, չիք ես և ի չիք դառնաս. զգիրն ես կարգամ, գեղն Յիսուս Քրիստոս լինի, ամէն: Կապեմ զքեզ թէ՛ երկնային ես, թէ՛ երկրային ես, թէ՛ ի ծովէ ես, թէ՛ ի ցամաքէ ես, թէ՛ յարեւելից ես, թէ՛ յարեւմտից ես, թէ՛ ի հիւսիսոյ ես, թէ՛ ի հարաւոյ ես, թէ՛ դև ես, թէ՛ սատանայ ես, թէ՛ Բեղզերուղտն ես, թէ՛ յեղարն ես, թէ՛ Նոփիազն ես, թէ՛ ի գաւէդ ես, թէ՛ իշխան զիւացն ես, թէ՛ համրն ես, թէ՛ խուլն ես, թէ՛ զաչքն խաւարեցնես, թէ՛ զգլուխն ցաւեցնես, թէ՛ երընջկտալ տաս, թէ՛ զուժն տանիս, թէ՛ զգոյնն հատանես, թէ՛ ընդ այր և կին ատելութիւն արկանես, կապեմ զքեզ կենդանագործ նշանաւն և անմահական տնկովն, կապեմ զքեզ բանիւն Աստուծոյ որ ասաց Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան. կապեմ զքեզ իշխանութեամբ Հօր, տէրութեամբ Արդւոյ, զօրութեամբ Ս. Հոգւոյն. և առաքեսցէ Տէր զհրեշտակ խաղաղութեան որ եկեալ ածեն պարիսպ հրեղէն և պահեն զժառայս Աստուծոյ Գրիգորս և որդի իւր Աստուածատուրս, և իւր տան մեծի և փոքու 1):

Գ. ՓՐՕՏՖՖ-ԳԱՆՓԱՆԵԱՆ

(Երգահան-Երաժշտայեւ)



Սօրա Բանբորում (Schola Cantorum) երաժշտանոցին (որ բարձր երաժշտութեան ամենանուազ հիւրընկալ և ամենահպարտ տաճարներէն մին է) նուագասարահին մէջ, վերջերս տեղի ունեցաւ նուագահանգէս մը. տարօրինակ հայ բայց խիստ նշանակալից, և որ նուիրուած էր երգահան-երաժշտայեւ (compositeur de musique) Գրիգոր Փրօֆֆ-Գալֆանանի հեղինակութիւններուն:

Շատերը հոն եկած էին հետաքրքրութենէ մղուած, և այն հաւատարմ թէ Արեւելիան նուագահանդէս մակդիրը իրենց պիտի վերապահէր արարարիս համեմուած երաժշտութիւն մը, զգրգալից և տարաշխարհիկ շնկոյններով պաճուածեալ:

Սրահէն ներս մտնելուն պէս ամենքն ալ հասկցան իրենց սխալը. բեմի վրայ չկար ո՛ր և է արտաուոց նուագախումբ, ո՛չ թաւ-թաւ և ո՛չ ալ խաբչիկեան սրինգ, այլ միայն մեծ երգահանը և երգեցիկ խումբը՝ իր մեներգիչներով (solistes): Նմանօրինակ ժուժկալութիւն մը, ներկայ դարուս մէջ, կ'ապացուցանէր թէ Փրօֆֆ-Գալֆանան աւելի բարձր նպատակ ունէր քան զմեզ զուարճացնել թիթեղական հնչականութեանց՝ զիւրին գեղանկարովը, թէ իր նպատակն էր պնդել զպացուցներ արթնցնել, և թէ առ այս՝ պիտի գործածէր մարուր երաժշտութեան զէնքերը միայն:

Խմբերգը սկսելուն պէս՝ յայտնուեցաւ որ գուհիկ ականջները գգուելու մտահոգութիւնը չունէր բնաւ Փրօֆֆ-Գալֆանան՝ արեւելեան երաժշտութեան հասարակ տարագներու անընդհատ գործածութեամբ, որոնք Փարիզի մէջ շինուած և իրենց անապատի հոտ մը տալու համար ուղտի ազրին մէջ թաթխուած արարական գորգերու տպաւորութիւնը կը թողուն առ հասարակ:

Բոլոր բանիմաց արուեստագէտները անհամբեր կը սպասէին այս շատոնց ի վեր խոստացուած նուագահանգէսին: Այլևայլ միջավայրերու մէջ արդէն ոչ որ կ'անգիտանար Փրօֆֆ-Գալֆանանի արժէքը: Իր հեղինակած Հուրիյէք (Ազատութիւն) Օսմանեան քայլերգը զինքն արդէն արժանացուցած էր ամենալուրջ երաժիշտներու գնահատումին: Անցեալ տարի Օրքու-Քուրիթ թատրոնին մէջ, օսմանեան ռիսիօնին ի պատիւ տրուած ներկայացման առթիւ նուագուելով,

1) Բարուած՝ Գիւս Ա. - Գնճ. Աղանեանի պատկանող ձեռագրէ մը՝ որ կը պարունակէ կախարդական բանաձեւեր, եւ որուն տիպոսն է՝ «Այս է Կարիման, ի վայելումն ոսկեգործ (Ձեռ. սկայ գործ) Սեփաննուի»:

ոյս երգը մեծ սքանչացում՝ յառաջ բերաւ և ցնծութեան աղաղակներով ողջունուեցաւ՝ իբրև մին ծանօթ ամենագիղցիկ պզգային երգերէն:

Փրօֆֆ-Գալֆահանի երաժշտութեան մէջ, արդարև, կայ հոսանք մը, սարսուռ մը և քնարերգական համասիրում մը, որոնք իր իւրաքանչիւր գործին կը քանդակեն հսկունակաւ անձնաւորութեան մը կորովի զրոշմը: Ամենուրեք կը հանդիպէ տաք, գրաւիչ, կըքօտ և սրտայոյզ եղանակներու, որոնք սակայն միշտ կը պահեն ժուժկալ շրջագիծ (contour) մը: Իսկ ասոնց մէջ ուշագրաւ է մանաւանդ ներշնչումի տեսակն ու յատկութիւնը. — սազմական ու կրօնաշունչ միանգամայն — : Լսեցէք. օրինակի համար. Հռերիյէք պատուութեան քայլերգը. կը սկսիք իսկոյն երևակայիչ դիւցապնական թափօրը ծանրակուռ, դաժան և յամառ խաչակիրներու, որոնք կը յառաջանան՝ իրենց հաւատքին և իրեն յաղթանակին վրայ վստահ...
«Յնմա՛ եւ ուրախ լիք, ո՛վ Ասուածագեղ ասղկզառութեան»
Ձի համայն աշխարհ կը վերածնի, այսօր, եւ կը մեծնայ
Բո զնորհիւ...»

Մտիկ ըրէք Հայրենիքի երգը. ջերմեւանդ օրհներգութիւն մըն է որ կը սկսի նախ լին ու մահագոյժ ողբի նման, և յետոյ՝ անդի... գրելի կը բարձրանայ, կը լուսաւորուի հեազհետէ յուսով՝ պայթելու համար յանկարծ ինքուրթեան անհուն աղաղակով, կուռ փայլակնացայտ կոչի մը նման...
«... Գաղտնիք՝ Լացո ու կոծերդ,
Եղբորդ ախեմն արատուեով մի՛ պղծեր.
Վրէժին դանակն ա՛ն ու գրեա՛ սանձարձակ:
Ասուածն Հայոց պիտի լեզ սայ Յաղթանակ»:

Այս վերջին խաղերը գործմանակի են: Երգիչ Շահմուրատեանին յուզիչ ձայնովն արձակուած, արիւնի և արևու լայնատարած ցայտումի մը պէս կը տարալուծուին, նուիրական աստուածացումով մը կը լուսավառուին:
Մտիկ ըրէք նաև Կոռնիկը.
«Կոռնիկ, ուսի՞ կուգաս,
Ծառա՛յ եմ ձայնիդ...
Կոռնիկ, մեր աշխարհէն
Խաբրիկ մը չունի՞ս, եւն...»
Հոս չըկոյ ուրախութիւն, չըկոյ յուսոյ բոց. այլ բացարձակ անձկութիւն և տագնապ, ընդ մերթ հառաչելով, այլուրեք աղաղակելով: Ցաւի և դժբաղդութեան ողբերգ մըն է ասիկա, հալուած և թախանձագին փոքրիկ աղօթքի մը նման:

Բայց, ամենէն աւելի գեղեցիկ և խիստ նշանաւոր է իր Հայոց Պասարագը: Հոն կը հանդիպինք Փրօֆֆ-Գալֆահանի գլխաւոր յատկութիւններուն՝ հազար տեսակ կենդանի գոյներով ճոխացուած, եկեղեցւոյ մը երկնաբան պակիներու նման, և խիստ սրբացեալ ինչպէս պաշաճ է Աստուծոյ օրհներգութեանց: Այս գործը տեղ տեղ կը հասնի խիստ մեծ գեղեցկութիւն մը:

* * *

Բնակելով երկար տարիներէ ի վեր ի Փարիզ, և Ֆրանսացի ամենամեծ և ամենահմուտ երգահան-երաժշտապետներէն միոյն, Վէնսան տ՛լնատի խանդաղատալից հոգատարութեան ներքեւ ընտելանալով արուեստին բոլոր նրբութեանց, Փրօֆֆ-Գալֆահան կարող էր՝ հակառակ իր վարպետին՝ խրատներուն կերպ մը գտնել մեզի հրամցնելու համար, ինքն ալ իր կարգին, նոր երաժշտութեան նմուշներ Զեմ՝ ըսեր որ այդ բանին փորձութեանը ինքն ալ ենթարկուած է՝ ըլլայ բնաւ, բայց, այն ատեն, չարչարելով իր երևակայութիւնը, հասարակ բաներու յանգեցաւ...: Բարեբաղդաբար չըզիտի կարողանար մոլորուիլ չափազանց տոգորուած է ան իր հայրենի շունչովը. իր ցեղը չափազանց կ'երգէ իր հոգւոյն մէջ, իր ականջները չափազանց կը զոյնչեն իր հեռաւոր հայրենիքին հինաւուրց մեղեդիներով:

Փրօֆֆ-Գալֆահանի հոգին զգածուելու և թրթռալու համար պէտքը չ'ունի Փարիզեան սայտններու պատիկ զգայնականութիւններուն, պէտքը չ'ունի գործաւորութիւններու կամ մարքիզութիւններու սիրած բովանակներուն. այլ իրեն պէտք է ուժեղ տեսիլքն Արևելքի՝ իր Աստուծովը կամ իր Արարատովը, իր մեծ արևը, քանդուած հայ օձախին կարօտը, ջարդերու արհաւիրքին կամ ի տար աշխարհ պանդխտիէ առաջ փոխանակուած հրաժեշտի համայններուն յիշատակը: Այն ատեն է որ իր երաժշտութիւնը կ'օգտուուի, կ'ապրի, իր մէջը սիրտ մը կը բաբխէ և կ'արիւնի, մեղեդիները կը ժայթքեն և ի յայտ կը բերեն, իսկոյն, գերազանց յատկութիւններ զգայնութեան, և զգլխիչ հրապոյրի: Իր հոգին է որ կ'արտայայտէ ան, իր բնական լեզուն է որ կը խօսի, իր գիտցած կերպով, իր կրցած կերպով, չափազանց յուզուած՝ տարաշխարհիկ կամ նորաձևական փնտռումներ:

րու մէջ կորսուելու համար. թէպէտ հետաքրքրական է դիտել որ՝ ասոնց երկուքն ալ կը պարունակուին իր ազաղակին մէջ, երկուքն ալ մտերմօրէն կապուած իրարու:

Փրօֆֆ-Գալֆանի գործերուն իսկական արժէքը տուող և գանոնք մինչև իսկ թանկագին դարձնող կէտ մը կայ, որ՝ ժամանակակից խել մը երաժիշտներու գրուածքին նման՝ արևելեան, արևմտեան և հին ութեակներու (gammes) պարզ խառնուրդ մը ըլլալէ շատ հեռու է. անհերքելի է որ իրմով կ'ըսկսի համաձուլում (fusion) մը՝ մեր եւրոպական կատարելագործեալ, ձկուն և կնճուտ, իսկ Արևելքի պարզ, քիչ մը բարբարոս բայց այնքան արտայայտիչ կըրկնակի երաժշտութեանց միջև: Այս միայն ակրող է բացատրել երիտասարդ երգահան-երաժշտապետին գործերուն նոր հրապոյրը. և այս է պատճառը որ այդ գործերը մեզի կը թուին օտար և ընտանի միանգամայն: Այսպէս, կը կարծէք լսել մերթ Կլիւք Գերմանացի մեծ երաժշտապետին գործերը, մերթ Ժ.Չրդ դարու մեծ վարպետները և մերթ միջին դարու մեր ժողովրդական երգերը (mélodées), թէպէտ իր բոլոր գործերը միշտ կը պահպանեն եզակի և ուժեղ (corsé) անուշաբոյր մը: Ըստ իս, բառով մը կարելի է յատկանշել Փրօֆֆ-Գալֆանը. սկզբնական (primitif): Ամենափոքր մանրամասնութեանց մէջ կը գտնէք հոգեկան յուզում, ծայրայեղ պարզութիւն, գրութեան և հնարքներու միամտութիւն: Սկզբնական նաև այն պատճառաւ որ ինք կը հաստատուի (il s'affirme) իբր ստեղծողներէն մին արևելեան երաժշտութեան իսկական արուեստին, որ այս ալ շատ որոշ գոյութիւն մը ունեցած ըլլալ չը թուիր մինչև այսօր:

Արևելեան ժողովուրդները դեռ չեն ունեցած, արգարե, երգահան-երաժշտապետներու երկար շղթայ մը: Եւ այնպէս կը թուի թէ՛ մինչև այժմ՝ ժողովրդական երգերն էին միայն որ կը ծլէին ու կը փթթէին ազատօրէն, Արևելքի հողին վրայ, վայրի ծաղիկներու նման՝ թէպէտ խիստ սքանչելի: Այդ երգերը բերնէ բերան աւանդաբար կը սօրվըւէին, կ'աղաւղուէին և կը ձևափոխուէին՝ ցեղերու և անհատներու քմահաճոյքին համեմատ: Իսկ չափուած և ուսած: ու կարգի կանոնի բերուած նոր երաժշտութիւն մը չը կար: Փրօֆֆ-Գալֆանն,

յիրաւի, այս բոլոր երկիրներու երաժիշտներուն առաջիններէն է, որոնք գեղարուեստի գործ մը արտագրած և ազգային գործ մը իրականացուցած ըլլան, որ այս ալ թէպէտև դեռ բաւական դաժան է և քիչ մը տարրական, բայց յամենայն դէպս քաղցրալուր է և ինքնատիպ: Իրեն հետ կուգան նաև քանի մը ուրիշներ. բայց ինքն անոնցմէ է, որոնք ազատ թուիչքը կուտան պէտք եղած իմաստով, և որոնք՝ ամրակու տաղանդի մը ի սպաս՝ ունին նաև ներշնչուած հոգի մը:

Այս անձնաւորութեան աճումն և զարգացումը (développement) պիտի չմնայ երբէք անուշազարաւ. իր հայրենակիցներն արդէն կը գուշակեն որ պարտաւոր են զինքն յարգել և պատուել: Իսկ մենք, որ քիչ մը հրապուրուած վարմանքով մը կը հիւրնկալենք միշտ այնքան օտար արուեստներու այլևայլ արտայայտութիւնները, և որ դեռ վերջերս այնքան սիրեցիկք Բիմպի-Բօրսաքօֆներու, Չայքովսկիներու, Պօրօտիններու, Մուսօրկսկիներու վեհ և հպարտ ներգաշնակութիւնները, արդ, ի՞նչպէս պիտի կրնայինք անտարբեր մնալ նորածին երաժշտութեան մը նախակարագետ եղող մարդոց հետագնդած ճիգերուն հանդէպ: Յամենայն դէպս, շատ քիչ հեռատես պիտի ըլլայինք մենք ու մինչև իսկ շատ քիչ հետաքրքիր՝ եթէ ի նկատի չառնէինք Փրօֆֆ-Գալֆանի նման երգահան-երաժշտապետի մը արտագրած գործերը, երբ ինքն ի յայտ կուգայ այնքան նոր և այնքան առողջ կենսունակութեամբ (sève) մը հարուստ:

Թարգմ. ՀԱՆՐԻ ՖԵՍՏՈՒՐ
La Vie Française Յունիս-Յուլիս 1911
ՓԱՐԻՋ

ՍԵՌԱՄ ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Սրբանափառ Խաչին տակ,
Որուն թեքը արտմոլթիւն կը ծորեն
Աշխարհիս վրայ բովանդակ,
Ես պարտուած՝ արուեստիս դառըն սըրտէն
Կ'ողբամ՝ ձեր մահն, ո՞վ հեթանոս Աստուածներ:
Մեռան Խորհուրդն. և Բնութիւնն է արևունք
Օրէնքներու կարկինին սուր սըլաքով:
Չանձրոյթը մնաց պճնրուած փուշ պըսակով . . .
Մարդն է ինկած գարշապարին տակ հըսկայ
Խուլ Աստուծոյ մը հրեայ:

Դիսս, մեռար. մեռար դուն,
 Ո՛վ Ապոլոն, որուն կառքէն քառաձի
 Կուգար խրրխինչն Արևուն:
 Կայծակն անտէր՝ աստղերուն մէջ կը յածի
 Կոյր օձի պէս: Սիրամարգներ չեն քաշեր
 Հերայի սայլն՝ որ ունէր լոյս սարիքներ:
 Ո՛չ ալ կ'հոսին, իբրև սերմեր դեցական,
 Չկի անձրևն սակի, արիւնն Ուրանեան:
 Չեն արծարծեր ոտնաթուկերն Հերմէսին
 Աստղերը որք երկընթին:

Անտառին մէջ, Անահիտ,
 Ա՛լ չեմ լըսեր շանդ հայրեններն՝ ետևէն
 Ընտրած գէր երէիդ:
 Կապարձոյ հողին տակ կը փըտի. լիճերէն
 Ջուրն իր խըմել կու գայ եղնիկը անվախ:
 Չի պըսակուիր Պանը շոճով ամէն ցախ
 Անոր շունչով նորէն առոյգ չի ծաղկիր:
 Դափ չէք զարներ, Այծեմարդեր բարեկիր:
 Լոկ կը տեսնեմ՝ Աւանդութիւնն՝ որ կու լայ
 Նըստած կոճղի մը վըրայ:

Յաւերժարներ, մեռաք դուք.
 Կը խածիրձեն փըրփրուն գետերը ցաւէն
 Իրենց ափերն յեղչեղով:
 Նայուհիներ, եղէպներուն ընդմէջէն
 Չէք երգեր ա՛լ՝ երբ որ ցաթէ լուսնկան.
 Կանանչ յօտեր այժմ՝ կ'ըլլան ձեզ պատան:
 Լուսադմայիկի աղբիւրին մէջ չեմ տեսներ
 Բիբերուդ կայծն, անբախտ Նարգիս: Տատրակներ
 Երբ գառին մէջ կու գան լըլալ կըտույնին՝
 Դօրօշներէն կը խրոչին:

Քեզմէ, ո՛վ վեհ Պոսիդոն,
 Ծոփն է թափուր: Անտառներէն բուստերու
 Չի խոյանար բարձրաջօն
 Քառանքժոյզը փըրփրագեղ. ո՛չ ալ քու
 Երեքարձէնը կ'առխըթէ զըզըրդամբ:
 Նըւիրական զեպիինին նուան ապըստամբ
 Մեռաւ Սիրինը ժայռին տակ Սիկիլեան.
 Կանցնի նաւազն անկէ առանց դիւթութեան:
 Չ'ըլլար փըրփուրն Աստղիկ, ո՛չ ալ կոնքը՝ կուր.
 Ծոփն, Աստուածներ, ծոփն է տխուր:

Տանս ակութէն, Թերափներ,
 Ո՛ւր հեռացաք, ո՛ր շերմեռանդ սըրբուհին
 Ձեզ իր խոչոփն է փշրեր:
 Ձեր մէջ պապերս պապերն իրենց դրօշեցին՝
 Ընծայելով ամէն օր աղ ու նեկտար:
 Չըկաս, Ե՛րոս. պիտի քոչրս իմ սիրահար
 Որո՛ւ ձօնէ գահամուկներն իր ուխտին:
 Չըկայ կ'՝ գուռը պահպանող Շան անդրին . . .

Միայն մնարէս կախուեր է խաչ մ'յաղթական՝
 Ու կայ լոկ փառքը Մահուան:

Եւ այժմ՝ այդ Խաչին տակ,
 Որուն թևերը արամութիւն կը ծորեն
 Աշխարհիս վրայ բովանդակ,
 Ես պարտւած՝ արուեստիս դաւըն սըրտէն
 Կ'ողբամ՝ ձեր մահն, ո՛վ հեթանոս Աստուածներ:
 Տեսէք, բոլոր մեր անտառներն ու ծովեր,
 Աղբերակներն ու երկրքները խաղաղ
 Ամայացան ու տաղակացան: Այժմ՝, աւա՛ղ,
 Մարդն է ինկած գարշապարին տակ հըսկայ
 Խուլ Աստուծոյ մը հըրեայ:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Ք Ր Ո Ն Ի Կ

(ՌԻՐՈՒԱԳԾԱՅԻՆ ՆՕԹԵՐ)

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերու-
 թեան երեսնամեայ գործունէութեան յօբելյ-
 անը պիտի տօնուի ի մօտոյ Թիֆլիզի մէջ: Այդ
 ընկերութիւնը ուսաստանոց հիմնած ամենէն
 հօր, տարածուն և բազմարդիւն կազմակեր-
 պութիւնն է, անոնց մէկ փոքրիկ «Ալիանս
 Իսրայէլիթ»ը. ունեցած է թէ՛ բարեգործական
 թէ՛ «կուլտուրական» բազմաձեւ պատկառելի
 գործունէութիւն: Յանկալի էր որ թըքաճայք
 մասնակցէին այդ յօբելյանին, նախ որովհետև
 կը տօնուի իր ամուր կազմակերպութեամբ և
 բարւոք գործունէութեամբ ամբողջ Հայութեան
 պատիւ բերող ազգօգուտ հոյակապ ընկերու-
 թեան մը երեսնամակը, երկրորդ՝ որովհետև
 այդ ընկերութիւնը Թըքաճայոց դժբաղդ օրե-
 րուն մէջ՝ յաճախ օգնութեան ձեռք կարկառած
 է Կովկաս ապաստանող գաղթականներուն կամ
 երկիր դառնալ ուզող թըքաճայ փախստական-
 երուն: Փափաքելի էր մանաւանդ որ թըքաճայ
 բոլոր կազմակերպութեանց հետ, մասնաւորա-
 պէս Միացեալը և Եգիպտոսի Բարեգործականը,
 իբր եղբայր մարմիններ, այս առթիւ սիրալիր
 ողջոյն մ'ուղղէին Կովկասի Հայկական մեծ ըն-
 կերութեան: Իսկ Եգիպտոսի Բարեգործականէն
 կը ինդրեմ՝ ոչ միայն հանդիսաւորապէս մաս-
 նակցիլ այդ յօբելյանին, այլ և՛ այս առթիւ՝
 ուշագրութեամբ ուսումնասիրել Կովկասի Հայոց

Բարեգործականին ծրագիրն ու գործունէութիւնը, որուն մէջ շահեկան թելադրութիւններ և երկարամեայ փորձառութեան մը դասերը կարող է գտնել իր իսկ նոյնատեսակ գործունէութեան համար: Եւ ինչո՞ւ այդ յոբելանէն սկսեալ՝ Կովկասի Բարեգործականը, մեր Եգիպտոսի Բարեգործականը և Միացեալը իրարու հետ մշտական յարաբերութեան մէջ չմտնեն, մեծ աւիթներու մէջ խորհրդակցելու և գործակցելու համար: Այս առաջարկին վրայ ուշադրութիւնը կը հրաւիրեմ վերոյիշեալ երեք ընկերութեանց, և մասնաւորապէս Կովկասի Հայոց Բարեգործականին, որուն գլուխը կը գտնուին Սամսոն Յարութիւնեանի պէս կարող, եռանդուն և լուրջ գործիչներ և իշխանուհի Թումանեանի նման ազգասէր գործչուհի մտաւոր պար համարուելու արժանի Հայուհիներ:

* * *

Արիշ յորելեան մը որ մտաւրուտ կը թուի, Յովհաննէս Յովհաննէսեան բանաստեղծին է: Իր հիացողներէն ոմանք այդ առաջարկը հրապարակ դրած են արդէն՝ կովկասեան թերթերէն ոմանց մէջ: Իբրև վաղեմի յարգող մը ուսուցչայ վեհօգի քնարերգակին փափուկ և ազնիւ տաղանդին, ջերմօրէն կը ձայնակցիմ այդ առաջարկն ընող մտաւորականներուն: Յովհաննէսեան ուսուցչայոց բանաստեղծութեան մէջ՝ «տենտեցիօզ» ուղղութեան միահեծան տիրապետած օրերուն իսկ՝ ազատ ու զուտ-գեղասիրական քերթութեան առաջին նմոյշները տուած է. իր քերթուածները, մաքուր հայերէնով, ճաշակաւոր ու գողտր ոճով, քնքուշ ու քաղցր ներշնչմամբ, զինքը կը կացուցանեն հայկական քնարին վարպետներէն մին: Աւ մարդը որ կայ բանաստեղծին մէջ՝ գրական ճոխ զարգացմամբ նրբացած, մաքուր ու ազնիւ նկարագրով մը օժտուած, յարգանք և համակրութիւն միայն ներշնչած է զինքը բոլոր ճանչցողներուն:

Թրքահայ հասարակութիւնը, որ կը ծանշնայ և կը սիրէ Յովհաննիսեանը՝ այն գեղեցիկ յօդուածէն ի վեր որով Բաշայեան ատենով յայտնեց զայն մեզի, անշուշտ պիտի անբաժին չմնայ ուսուցչայ տաղանդաւոր քերթողին ի պատիւ ըլլալիք հանդիսաւորութեանց մէջ:

* * *

Ռուսահայ ուսանող մը բերաւ թարգմանեց ինձ Պ. Սպանդար Սպանդարեանի պահանջմամբ կազմուած պատուոյ ատենին վճիռը, զոր հրատարակած է Փարիզի ռուսերէն թերթ մը: Նոյնին թարգմանութիւնը տեսայ նաեւ այս օրերս Մշակին մէջ: Այդ վճիռը անվերապահօրէն նպաստաւոր է Պ. Սպանդարեանին, և անոր վերագրուած ծանր յանցանքէն զայն բացարձակօրէն անպարտ կը հռչակէ: Պ. Սպանդարեանի այս կամ այն կարծիքին մարդ կարող է համամիտ ըլլալ կամ ոչ. անհերքելի է որ ան հայ հրապարակագրութեան ամենէն հեղինակաւոր ու տաղանդաւոր ղէմքերէն մին է եղած. ամէն Հայ ուրախ պէտք է ըլլայ որ այդպիսի նշանաւոր և ներկայացուցչական Հայու մը վերագրուած լրտեսական գործունէութիւնը վերջնապէս ու վճռապէս կը հերքուի ամբաստանողներուն իսկ ձեռով կազմուած զուտ յեղափոխական դատարանի մը կողմէ: Անշուշտ քիչ օրէն պիտի կարգանք Դրօշակի մէջ ևս այդ վճիռն թարգմանութիւնը: Աւ ցաւալի կը գտնեմ որ այդ վճիռը ամենէն առաջ հրատարակողը Դրօշակը ինքն իսկ եղած չըլլայ: Ես կը հաւատամ որ Դաշնակցութիւնը, — ինչպէս պատուոյ ատենը իր վճիռն մէջ կ'ըսէ, — իրեն հաղորդուած տեղեկութեանց վրայ հիմնուելով՝ անկեղծօրէն համոզուած էր Պ. Սպանդարեանի յանցաւորութեան՝ երբ հրատարակեց անոր ղէմ իր ամբաստանիչ յօդուածը. բայց իր սխալն այն է եղած որ առանց աւելի մանրամասն քննութեան ենթարկելու՝ իսկոյն հրատարակած է այդ ամբաստանութիւնը. իսկ այժմ դարձեալ սխալ մըն է որ կը գործէ՝ ամբաստանութեան անհիմ ըլլալն ասպացուցուելէն յետոյ՝ կրք չի փութար ինքն իսկ առաջինն ըլլալ իր հասուցած չարիքը դարմանելու: Աւ կը մաղթեմ որ ու և է Հայ լրտես կամ մատնիչ ընդունելու մասին ցոյց տրուած հիւանդոտ փութկոտութիւնը որ մեր մէջ յաճախ կը յայտնուի, այս տխուր պատմութեան ազդեցութեամբ՝ եթէ բոլորովին ալ չփարատի մեր մէջէն, գոնէ մեղմանայ.

Ար շնորհաւորեմ Պ. Սպանդարեանը այն հօգեկան արիութեան հոյակապ ապացոյցին համար զոր տուաւ, իր պատուոյն պաշտպանութեան համար՝ միայնակ, անօգնական, ու լքուած՝ ամիսներ ամբողջ անվհատ մաքառելով: Իր «բանակը», — Կովկասի Հայութեան ամենահարուստ

մասը, — որ զինքը թողուց այդպէս անպաշտպան ու թշուառ՝ այդպիսի պայքարի մը մէջ, ամենատխուր տեսարաններէն մին ի յայտ բերաւ զոր Հայութիւնը երբեք պարզած ըլլայ:

* * *

Ուրիշ տխուր, տեսարան մը՝ Օրմանեան սրբապանի դատին պատմութիւնն է: Այդ դատը դեռ չէ վերջացած: Ու այժմ՝ լոյսի պէս յայտնի է թէ ինչո՞ւ չի վերջանար այդ դատը: մեր դատաւորներուն խիղճը չի ներեր որ յանցաւոր հանէին մարդ մը որուն անպարտ ըլլալուն համոզուած են, բայց չեն ալ ուզեր ամբաստանութեանց բռնէն թեթեցնել զայն, վախնալով որ ասիկա չնպաստէ ակո՞ր հայրապետ ընտրուելուն... Կախ իրենց այդ հաշիւը սխալ է, որովհետեւ քանի իրենք կ'ուշացնեն դատին լուծումը, այնքան Օրմանեան սրբապանի ուստի հայ բարեկամները աւելի ջերմ պաշտպան կը հանդիսանան անոր քանտիտայութեան. բայց մանաւանդ այդ գործելու եղանակը անընդունելի է, որովհետեւ արդարութեան սկզբունքին իսկ հակառակ է. արդարութեան գործ մը պէտք է կատարուի՝ միմիայն արդարութիւնն ի նկատի ունենալով, առանց քաղաքական ու է նկատումներէ ազդուելու: Բազդատեցէք մեր հ ղատաւորները Պ. Սպանդարեանի դատը տեսնելու կոչուած եւրոպացի դատաւորներուն հետ այս վերջինները յեղափոխականներ են, շատ աւելի մօտիկ Դրօշակի խմբագրութեան քան Պ Սպանդարեանին. իրենց համար ակործելի չէր Դրօշակի ամբաստանութիւնը անհիմ հռչակել՝ բայց մարդիկը արդարութեան ինչ ըլլալը գիտին, 3-4 ամէն վերջացուցին գործը, և բացարձակ յստակութեամբ, խղճմտութեամբ և արագութեամբ վճիռնին արձակեցին, առանց ու է կողմնակի նկատումներէ ազդուելու: Առաջին անգամ որ առիթը ներկայացաւ հայ ժողովրդին որ ուրիշներէն արդարութիւն պահանջելէ յետոյ, ինքն իսկ դատաւորի դեր կատարէ, այս ի՞նչ խղճալի ապիկարութիւն մըն է որ ցոյց կուտայ... Ամօ՞թ մեզի:

* * *

Բաւական տխուր տեսարան մըն ալ կովկասեան մամուլն է որ կ'ընծայէ այս վերջերս կաթողիկոսական ընտրութեան առթիւ: Ճիշդ այն տեսա-

րանը զոր հայկական խնդրոյն ամենէն տաք օրերուն՝ կը ներկայացնէր մեր արտասահմանի մամուլը: Իւրաքանչիւր գործիչ կամ հրապարակագիր իր գիմացինը աւագակ, հրէշ, մատնիչ կամ մարդասպան կը համարի և զայդ մեծածայն կ'աղաղակէ հայկական քֆրաբանութեան ճոխ բառամթերքն ամբողջապէս ի կիր արկանելով: Թովիքն այն է որ ամենքն ալ լաւ հայ և լաւ մարդիկ են, սո՞ւ մը գողնալու և հաւ մը մորթելու անկարող, այո՛, ամենքն ալ, համոզուած եմ. բայց ամենքն ալ բռնուած են այն «կրքոտութեան» հիւանդութենէն զոր լէօ մատնանիչ կ'ընէր գեղեցիկ յօդուածի մը մէջ 5-6 ամիս առաջ մասնաւորապէս իբր ուստի հայ գործիչներու ախտ, թէպէտ բոլոր Հայոց ախտն է, այդ ախտը զոր ես «հաւաքական նէօրասութիւնի» անուանած եմ, տեսակ մը ջղագարութիւն զոր կ'երեւայ թէ դարաւոր աղէտներն ու հալածանքները կազմած են մեր մէջ, և որով անընդհատ զիրար և ինքզինքնիս կը հալածենք՝ նոյն իսկ երբ հարկ չկայ: Այդ բորբոքեալ ուղեղներով եթէ պատգամաւորները պիտի հաւաքուին Էջմիածին, կը վախնամ որ ընտրական ժողովները գայթակղուից տեսարաններու չյանգին: Մաղթենք որ Ս. Հովհիսիմէի քնքոյշ, շնորհալի, և արեւմտեան — այսինքն քաղաքավար — ոգին այդ ժողովներու միջոցին գայ իջնէ սրահին մէջ և ուղեղներուն եռացման վրայ ցօղէ իր խաղաղիչ դիւթանքը...

Իսկ տեսարանը զոր թրքահայք կը պարզեն կաթողիկոսական ընտրութեան առթիւ՝ նոյնքան բայց տարբեր կերպով տխուր է: Ռուսահայք կը քֆրեն, բայց գէթ կենդանութիւն ցոյց կուտան, գործին կարեօրութիւնն ըմբռնելով կ'ապրին ներկայ վայրկեանին տենդը, իսկ թրքահայք կը փայլին իրենց կատարեալ լիակածութեամբ և շուարածութեամբ: Ընտրութեան ամիս մը մնացած է, և թրքահայ թեմերէն կարծեմ քառասունը գեռ չեն իսկ ընտրած իրենց պատգամաւորը... ու թրքահայ թեմերուն մեծագոյն մասը նշանակած են կովկասի մէջ ազգային մը՝ փոխանակ իրենց մէջէն մէկը շրկելու: Ի՞նչ անտարբերութիւն, ի՞նչ սատկածութիւն: Կ'առարկեն թէ ձըմբան մէջտեղը դժուար է եղեր մինչև Էջմիածին երթալ... արդեօք, տէ՛ր Աստուած, կոտորածներու մէջ բոլոր տղամարդիկը մեռան և պառոււնները միայն մնացին... Ի՞նչ է սիրտ

ունեցող մարդու մը համար՝ մինչև Էջմիածին ուղևորելու նեղութիւնը՝ բաղդատմամբ ազգասիրական «գոհունակութեան» զոր այդպիսի կարևոր խնդրոյ մը լուծման անձնապէս մասնակցելը և այդ առթիւ Էջմիածինը՝ մեր գերագոյն սրբավայրը, մեր պատմական ու հոգեկան մայրաքաղաքը տեսնելը կը պատճառէ : Վառարկին նաև թէ պատգամաւորին ճամբու ծախքը գտնելու միջոց չունին . ի՞նչ պարագ խօսք . որքան ալ աղքատ ըլլայ ամբողջ թրքահայ թեմ մը, շատ լաւ կարող է պատգամաւորի մը ուղևորութեան համար հարկ եղած 30-35 սկիին ճարել . կանխ և որ կը պակսի : Գոնէ եթէ իրենց իբրև պատգամաւոր ուսուցչայ մը ընտրելը կատարուէր լուրջ, գիտակից կերպով . . . այդպէս ալ չէ . երբ այսինչ թեմը կը նշանակէ Պ. Յովհաննէս Յովհաննիսիանը կամ Պ. Սամսոն Յարութիւնեանցը, կամ չէ ասոնց նման քանի մը անձեր, ըսելիք չունիմ . ատոնք հանրածանօթ անձնաւորութիւններ են, իրենց հմտութեամբ, լրջութեամբ և ազգասիրութեամբ յայտնի բայց մեծ մասամբ թրքահայ թեմերը նշանակած են պատգամաւոր՝ ոչխարօրէն հետեւելով պատրիարքական տեղապահ Մանկունի սրբազանի տուած ցուցմունքին, ըստ կաթողիկոսական տեղապահ Սուրէնեանց արքեպիսկոպոսի ուղարկած ցուցակին . պատգամաւոր նշանակած են անձեր որ աննշան են, որոնց մասին իրենք՝ ընտրողները՝ որոշ գաղափար չունին . Սուրէնեանց և Մանկունի եպիսկոպոսներուն իրենց ունեցած պաշտօնական դիրքը չարաչար գործածելով ընտրութեանց մէջ այսպիսի անհարկի և հակասահմանադրական միջամտութիւն մ'ունենալին մեծապէս դատապարտելի կը գտնեմ : Միևնոյն ատեն, անշուշտ վերջին ծայր նեղացուցիչ գտայ ուսու կառավարութեան հուսկ պահուն հանած խնդիրը — թէ թեմականներու մէջէն ընտրուելու պատգամաւորները : Իսկապէս, ուսու կառավարութեան այդ առաջարկը տրամաբանական է, և մեզ համար օգտաբեր . բայց որովհետև պաշտօնիսի քմահաճ փոփոխութիւն մը պարտադիր ընել պիտի նշանակէր՝ առանց հայ եկեղեցոյ հետ կանխաւ համաձայնութեան, և որովհետև շատ ուշ հասնելով՝ կրնար շատ մը թրքահայ թեմեր ձայնէ բողբոջին զրկել, բա-

ցարձակապէս հասկանալի է յուզումը զոր այդ իրողութիւնը յառաջ բերաւ թրքահայոց մէջ . ուսու կառավարութիւնը, փութաց գոհացում տալ Էջմիածնայ Սինոդին և Պոլսոյ պատրիարքարանին դիմումներուն, և բոլոր պատգամաւորները պիտի կրնան մասնակցիլ ընտրութեան, Միայն թէ, լաւ կ'ըլլար որ յառաջիկային՝ Հայութիւնը ինքն իսկ ինքնաբերաբար՝ իր շահուն համար վարուէր այնպէս ինչպէս առաջարկեց ուսու կառավարութիւնը, այսինքն իւրաքանչիւր թեմ իր մէջէն ուղարկէր իր պատգամաւորը (բաց ի հազուադէպ առհասարակ պարագաներէ ուր միշտ իրաւունքը պէտք է պահել բացառապէս ուրիշ տեղէ Հայ մը, հանրածանօթ անձնաւորութիւն մը, իբր պատգամաւոր ընտրելու :

Ու հիմա անգամ մը ևս մեր հոգին ամբարունանք դէպ ի Ս. Հռիփսիմեայ սպիտակ ուրուականը, և աղօթք մը ևս ընենք իրեն . աղաչենք որ ոչ միայն քաղաքավարութեան գեպիւն մը փչել հաճի ընտրողական ժողովոյն անդամներուն վրայ, այլ և շունչ մը ձգմարիտ ազգասիրութեան, որպէս զի այս անգամուան իսկապէս քառասային պայմաններով կատարուող ընտրութենէն կարենայ ծագիլ մեր խեղճ ժողովրդին համար այն բոլոր բարիքը որ հնարաւոր է . աղաչենք իրեն որ հրաշք մը գործէ, որպէս զի մեր նոր հայրապետը չըլլայ ցուցակածին էնթրիկան մը, այլ թէ նոյն իսկ ցուցակին շնորհիւ պատգամաւորութեան կոչուող անձեր ընտրութեան շահուն խորհին, ոչ թէ ցուցակին, ո՛չ թէ զայն կազմող ընտրելիին, այլ Ազգին շահուն միայն, և ըստ այնմ քուէ տան, և մենք ունենանք այն խոհականօրէն ազատամիտ, առանց ամբոխամոլութեան ժողովրդասէր, առանց քապոթենութեան և տառամոլութեան՝ սահմանադրական, մաքրահոգի, անշահախնդիր և ազնիւ հայրապետը որուն պէտք ունին Էջմիածինն ու Հայութիւնը :

Ա. 20 ՊԱՆԵԱՆ

Le Gérant : FRÉDÉRIC MACLER.
Impr. Ch. NERCÈS, 328, Rue St-Jacques, PARIS.

**Ա. ԶՊՊԱՆԵԱՆԻ
ՀՐԱՏՍՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

	Գին՝	Ցրանք՝
Les massacres d'Arménie, préface de G. Clémenceau.	1	
L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient ; introduction d'Anatole France.	1	
Zeitoun, depuis les origines jusqu'à l'insurrection de 1895, par Aghassi ; traduction française ; préface de Victor Bérard.	—	
Նահապետ Գուշակի դիւանը, (քննական ուսումնասիրութեամբ ծը հրատարակուած)	2	
Poèmes arméniens anciens et modernes, traduction française, précédée d'une étude sur la poésie et l'art arméniens par Gabriel Mourey.	1	
Chants populaires arméniens, traduction française avec une introduction et des notes ; préface de Paul Adam. (պատկուած՝ Յրանասական Ակադեմիայէն)	3,50	
Մկրտիչ Պեօկրաբեանի բերուածներն ու նաւերը, (ճանօթագրութիւններով հրատարակուած)	2	
Les Trouvères arméniens, traduction française, avec une introduction et des notes.	3,50	
Մկրտիչ Պեօկրաբեանի կեանքն ու գործը, քննական ուսումնասիրութիւն	5	
Քերթուածներ.	3	
Նազաօ Յովնաթան առուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը (26 նկարներով զարդարուած) :	3	

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Georges Brésol

LES TURCS ONT PASSÉ LA...

Փաստալից ստուար կարեւոր հատոր մը :
La Vérité sur les massacres d'Adana
en 1909

en vente chez l'auteur, 66 Bd. Ornano, Paris
Թուրքիոյ համար գիմնել Պ. Բ. Ազնաուրի,
22-24 Հափուզլու խան, Կ. Պոլիս, 5 ֆր. 75ի
մանտա-փօսթով մը :

Գրքին վաճառումէն գոյանալիք զուտ հասոյթը յատկացուած է Կիլիկիան Որբախնամին

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ ԵՆ ԻՐ ԳՈՐԾԸ

Կրական կոչուէք իր յորիւանին առթիւ
(Տիկին Զապէլ Եսայան, Անտոնեան Արամ,
Զօհրապ Կրիգոր, Կամսարական Տիգրան, Կիւրճեան Միքայէլ, Հրանտ, Մալէգեան Վտիան,
Յարութիւնեան Արտաշէս, Չիֆթէ-Սարաֆ,
Զրաքեան Տիրան, Զօպանեան Արշակ, Պարթեւեան Սուրէն, Սեթեան Յովհաննէս, Սրմաքէշխանլեան Երուանդ, Օսեան Երուանդ, Ֆընտաքլեան Գառնիկ) :

Գին 15 ղրշ. 1 ր. 50 կ.

Դիմել՝ Librairie B. Balentz

Rue Tchakmakdjilar. Constantinople

Լոյս տեսաւ

ՐԱՅՅԻ
Ս Ա Լ Բ Ի

Ազգային վիպասանութիւն պարսկահայոց
կեանքից, Հատոր առաջին

Գին՝ ութը շիլին

Դիմել՝ Madame Raffi. 32 Richmond gardens
Shepherd's Bush. London, w.

ՀՈՄԵՐԻ ԻԼԻՍԿԱՆ

Թարգմ. քնազրէն, Հ. Արսէն Ղազիկեան

Ս. Ղազար, Վենետիկ

Գին՝ 5 ֆրանք

Վրբանես Փափագեան

ԶՐՈՅՑՆԵՐ

Կը պարունակէ տաղանջաւոր ողբասան,
գրագէտին լաւագոյն պատմութիւններէն հաւաքած ու մը :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱՌՉԵՌՆ ԲԱՌԵՐԱՆ
ՅՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

Յօրինեց

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

Գին 7½ ֆրանք

Դիմել Պալկնց գրատուն, Պոլիս :



ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՆԵՐՐ

Նիւ-Նոր		Խմբագրութիւն «Արմէնիա»
Սենթրըլ Յօլս	Պարոն	Սահակ Ծառուկեան
Ազիսանդրիա	»	Յովհաննէս Գաբանձեան
Գահիրէ	»	Արմենակ Ատիշեան
Կ. Պոլիս		Պալենց գրատուն
»		Արծիւ գրատուն
Ադրիանուպոլիս	»	Տիգրան Մարտիրոսեան
Իզմիթ	»	Դաւիթ Պօղոսեան
Իզմիր	»	Սեդրաք Թօքաձեան
Պարսիկակ	»	Մելքոն Յովսէփեան
Քոնսթ	»	Աւետիս Հայկազեան
Նիսար	»	Պետրոս Տրապիզոնցի
Սամսոն	»	Յարութիւն Յ. Տիվանեան, «Արարատեան» գրատուն
Անաթիա	»	Սենեքերիմ Բէկապօճեան
Մարգուան	»	Յակոբ Պապասինեան
Կեսարիա	»	Գէորգ Ճամձեան
Բաքերդ	»	Զարէոս Այվազեան
Կարին	»	Միսաք Կոլոթեան
Երզնկա	»	Սեդրաք Գրիգորեան
Շապին-Գարահիսար	»	Խորէն Սէրճէնեան
Խարբերդ	»	Գարեգին Կոստանեան
Կիւրին	»	Սարգիս Չիլինկիրեան
Անանա	»	Միհրան Բէշիշեան
»	»	Դաւիթ Խաչիկեան
Մերսին	»	Յովհաննէս Փորսուքեան
Ուրժա	Գեր. Արտաւազդ Ծ. Վ. Գալէնտերեան	
Տօրք-Յօլ	Պ. Միհրան Տէր-Մելքոնեան	
Հալէպ	» Վահան Պասթաձեան	
Մուշ	» Համադասպ Տէր-Յովհաննէսեան	
Վան	» Տիգրան Չիթուշի	
Սեբասիա	» Վահան Մոսկոֆեան	
Ռուսնուզ	» Գալանիկ Մազմանեան	
Ֆիլիպի	» Թադեոս Հինգլեան	

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՆԱՀԻՏը կը հրատարակուի երկու ամիսն անգամ մը :

Բաժանորդագրինն է՝ 10 ֆրանկ (ֆրանսա), 12 ֆրանկ (օտար երկիրներ), 2 ռուբլ (Ամերիկա), 5 ռուբլի (Ռուսիա):

Վեցամսեայ՝ 5 ֆրանկ (ֆրանսա), 6 ֆրանկ (օտար երկիրներ), 1 ռուբլ (Ամերիկա), 3 ռուբլի (Ռուսիա):

Յօդուած եւ բաժանորդագրին զրկել հետեւեալ հասցէին .

A. TCHOBANIAN

17. Rue La Bruyère. Paris.